«ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 2, Մայիս, 2005



ՀԱՄԱԽՄԲՈՒՄ՝ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ
ԱՆԱՌԱՐԿԵԼԻ ՀԱՐԳԱՆՔ՝ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ
ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԿԱՄՔ՝ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ցիծեռնակաբերդ. 24 ապրիլ 2005թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մայիսյան հաղթանակների խորհուրդը	էջ 1	
Արցախյան տասնյոթամյա ազատամարտին	էջ 2	**Հայկ Դեմոյան**
Հայոց քաղաքակրթական առաքելության պատմությունից	էջ 3	**Թամարա Վարդանյան**
Հեղափոխական տենդ	էջ 4	**Սուրեն Մանուկյան**
Սահմանադրական բարեփոխումների մտահոգությամբ	էջ 5	
Առաջ՝ դեպի հաղթանակ	էջ 8	**Լիլիթ Հարությունյան**
Հանուն հայրենիքի՝ պատրաստ եմ ամեն ինչի	էջ 11	**Մարինե Մամյան**
Սարդարապատի թանգարանը ազգային մշակույթի գանձարան	էջ 13	**Սվետլանա Պողոսյան**
Հայերի ցեղասպանությունը և Գերմանիայի ներկայիս դիրքորոշումը	էջ 14	**Ժիրայր Քոչարյան**
Դատական հայց Գերմանիայում	էջ 16	
Նշվեց Պոնտոսի հույների ցեղասպանության 83-րդ տարելիցը	էջ 17	
Հայաստանի աշխարհաքաղաքական մեկուսացում Ջավախքի միջոցով	էջ 18	**Արշակ Գաբրիելյան**
1600-ամյա գրերը 1600 մետր բարձրության վրա	էջ 20	**Լիլիթ Հարությունյան**
Ղարաբաղյան պատերազմի արտացոլումը (1988-1994թթ.) երաժշտության մեջ	էջ 21	**Թամար Հովհաննիսյան**
Հայրենիքը սկսվում է Ցիծեռնավանքից ու Վարագասարից	էջ 22	**Զոհրաբ Լոքոյան**
«Ինչ- որ բան տալ ապրածդ օրվան ու ինչ-որ բան վերցնել»	էջ 24	**Լիլիթ**
Սուրբ Հռիփսիմե եկեղեցի	էջ 25	**Գայանե Հովսեփյան**
Հովհան Մանդակունի	էջ 26	**Աշխեն Գրիգորյան**
Ուխտագնացութիւն դէպի Ջաւախք	էջ 27	**Լիանա Խլոյան**
«Փորձ» հանդեսը և Հայկական հարցը	էջ 28	**Նորայր Սարուխանյան**
Քաոս և կազմակերպվածություն	էջ 31	**Արամ Ալեքսանյան**
Գալուստ Կյուլպենկյան կամ «Պարոն 5%»	էջ 34	**Խաչատուր Դադայան**

ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻ
«Ուխտ Արարատի»
կազմակերպության
պարբերական

Տպաքանակը՝ 1500
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համարի թողարկման
պատասխանատու՝
Տիգրան Փաշաբեզյան

Ստորագրվել է
տպագրության՝
15. 06. 2005

Խմբագրության հասցեն՝
375023, Երևան-23,
Ագաթանգեղոսի փող., 2

OUKHT ARARATI
Official periodical of
“Oukht Ararati”
organisation

EDITORIAL BOARD

Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375023,
Yerevan-23,
Agatangeghosi str. 2

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս խնդրում ենք հղում կատարել:

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ասես ի վերուստ էր որոշված, հայության մղած ամենաբախտորոշ ճակատամարտերն ու տարած հաղթանակները կայացել են մայիս ամսին: Սկսած 451թ. տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտից, մինչև Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա, Մեծ հայրենական, Շուշիի ազատագրում: Ավելին՝ մինչև մեր միասնության մշտանորոգ հաստատումը՝ 2005 թվականի մայիսի 28-ի «Միասնության շուրջպարը» սրբազան լեռան՝ Արագածի շուրջ:

Ամենևին այն կարծիքին չենք, թե այլ ամիսների հաղթանակներ չենք ունեցել: Հայ ժողովրդի մղած դարավոր պայքարի առաջին օրինակը՝ հանուն ազատության, հանուն հայրենիքի, տվել է Հայկ նահապետը շուրջ հինգ հազար տարի առաջ՝ դեռևս հայ ժողովրդի կազմավորման արշալույսին:

Ավարայրում մենք պաշտպանում էինք դավանանքի և հայրենիքի ազատությունը, Սարդարապատում՝ հայրենիքում ապրելու ու պետականություն կերտելու իրավունքը, Մեծ հայրենականում, մեր նվիրյալ մասնակցությամբ, դրսևորվեց հայրենիքի ազատությունը պահպանելու կամքը, իսկ Արցախյան ազատամարտում կրկին վերահաստատեցինք ազատ ապրելու համայն հայության ձգտումը:

Հայրենիքում ազատ ապրելու և ստեղծագործելու իրավունք և կամք. ահա այն ոգևորող ուժերը, որոնք առաջնորդել են մեզ դարեդար: Արցախյան ազատամարտն ու նրա փառքի պսակը՝ Շուշիի ազատագրումը, այդ կամքի և իրավունքի լավագույն դրսևորումները եղան նոր ժամանակներում:

Սակայն ինչո՞ւ է դարից էլ երկար ձգվում մաքառումը, ինչո՞ւ չենք կարողանում, ի վերջո, հասնել մեր մշտնջենական երազանքին. Հայկական լեռնաշխարհում Հայոց հզոր ու բարգավաճ պետականության կերտմանը: Չէ՞ որ, բազմիցս, այնքան մոտ ենք եղել դրա իրագործմանը: Հիշենք, թեկուզ, Սարդարապատի հաղթանակից հետո ստեղծված բարենպաստ իրավիճակը կամ Սևրի դաշնագրի ստորագրումը:

Մեր կարծիքով խանգարել են երեք հանգամանք.

Առաջին՝ պայքարում համախմբվելու, սակայն ձեռք բերած հաղթանակը բավարար չափով չգնահատելու մեր համաժողովրդական անփութությունը: Աշխարհում պարտությունն է որբ, մեզանում՝ հաղթանակը:

Երկրորդ՝ հնդեվրոպական քաղաքակրթության բնօրրանում գտնվելու, քաղաքակրթությունների շփման գծում լինելու խնդիրը և այն, որ նախկինում միջազգային դիվանագիտական շրջանակները (ուզում ենք հավատալ, որ այդ արատավոր գործընթացն ավարտվել է) ցանկացել են անտեսել հայության շահերը հօգուտ նրա թշնամիների:

Հիմնականում դա է պատճառը, որ թուրքական պետական գործիչները շարունակում են հավատալ, թե հայության նկատմամբ ոչ մի փոխզիջում ստիպված չեն անելու: Այս զգացողությունը աստիճանաբար փոխանցվում է նաև Ադրբեջանի ղեկավարներին:

Եվ երրորդ հանգամանքը, որ իրականում սերտորեն կապված է առաջինի հետ, ռազմադաշտում ձեռք բերած հաղթանակները բանակցությունների ժամանակ զիջելու մեր դիվանագետների և քաղաքական գործիչների հանցավոր գործելակերպն է: Օրինակները բազմաթիվ են:

Նկատի առնելով նաև այլ խանգարող հանգամանքներ, որոնք համարում են փոքր ինչ ավելի երկրորդական, պայքարում համախմբվելով ու հաղթելով, իրականացնում ենք ազատ ապրելու մեր ցանկությունը միայն, որը պետք է կարողանանք վերածել մեր հայրենիքում ազատ ապրելու, ստեղծագործելու անխորտակելի իրավունքի:

Մեր կարծիքով սրանք են մայիսյան հաղթանակների դասերը, որոնք մշտապես պետք է հիշենք և իրագործենք.

Համախմբում՝ ազատության համար պայքարում.

Անառարկելի հարգանք՝ մեր ժողովրդի հերոս զավակներին.

Անկոտրում կամք՝ մեր իրավունքների պաշտպանության հարցերում.

ԱՐՑԱԽՅԱՆ ՏԱՍՆՅՈԹԱՄՅԱ ԱԶԱՏԱՄԱՐՏԻՆ

1988թ. փետրվարի 20-ի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) Մարզային խորհրդի պատմական որոշումով՝ նոր էջ բացվեց հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ: Ադրբեջանի և խորհրդային իշխանության ջանքերը, այդ պոռթկումը խեղդելու ուղղությամբ, հաջողություն չունեցան: Ղարաբաղյան շարժումը դարձավ խորհրդային ամբողջատիրության դեմ պայքարի ջահակիր:

Երևանում և Արցախում տեղի ունեցած բազմահազարանոց խաղաղ ցույցերին ի պատասխան՝ ադրբեջանական կողմը գործի դրեց ջարդերի ու ահաբեկման իր մեքենան՝ Բաքվից ոչ հեռու գտնվող Սումգայիթ քաղաքում իրականացնելով խորհրդային պատմության մեջ նախադեպը չունեցող հակահայկական ջարդեր: Այդ ջարդերի ժամանակ գազանաբար սպանվեցին մի քանի տասնյակ անմեղ հայեր, իսկ հարյուրավորները վիրավորվեցին: Նույն ձեռագիրը գործեց նաև երկու տարի անց՝ 1990թ. հունվարին, այս անգամ մայրաքաղաք



Բաքվում, ուր հայաջինջ քաղաքականության արդյունքում սպանվեցին հարյուրավոր հայեր, իսկ 250 հազարանոց հայկական համայնք ունեցող քաղաքը հայաթափ եղավ:

Խորհրդային Միության թուլացմանը համընթաց Ադրբեջանի կառավարիչներն էլ ավելի էին հակվում հայերի պահանջատիրությունը զենքի ուժով կասեցնելու, և Արցախը հայաթափելու գաղափարներին:

1991թ. ադրբեջանական հատուկ ջոկատները Խորհրդային բանակի հետ համատեղ բռնագաղթի ենթարկեցին Հյուսիսային Արցախի հայությանը՝ տասնյակ հազարավոր բնիկների ստիպեցին թողնել պապենական օջախները: Պատմության մեջ «Օղակ» (“Кольцо”) անունով հայտնի այս զինվորական օպերացիան, փաստորեն, դարձավ նաև խորհրդային բանակի պատմության մեջ վերջին խոշոր ռազմական գործողությունը:

1991թ. Ադրբեջանի ղեկավարության ԼՂԻՄ ինքնավար կարգավիճակը լուծարելուն ի պատասխան, նույն թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղը հռչակվեց Հանրապետություն՝ (ԼՂՀ): Սակայն, Բաքուն բնավ էլ հակված չէր զիջելու. 1992թ-ից արցախահայության դեմ սանձազերծեց արյունալի մի պատերազմ, որի զոհը ի վերջո պետք է դառնար ոչ միայն Արցախի հայ բնակչությունը, այլև հարյուր հազարավոր ազերիներ: Հետխորհրդային շրջանում հենց ադրբեջանական կողմն առաջին անգամ խաղաղ հայ բնակչության դեմ սկսեց կիրառել միջազգային պայմանագրերով արգելված զենքի տեսակներ:

Հայկական ուժերը, կասեցնելով հակառակորդի կատաղի գրոհները և ծանր կուրուստներ պատճառելով նրան, 1992թ. ազատագրեցին Կովկասի՝ երբեմնի հռչակավոր գրչության կենտրոն Շուշին, իսկ 1993թ. տեղի ունեցած ռազմական գրագետ գործողությունների արդյունքում ազատագրեցին ադրբեջանցիների կողմից բռնագրավված հայկական գյուղերն ու քաղաքները: Այս հաջողություններից շփոթված՝ Բաքվի կառավարիչները փորձեցին օտար ուժերի միջոցով ապահովել իրենց հաղթանակը: Պատերազմի ընթացքում Ադրբեջանը պաշտոնական մակարդակով հայկական ուժերի դեմ ներգրավեց չեչեն, աֆղան և այլազգի հազարավոր վարձկանների, որոնք ի օգուտ ազերիների էական փոփոխություն չկարողացան մտցնել ռազմական գործողություններում: Այս պայմաններում, չկարողանալով հայկական ուժերի դեմ կազմակերպված քայլեր ձեռնարկել, Բաքուն ստիպված էր 1994թ. մայիսին հրադադար կնքել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների հետ:

Արցախյան հերոսամարտի հիմնական խորհուրդը կայանում է նրանում, որ փոքրաթիվ, սակայն համախմբված ուժերով հնարավոր է դիմակայել ցանկացած արտաքին ոտնձգությունների:

2005թ. սկզբներին Երևանում լույս տեսավ «Արցախյան ազատամարտ 1988-1994թթ.» վերնագրով հանրագիտարանային հատորը, ուր ամփոփված են տեղեկություններ Արցախյան շարժման բուռն ժամանակահատվածի դեպքերի ու դեմքերի մասին: Այս հատորը գրավոր հուշարձան է՝ նվիրված բոլոր այն հայորդիների լուսավոր հիշատակին, ովքեր իրենց կյանքի գնով հաստատեցին հայ ժողովրդի ազատ ապրելու իրավունքը:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ներկայումս ընթացող համահարթեցման գործընթացների տեմպերն ու ծավալը առաջին պլան են մղում (հատկապես՝ փոքր ազգերի համար) գոյատևման և ինքնության պահպանման խնդիրները:

Մեր պատմությունն ապացուցում է հայության՝ որպես ինքնատիպ քաղաքակրթական միավորի և հայկական քաղաքակրթության, որպես մշակութային արժեքներ արտահանողի մասին գաղափարը:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին վրացիների և թաթարների[1] համեմատ, հայերն Անդրկովկասում առավել կազմակերպված էին. ակտիվ դերակատարություն ունեին հատկապես երկու խոշոր քաղաքների՝ Բաքվի և Թիֆլիսի, հասարակական և մշակութային կյանքում: Այս երևույթը զուգորդվում էր նաև հայերի բարձր սոցիալ-տնտեսական դիրքով: Առաջին նավթարդյունաբերող ընկերությունը Բաքվում հիմնել է թիֆլիսեցի Միրզոյանը[2] 1871թ-ին.: 1879թ. Բաքվում նավթարդյունաբերությամբ զբաղվում էին 70 հայ ձեռներեց՝ ունենալով 150 դեսյատին նավթաբեր հող և 155 նավթահոր, իսկ ռուսները, եվրոպացիները, թուրքերն ու վրացիները միասին վերցրած ունեին ընդամենը 154 դեսյատին հող և 140 նավթահոր[3]:

Թիֆլիսի հայ արվեստագետների միության մի խումբ հիմնադիր անդամներ. ձախից աջ՝ Ե. Թադևոսյան, Վ. Սուրենյանց, Փ. Թերլեմեզյան, Մ. Սարյան, Լ. Հազարապետյան

Առավել ակնհայտ էր հայերի մշակութային, քաղաքակրթական հզորությունը հարևան ժողովուրդների համեմատ: Այսպես՝ 1904թ. Բաքու քաղաքի միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողների 41,1%-ը հայեր էին, 33,8%-ը՝ ռուսներ, 4,5%-ը՝ մահմեդականներ[4]: Դպրոցական տարիքի սովորողների շրջանում 46%-ը հայեր էին և՝ ընդամենը 12%-ը՝ թաթարներ[5]:

1905-06թթ. հայ-թաթարական ընդհարումների չար ոգի «Հայաթ» (Կյանք) թերթը գրում է. «Ա. Աղաևը չէր քաշվում հայտարարելու, թե հայերը չափազանց առաջադիմելով, վազում են արագորեն և երբեք չեն մտածում իրենց հարևան թաթարների մասին: Այդ հանգամանքը պետք է գիտակցեն իրենք՝ հայերը, և աշխատեն քարշ տալ իրենց հետ թաթարներին կամ **թաթարները պիտի կանգնեցնեն հայերի առաջխաղացումը այնքան ժամանակ, մինչև որ իրենք ևս կը հասնեն հայերին**»[6]:

Իրականում թաթարները քաղաքակրթական իրենց հետամնացության համար ոչ թե պետք է մեղադրեին հայերին, այլ ընդհակառակը՝ գիտակցեին, որ վերջիններիս են պարտական 19-րդ դարի վերջին իրենց մշակութային շարժման ու 20-րդ դարի սկզբին նշմարվող ազգային զարթոնքի համար: **Բաքվի և հարող տարածքների ոչ միայն տնտեսական, այլ առավել կարևոր քաղաքակրթական յուրացման գործընթացը ղեկավարել են հայերը**: Ինչպես նշում է Ա. Գյուլխանդանյանը՝ «Հայ, ռուս և եվրոպացի արդյունաբերողները, որոնք բազմաթիվ բուրգեր էին բարձրացնում նավթաբեր հողերի վրա՝ երկրի սիրտը ճեղքելու և նորանոր հարստություններ դիզելու համար, երբեք չէին մտածում, թե դորանով հնարավորություն են ստեղծում թաթար ժողովրդի համար ազգայնորեն զարգանալու, սակայն **նոցա կառուցած գործարաններում էր, որ առաջին անգամ զարթնում էր թաթարի ազգային գիտակցությունը և նրանց կառուցած դպրոցների մեջ էր, որ գրել-կարդալ էր սովորում ապագա թաթար մտավորականը**»[7]:

Այսպիսով՝ հայկական քաղաքակրթությունն իր հզոր ներուժի, կենսունակության շնորհիվ մեծապես խթանել է հարևան ժողովուրդների քաղաքակրթական, մշակութային, ինչպես նաև քաղաքական և սոցիալ-տնտեսական առաջընթացը:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Գրականության ցանկ.

1. «Թաթարներ» կամ «կովկասյան թաթարներ» անվամբ հայտնի թյուրքալեզու էթնիկ տարր Անդրկովկասում, որը հետագայում ստացավ ադրբեջանցիներ էթնանունը:

2. Ս. Մելիք-Յոլչյան, Բաքվի հերոսամարտը, «Հայրենիք», Բոստոն, 1925, N- 7, էջ 106:

3. Տե՛ս նույն տեղը, էջ 106-107:

4. Տե՛ս ԹրպտՏՊՊՈվպռՔՈռ ՏՑփպՑ Տ տՐՏՈՒՉՉպՊպվվՏռ Չ 1905 չՏՊg, տՏ ԹօրՏփՈռՔպվg տՏՉպսպվՈ՚, րպվՈՑՏՐՏվ kցՒՖՎՈվրՍՈՎ ՐպՉՈՒՉՈՈ չՏՐՏՊՈ ըՈՍg Ո ըՈՍՈվրՍՏռ չցոպՐվՈՈ, հկո., 1906, c. 97-98.

5. ծ. Ղ. ՀցՊՏսՖԻ, կոՒՏՐ Պպ՚ՑպսՖվՏրՑՈ ԽՈՉՍՈՒրՍՏչՏ ցփպովՏչՏ ՏՍՐցչՈ: 1908-1912չչ., ՉՈՒսՈՐ, 1917, ր. 9.

6. Ա. Գյուլխանդանյան, Հայ-թաթարական ընդհարումները, հ.1, Բաքվի առաջին ընդհարումները, Փարիզ, 1933, էջ 175:

7. Ա. Գյուլխանդանյան, Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ. դարում, Նոր մատենաշար. թիվ 1, Փարիզ, 1939, էջ 17:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԵՆԴ

Մայիսը հայկական ներքաղաքական դաշտի համար երկու կարևոր իրադարձություն արձանագրեց՝ մեկը տեղի ունեցավ Հայաստանի սահմաններից դուրս, մյուսը՝ երկրի ներսում: Մեկն արդեն անցյալ է, մյուսի հիմնական բովանդակային մասը լինելու է ապագայում:



Առաջինը ընդունվեց չափազանց մեծ հետաքրքրությամբ, որոշ շրջանակների կողմից՝ խանդավառությամբ, միգուցե նաև չափից ավելի մեծ լրջությամբ և նույնիսկ նախանձով, երկրորդը, լինելով ավելի կարևոր հայկական պետականության համար, անուշադրության մատնվեց, չկարևորվեց, հասարակության ամենալայն զանգվածների համար անցավ աննշան, իսկ քաղաքական էլիտայի համար դարձավ սեփական անիմաստությունը ցուցադրող ամենաբարձր դրսևորումներից մեկը:

Առաջինը ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի այցն էր Վրաստան, իսկ երկրորդը՝ ՀՀ նոր Սահմանադրության նախագծերի քննարկումն ու ընդունումն էր ԱԺ-ում: Եվ որքան էլ զարմանալի թվա, այս երկու իրադարձությունները կապվում են իրար, ընդ որում, բավականին ամուր կապով: Մայիսի 10-ին ԱՄՆ նախագահ Բուշը ժամանեց Վրաստան և Թբիլիսիի Ազատության հրապարակ եկած հազարավոր մարդկանց վստահությամբ հայտնեց, որ «Սև ծովից մինչև Կասպից ծով մարդիկ ազատություն և ժողովրդավարություն են տենչում, և նրանք հասնելու են դրան»: Ավելի ուշ՝ մայիսի 19-ին, Բուշը Վաշինգտոնի միջազգային հանրապետական ինստիտուտում հայտարարեց, որ ժողովրդավարական հեղափոխությունները գալու են Կովկաս և Միջին Ասիա:

Թեև ԱՄՆ նախագահը չմանրամասնեց այս երկու ծովերի արանքում ընկած ո՞ր պետության մասին է խոսքը, ինչևէ, Թբիլիսիից եկող հեղափոխության ազդակները որոշակիորեն ակտիվացրին հայաստանյան ներքաղաքական կյանքը: Դժվար է հիշել, թե երբ է հայաստանյան քաղաքական գարունն այսքան հանգիստ անցել: Եվ դա արդեն բնավ էլ այն երանելի կայունությունը չէ, որը միշտ էլ հայկական քաղաքական բառապաշարում դրական երանգներով է ներկայացված: Քաղաքական դաշտը կատարյալ լճացման մեջ է: Գրեթե մշտապես ամբողջովին դատարկ Ազգային խորհրդարանը կամ ակտիվ քայլերի բացակությունը վերջինիս պատերից դուրս, դրա վառ ապացույցներն են: Եվ այս ամենը ներկա պայմաններում, երբ ամբողջ հետխորհրդային տարածքը աննախադեպ ակտիվացել է թավշյա հեղափոխությունների ուրվականի պատճառով:

Ցանկացած հեղափոխություն ունի այն տվյալները, որոնց առկայության դեպքում հնարավոր է երկրում հեղափոխական պայքար ծավալել: Դա և՛ սեփական կյանքից դժգոհ ու «բարիկադներ դուրս գալու» պատրաստ մարդկանց մեծ զանգվածն է, և՛ իշխանությունների թուլությունը, որոնք չեն դիմանա հեղափոխական շարունակական ճնշմանը, և՛ քաղաքական ու առաջին հերթին տնտեսական էլիտաների պառակտումը, ինչը թույլ կտա հայթայթել գումարներ հեղափոխության համար, իսկ նրա ավարտից հետո ավելի սահուն դարձնել իշխանափոխությունը, և՛ արտաքին աշխարհից եկող դրական «հաղորդագրությունները», որոնք թույլ են տալիս ակնկալել հետագայի համար բարեկամական վերաբերմունք, և՛ խարիզմատիկ առաջնորդ, որը կստեղծի և իր հետ կտանի հեղափոխական տեխնոլոգիաները, հստակ կիրառող արհեստավարժ թիմ: Կա՞ արդյոք այդպիսին Հայաստանում:

Հեղափոխական կարևոր գործոններից է նաև «սահմանային իրավիճակը», որը կտրուկ բարձրացնում է մարդկանց մեծ խմբերի գործելու ունակությունը և պատրաստակամությունը: Հայաստանում խորհրդարանական ընտրությունները՝ 2007-ին, իսկ նախագահականը՝ 2008-ին են և նրանց դեռ շատ ժամանակ կա, և այդ պատճառով առիթ կարող են դառնալ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կամ էլ օգոստոսին սպասվելիք հանրաքվեն Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ: Առաջինին ընդդիմությունը չի մասնակցում: Մնում է երկրորդը, որին և ապավինում է ընդդիմությունը:

Մայիսի 11-ին Ազգային ժողովի արտահերթ նիստում տեղի ունեցավ Սահմանադրական փոփոխությունների երեք փաթեթների քննարկումը: Ընտրվեց կոալիցիայի առաջարկած փաթեթը, իսկ «Միավորված աշխատանքային կուսակցության» խմբակցության և պատգամավոր Ա. Սադոյանի ներկայացրած նախագծերը մերժվեցին: Ընդ որում, այդ իրողության մեջ զարմանալին այն էր, որ իշխանական կոալիցիայի անդամները ոչ մի փորձ չեն էլ արել պաշտպանելու իրենց սեփական նախագիծը ընդդիմախոսների հարձակումներից: Ուղղակի քվեարկել են և անցկացրել:

Այսպիսով՝ օգոստոսին կայանալիք Սահմանադրության նոր տարբերակի վերաբերյալ հանրաքվեն սպառնում է վերածվել ներկա իշխանությունների վստահության հանրաքվեի: Կողմերից և ոչ մեկը չի ցանկանում նրան տալ զուտ երկրի կարևորագույն իրավական փաստաթղթի ընդունման գործընթացի ձև: Ընդդիմադիր տրամադրություններ ունեցող քաղաքական ուժերն ու նրա կողմնակիցները

քվեարկելու են նրա դեմ՝ առանց խորանալու առաջարկվող փոփոխությունների իրական իմաստի մեջ՝ նրա տապալումը դարձնելով սեփական հեղափոխական ելույթների համար հարմար առիթ, իսկ իշխանությունները ցանկանալու են ամեն գնով հասնել դրա ընդունմանը: 1995թ. Սահմանադրության նման, 2005-ինը նույնպես շատ տխուր ճակատագիր կարող է ունենալ:

Այդպես էլ կլինի, մինչև չհասկանանք, որ անընդհատ ստեղծվող սպառողական արժեքների հետ, պետք է նաև հավերժական արժեքներ ստեղծել: Եթե դա մեր գիտակցության մեջ չամրապնդվի, ապա սա կլինի ընդամենը հերթական Սահմանադրության վերաբերյալ հերթական հանրաքվե՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՄԲ

Բաց նամակ

Հայաստանի Հանրապետության Նախագահ՝ **Ռոբերտ Քոչարյանին**

Պատճենը՝ Եվրոպական Միության Երևանյան գրասենյակի ղեկավար՝ **Ալքսիս Լոյբերին**

Մշակույթի Աջակցման և Ռազմավարության Հայկական Կենտրոնի՝ 2005թ. ապրիլի 13-ի «ԴԻՄՈՒՄ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ու ՊԱՀԱՆՋՆԵՐ»-ին Եվրոմիության Երևանյան գրասենյակի ղեկավար՝ Ալքսիս Լոյբերի 23. մայիսի 2005թ. ՊԱՏԱՍԽԱՆԻ, նաև **ՀՀ-ում Վենետիկի հանձնաժողովի գործունեության և նրա վերջին՝ 26 մայիսի 2005թ-ի դժգոհության ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ.**

ՄԵՆՔ ՈՉ ՄԻԱՅՆ ԴԺԳՈՀ ԵՆՔ, ԱՅԼԵՎ ԽԻՍՏ ՄՏԱՀՈԳՎԱԾ Վենետիկի հանձաժողովի անբավարարվածության և դժգոհությունների կապակցությամբ

Օրեր առաջ մամուլն անդրադարձավ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Սահմանադրության փոփոխությունների նախագծի կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովի «խորը անբավարարվածությանն» ու «դժգոհությանը»: Այն պայմանավորված էր նրանով, որ կոալիցիան հաշվի չի առել ՀՀ Նախագահի և խորհրդարանի լիազորությունների միջև հավասարակշռություն ստեղծելու, դատական համակարգի անկախության և Երևանի քաղաքապետին ընտրելու վերաբերյալ եվրոառաջարկները: Հայտնի է սակայն, որ ժողովրդավարության հիմքերից մեկը դա երկրի գործադիրի, օրենսդիրի և դատականի տարանջատման սկզբունքն է, ասել է թե, ինչպես գործադիրը չպետք է ունենա օրենսդիրին կամ դատականին՝ գործառնական առումով պատկանող լիազորություններ, նույնպես և օրենսդիրը չպետք է ունենա գործադիրին կամ դատականին վերաբերող լիազորություններ: Առավել ևս, որ այդ երեք իշխանությունների լիազորությունները լիովին տարբերվում են միմյանցից, ինչպես, օրինակ, տարբերվում են միմյացից ժամանակի, երկարության և ծանրության միավորները (որպեն, մետրը և կիլոգրամը): Ուստի, ավելի քան անհասկանալի է, թե Վենետիկի հանձնաժողովը ինչո՞ւ և ինչպե՞ս է պահանջում հավասարակշռել ԱՆՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԵԼԻՆ: Դրված խնդրում միակ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԵԼԻՆ կարող է լինել այդ երեք իշխանությունների կողմից իրենց լիազորությունները շահադիտական նպատակներով չարաշահելու միջոցով ստացվող ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՇԱՀՈՒՅԹԸ: Մեզ լուրջ մտահոգում է, թե ինչո՞ւ է Վենետիկի հանձնաժողովը պահանջում, որ մեր երկրի պետական համակարգը ոչ միայն լինի կոռումպացված, այլև որ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՇԱՀՆ էլ լինի իշխանական թևերի միջև սահմանադրորեն հավասար բաշխված՝ հավասարակշռված:

Ոչ պակաս մտահոգիչ է այն, երբ եվրոհանձնաժողովը պահանջում է դատական համակարգի անկախություն, առանց նշելու ումի՞ց (երկրից, ժողովրդից, թե գործադիրից և օրենսդիրից): Քանզի հայտնի է, որ գործադիրի, օրենսդիրի ու դատականի փոխադարձ անկախությունը հնարավոր է միայն ապահովել, երբ կանոնակարգված կերպով առկա է այդ երեքի առանձին - առանձին կախվածությունը երկրի ամբողջ իշխանությունից՝ ժողովրդից, նրա կողմից անմիջականորեն իրագործվող ՀՀ ամբողջ իշխանությունից: Ապահովեցիր այն, կգործի տարանջատման սկզբունքը, չապահովեցիր՝ կինքնամեկուսանան, ասել է թե հենց միայն ժողովրդից կանկախանան ՀՀ իշխանության այդ երեք թևերը: Արդյունքում, ընթացք կստանա ՀՀ ամբողջ իշխանությունը յուրացնելու համար օրենսդիրի, գործադիրի ու դատականի միջև մրցակցային անհաշտ պայքարի ստվերային կարգավորվածության օրենքը, կամ էլ, այդ երեքի հանցագործ համաձայնության գալու և միասնական գործելու պարագայում, կունենանք երկրից ու ժողովրդից՝ նրանց կենսախնդիրներից լիովին անկախացած ՀՀ պետական իշխանություններ ու ժողովրդի դեմ գործող իշխանավորներ:

Փաստ է, ՀՀ-ում սահմանադրորեն «մոռացել են» ժողովրդին: Իսկ մտահոգիչն այն է, որ իրերի առկա դրությունը շտկելու՝ ժողովրդավարություն պահանջող առաջարկների փոխարեն Վենետիկի հանձնաժողովի հավանությանն է արժանացել այն, որ մեր երկրում ժողովուրդը սահմանադրորեն զրկված է իրեն պատկանող ՀՀ ամբողջ իշխանությունը անմիջականորեն իրագործելու իր անօտարելի իրավունքից: Դեռ ավելին, չսահմանակարգելով օրենսդիրի, գործադիրի, նաև դատականի կախվածությունը երկրի տիրոջից՝ ժողովրդից, Վենետիկի հանձնաժողովը, ըստ էության, պահանջում է պետական կոռուպցիայի օրինականացում և դրա սահմանադրական պաշտպանություն: Այն, իր ներպետական բոլոր ինքնակործան դրսևորումներով հանդերձ, հղի է նաև (երկրի անկախության կորստի և այլոցից, օրինակ՝ եվրոինտեգրման պարագայում) կոռուպցիոն–պարտադրվածության կախվածության մեջ լինել եվրոկառույցներից կամ այլ օտար երկրներից ու նրանց պետական կամ մասնավոր քաղաքական - կոռուպցիոն ազդեցությունից: Հանգամանք, որն իր դրսևորման բոլոր ձևերով էլ, մեղմ ասած, մեր դժգոհության համար լուրջ հիմքեր ունի:

Դժգոհ ենք նաև Վենետիկի հանձնաժողովի արձանագրած այն գնահատականի կապակցությամբ, թե իբր

կոալիցիայի նախագծում կա լուրջ առաջընթաց Մարդու իրավունքների առնչությամբ: Քանզի խոսքն այստեղ վերաբերում է նրան, որ նախագծի հեղինակները քիչ համարելով նախագծերում մինչ այդ Մարդու իրավունքների կիսատ-պռատությունը, նաև եղածի նենգափոխումները, չբավարարվելով նաև իրենց կողմից մինչ այդ ամրագրած ժողովրդավարության լուրջ սահմանափակումներով, հիմա էլ (2005թ. մայիսին, առաջին ընթերցմամբ ընդունված փոխված տարբերակով) որոշել են, որ պատգամավորները՝ շրջանցելով ժողովրդին (հոդված 111.1), կարող են ԱԺ օրենքով փոփոխել Սահմանադրության 2-րդ (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) գլխի դրույթները:

Լուրջ մտահոգություն է հարուցում և այն, որ Վենետիկի հանձնաժողովը բավարարված է, երբ պարզել է, որ իր Ստրասբուրգի (6 դեկտեմբերի 2004թ.) միջանկյալ կարծիքում (կետ 18.) արված. -«հեռարձակման ոլորտում անկախ և հզոր կարգավորող մարմին ստեղծելու» մասին առաջարկը, իրենց իսկ (կետ 25.-ի) ձևակերպումով, նույնությամբ՝ առանց որևէ ստորակետ իսկ փոխելու, տեղ է գտել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում (հոդված 27): Ասել է թե, ոչ միայն օրինականացվելու է եվրոպական ու միջազգային այլ կառույցների՝ մասամբ նաև ՀՀ իշխանություններ կողմից մեր երկրի զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ առկա համապարփակ հսկողությունը, այլև սահմանադրորեն ստեղծվելու է դրսից ՁԼՄ-ների գործունեությունը անմիջականորեն ուղղորդող, երկրի տեղեկատվական ու գաղափարախոսական–քարոզչական ամբողջ դաշտին միակենտրոն ազդեցությամբ տիրապետող մի հզոր, ՀՀ-ից ու ժողովրդից անկախ (օտար երկրների հատուկ ծառայությունների ու միջազգային կառույցներից կախված և անմիջականորեն նրանց ծառայող) մարմին:

Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջովաննի Բուքիքիոնին Հայաստանում

Հարգելի՛ պարոն Քոչարյան

Կարծում ենք այլևս կարիք չկա հիմնավորելու մեր երկրում Վենետիկի հանձնաժողովի կողմից տարվող գործունեությունով պայմանավորված մեր դժգոհությունն ու նոր՝ ավելի քան լուրջ մտահոգությունը, առավել ևս, որ նախկինում դրանց բազմիցս անդրադարձել ենք ոչ միայն մամուլով, այլև սույն թվականի ապրիլի 13-ին Ձեզ (նաև ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությանը, ՀՀ Դատախազությանը, ՀՀ-ում ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակին, Եվրոմիության Երևանյան գրասենյակին, Եվրոխորհրդի Երևանյան գրասենյակին, Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության Հայաստանյան գրասենյակին, ՀՀԿ, ՀՀԴ, Օրինաց Երկիր և Միավորված Աշխատանքային կուսակցությունների շարքային անդամներին և ՁԼՄ-ներին) ներկայացված «ԴԻՄՈՒՄ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ու ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՄ»:

Մինչ բուն առաջարկին անցնելը, հարկ ենք համարում տեղեկացնել Ձեզ, Եվրոմիության Երևանյան գրասենյակի ղեկավարի՝ Ալքսիս Լոյբերի կողմից մեր կենտրոնի «ԴԻՄՈՒՄ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ու ՊԱՀԱՆՋՆԵՐ»-ի պատասխանին: Այն դեպքում, երբ մենք հիմնավորելով, ասել է թե. «ՃՇՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, թե իրականում ո՞վ է՝ նախագծի հեղինակ ՀՀ պատգամավորներն են, թե Եվրոխորհուրդն է փորձում սույն՝ սահմանադրական – օրենսդրական դիվերսիայի ու ագրեսիայի միջոցով վերացման ու ոչնչացման տանել մեր երկիրը…», առաջարկել ենք պրն Լոյբերին. -«դիմել Եվրոմիության ղեկավար մարմիններին, որ նրանք …հանձնարարեն Վենետիկի հանձնաժողովին մասնակցելու մեր կողմից առաջարկվող «Բանավեճ - քննարկմանը»՝ որպես բանավիճող երրորդ կողմ: Որպեսզի բանավեճի ու քննարկման միջոցով Վենետիկի հանձնաժողովը ներկայացնի ու հիմնավորի մեր երկրի նկատմամբ եվրոքաղաքականության բուն իսկությունն ու շարժառիթները…», ստանում ենք հետևյալ պատասխանը. -«Տեղեկացնում ենք Ձեզ, որ Եվրոպական Միությունը գործի հետ առնչություն ունեցող իր ծառայություններով սերտորեն կողմնակից է Հայաստանում օրենսդրական ռեֆորմների գործընթացներին: Մասնավորապես, Հայաստանի սահմանադրական ռեֆորմները Եվրոպական Միության և հայկական իշխանությունների միջև բարձր մակարդակի հանդիպումների խոսակցության առարկաներից մեկն է:»:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ մինչ այդ (մայիսի 3-ին), ի պատասխան մեր բանավոր հարցումներին, թե ե՞րբ ենք ստանալու պաշտոնական պատասխան, գրասենյակից մեզ տեղեկացրին, որ նյութը լրիվ թարգմանվել և ներկայացվել է պարոն Լոյբերին: Պարոն Լոյբերը ուշադրություն է դարձրել մեր կողմից նշվող ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի գործառույթներով մեր երկրի ազգային անվտանգությանը սպառնացող վտանգներին: Նյութը ուղարկվել է կենտրոն՝ Եվրոպա: Առաջիկայում՝ կենտրոնից պատասխան ստանալուց հետո, մեզ կտրվի պաշտոնական պատասխան: Այնպես որ ստացվում է, որ սույն մոտեցումը պարտավոր ենք դիտել որպես Եվրոմիության դիրքորոշում, և ոչ թե եվրոերևանյան գրասենյակի խուսափողական պատասխան:

Կարծում ենք, այլևս մեկնաբանություններն իմաստազուրկ են, քանզի Եվրոմիության կողմից, առանց որևէ հիմնավորումների բառացիորեն մերժվել է եռակողմ «Բանավեճ - քննարկմանը» Վենետիկի հանձնաժողովի մասնակցությունը. ասել է թե, մերժվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից մեր ժողովրդին ժողովրդավարության

և մարդու իրավունքների իրենց պատկերացումները ու իրենց գնահատակների հիմնավորումները ուղիղ եթերով հեռարձակվող քննարկումների միջոցով ներկայացնելու ժողովրդավարական հնարավորությունը: Չենք կարծում, որ այսօրինակ (կրկնակի ստանդարտների, քննադատություն չընդունող, երկխոսությունից խուսափող ու չհիմնավորված պնդումների ուժային և այլ հարկադրանքերի) ժողովրդավարությունը ընկալելի կլիներ եվրոպական երկրիների ժողովուրդներին. եթե ամբողջ մի երկրի ու ժողովրդի ներկան ու ապագան որոշող հիմնարար օրենքի վերաբերյալ միջազգային խորհրդատվական «աջակցություն» անող (Մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը որպես եվրոչափանիշ որդեգրած) եվրոկառույցները երբևէ փորձեն նույնաբար հաշվի չնստել ու շրջանցել եվրոպական որևէ երկրի ժողովրդին:

Պարոն Ալքսիս Լայբերի պատասխանից հետևում է, որ Եվրոմիությունը, անտեսելով ժողովրդավարության հիմքերի հիմքը, մեր երկրի ժողովրդավարացման հարցում հարմար է գտնում իրենց խորհրդատվական առաջարկները քննարկել միայն ՀՀ պետական իշխանության հետ, ասել է թե՝ բարձր մակարդակով: Անտեսելով, ավելի ճիշտ հրաժարվելով այդ ամենից, նախևառաջ քննարկել գերագույն մակարդակով՝ ասել է թե մեր ժողովրդի՝ ՀՀ պետական իշխանությունների նկատմամբ գերակա՝ ՀՀ ամբողջ իշխանության կրողի ու այն անմիջականորեն իրագործողի հետ:

Հարգելի՛ պարոն նախագահ

Հաշվի առնելով Եվրոմիության Երևանյան գրասենյակի ղեկավար՝ Ալքսիս Լոյբերի պատասխանը՝ ըստ որի արդեն իսկ համոզվեցինք, թե Եվրոմիության քաղաքականությունն է, որ սահմանադրական–օրենսդրական այսօրինակ միջամտության, նաև ՀՀ օրենսդիրների անմիջական՝ ինքնաստրկացումային աջակցության ճանապարհով սպառնալ մեր երկրի ազգային անվտանգությանը, այլևս իմաստազուրկ ենք համարում «ԴԻՄՈՒՄ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ու ՊԱՀԱՆՋՆԵՐ»-ի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով Ձեզ առաջարկվող համաժողովրդական ունկնդրմանը հասու եռակողմ «Բանավեճ - քննարկումը» նախաձեռնելու և կազմակերպելու խնդիրը:

Ելնելով առկա՝ փաստացի իրողությունից, ուր ինքնըստինքյան առաջին՝ գործնական պլան է մղվում կետ 1-ով արվող առաջարկը, ուստի, որպես մեր երկրի ազգային անվտանգության երաշխավորի՝ առաջարկում ենք նախատեսել և գործնական քայլերով հետայսու -«Կասեցնել մեր երկրին ու ժողովրդին լրջորեն սպառնացող՝ իբր օրինաստեղծ, սակայն գործունեության արդյունքում դավադիր հանցագործություն հանդիսացող, պետականության հիմքերը խարխլող ու պետությունը վերացման տանող վտանգալից այս գործընթացը»:

Խորին հարգանքով՝

Մշակույթի Աջակցման և Ռազմավարության Հայկական Կենտրոնի նախագահություն. ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐ. Արմեն Հովհաննիսյան (Հայաստանի Գրողների Միության նախագահության անդամ), Սիմոն Կամսարական (Հիմնարար Գիտությունների Հայկական Կենտրոնի տնօրեն), Արմեն Աթանյան (Հայաստանի Նկարիչների Միության վարչության անդամ).

2.05.2005թ.

Հ.Գ.

Նամակը պատրաստ էր, երբ մայիսի 30-ին՝ լուսաբացից առաջ, «Եվրոնյուզ»-ից տեղեկացանք, որ Եվրոպայում տեղի է ունեցել «քաղաքական երկրաշարժ», որ Եվրոմիության ղեկավար կազմը «շոկի» մեջ է: Քանզի Ֆրանսիայի ժողովուրդը հանրաքվեով մերժել է Եվրոմիության Սահմանադրությունը:

Պարզվեց, որ ֆրանսիացիներն ու հոլանդացիները մերժել են այն, Եվրոմիության Սահմանադրության նախագծով իրենց երկրին և ժողովրդին սպառնացող մի շարք մտահոգիչ՝ բավականին լուրջ վտանգներից անհանգստանալով: Վտանգներ, որոնց մասին 2003թ-ից առ այսօր, շարունակաբար և անդադրում ահազանգում ենք նաև մենք. ՀՀ սահմանադրական փոփոխությունների նախագծերի՝ նրանցում ամրագրված ՀՀ Ազատությունն ու Անկախությունը վերացնող, Հայոց ինքնությանն ու բարոյահոգևոր կերտվածքին սպառնացող, մեր երկրի ազգային անվտանգությունը մեծապես վտանգող, ինչպես և ՀՀ-ում Մարդու իրավունքները սահմանադրորեն շրջանցող, նաև եղած՝ ոչ լիարժեք ժողովրդավարությունն իսկ վերացնող իրողության, և այն ամեն գնով՝ հանրաքվեով անցկացնելու համառության կապակցությամբ:

Հայտնելով մեր համերաշխությունը, սույնով շնորհավորում ենք Ֆրանսիայի, նաև Հոլանդիայի ժողովուրդներին, ժողովրդավարական Մեծ հաղթանակի կապակցությամբ: Միանում ենք ֆրանսիացիների, հոլանդացիների ու Եվրոպայի մյուս ժողովուրդների մեծ ուրախությանն ու տոնական տրամադրությանը: Քանզի հետագայում իրավամբ պատմական ընկալվող այս հանրաքվեները ոչ միայն մերժեցին ՄԵՐԺԵԼԻՆ, այլև ազդարարեցին համաշխարհային պատմաքաղաքական հեռանկարում Օսվալդ Շպենգլերի կանխանշած Եվրոպայի ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ավարտը:

Վստահ ենք. Ֆրանսիայի ժողովրդի 2005թ. մայիսի 29-ի հանրաքվեի առաջին ճառագայթի շողարձակումով՝ սկսվում է Եվրոպայի ՆՈՐ ԱՐԵՎԱԾԱԳԸ …

ԱՌԱՋ՝ ԴԵՊԻ ՀԱՂԹԱՆԱԿ

1992թ. մայիսի 8-ին սկսվեց Շուշիի ազատագրման գործողությունը: Մայիսի 9-ին բերդաքաղաքն ազատագրվեց: Սա Հայոց պատմության մեջ աննախադեպ ռազմական գործողություն էր ծրագրի մշակման, փոքրաթիվ ուժերով լավ զինված ու անառիկ բերդը գրավելու իմաստով: Արցախի ազատագրման պայքարում Շուշիի ճակատամարտը բեկումնային էր:

Որքան էլ խոսենք այդ հերոսական կռվի մասին, վերլուծենք, միևնույնն է, չենք կարող լիովին պատկերացնել այն դժվարին ուղին և փորձությունները, որոնց միջով անցել են մեր քաջամարտիկները, որոնք խիզախորեն գրոհել և ազատագրել են Շուշին: Իրենց կյանքը վտանգելով՝ նրանք շարունակել են պայքարել նույնիսկ այն դեպքերում, երբ, անգամ, չի բավականացրել զինամթերքը, սնունդը և այլ անհրաժեշտ պարագաներ: Իրենց քաջության շնորհիվ նրանք մեկ անգամ ևս ապացուցեցին, որ հայը, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է հերոսական ու նույնիսկ խենթ պայքարի:

Զինվորներին ոգեշնչում և առաջ էին մղում փոքրաթիվ զորքերի հրամանատարները, նրանք ինչպես արագ նախաձեռնեցին գրոհը, այնպես էլ արագ գործի անցան ու վերջին Շուշին՝ ցույց տալով թշնամուն, որ հայի համար դժվարությունը ոչինչ է, երբ նրանից փորձում են խլել, օտարել հարազատ հողը:

Մեր զրուցակիցն է Շուշիի գրոհը ծրագրող ու իրականացնող, մեր ժողովրդի համար լեգենդ դարձած հերոսը՝ գեներալ Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը: Պարոն Թադևոսյանը, լինելով ազատամարտի բուռն իրադարձությունների կենտրոնում, շատ հետաքրքիր դեպքերի, անսպասելի և անկասելի շրջադարձերի ականատես ու մասնակից, այդ ամենի մասին պատմեց՝ պատասխանելով նաև մեզ հետաքրքրող հարցերին:

- 1992թ. Շուշիի ազատագրումը մեր պատմության ամենահայտնի հերոսական էջերից է: Դուք փառավոր ուղի եք անցել, փառք ու պատվով վերադարձել պատերազմից: Որպես գլխավոր հրամանատար՝ կարող եք պատմել՝ ինչպե՞ս սկսվեց ամեն ինչ:

- Խնդիրն այն էր, որ մենք, անկասկած, պետք է Շուշին վերցնեինք և, դրա համար ժամանակ էր պետք՝ պատրաստվելու: Սակայն, հենց քաղաքի բնակչությունը մեզ դրդեց շտապողականության, քանի որ օր-օրի (սկսած փետրվարի 13-ից) Ստեփանակերտը, Շորժան և տասնյակ այլ քաղաքներ աստիճանաբար ոչնչանում էին: Թշնամին շրջապատել ու կրակ էր բացում խաղաղ բնակչության վրա, քաղաքն ավերվում էր, մարդիկ մահանում էին: Ստեփանակերտի 70 տոկոսը գտնվում էր քարուքանդ վիճակում: Երեխաները, կանայք ու ծերերը թաքնվում էին նկուղներում: Որպեսզի Շուշին գրավեինք, պետք է հաշվի առնեինք ռազմական մի քանի օրինաչափություն: Օրինակ՝ եթե մենք էինք հարձակվում, մեր զինվորների թիվը պետք է երեք անգամ ավելի շատ լիներ, քան հակառակորդինը, իսկ մենք այդքան մարդ չունեինք: Թշնամին ուներ 2.5 հազար մարդ, մենք՝ 3.000: Բայց որոշվեց շտապ գրոհել և ժամանակ չծախսել պատրաստվելու վրա: Ժողովուրդը դրդեց սկսել մայիսին՝ համոզելով, որ պատրաստ է մարտի, պատրաստ է ետ վերցնել իր քաղաքը: Մենք էլ սկսեցինք աշխատել այդ ուղղությամբ, ջոկջոկ հրամանատարներին տվեցինք իրենց հանձնարարությունները: Նրանք տեղաբնակներ էին ու իրենց տարածքը լավ էին ճանաչում, ամեն թուփ, ամեն քար ծանոթ էր նրանց, և լավ կարող էին կողմնորոշվել մարտում: Ես հավատացի իրենց, և մենք պատրաստ էինք գրոհի: Աջակցեցին նաև սփյուռքահայ բարերարները, մասնավորապես Եղյա Նաջարյանը տրամադրեց անհրաժեշտ ռադիոկապի միջոցներ, այն քանակությամբ, որքան խնդրել էինք: Բոլորը պատրաստ էին օգնել, տալ ամենաթանկը, իսկ մարտիկներն՝ իրենց կյանքը: Յուրաքանչյուր ոք էլ կոգևորվեր՝ տեսնելով, թե ի՜նչ նվիրվածությամբ էին մարդիկ առաջ նայում, դեպի մարտը նետվում:

Հետո էլ հարցնում են, թե ինչպե՞ս գրավեցինք Շուշին այդքան անհավանական պայմաններում: Այո՛, որովհետև ամեն մեկը պատրաստ էր քաջաբար կռվել և կյանքը վտանգել հանուն իր հարազատ հողի: Ոգևորությունը, հույսն ու հավատն էին մեզ առաջ մղում, և, իհարկե, ատելությունը դեպի թշնամին:

-Ովքե՞ր էին հերոսամարտի առաջամարտիկները:

-Չէի ցանկանա հարյուրներից ընդամենը մի քանիսի անունը նշել, քանի որ այնտեղ յուրաքանչյուրն էլ հերոս էր ու ամեն մեկն էլ ամեն ինչ անում էր հանուն հաղթանակի: Նրանց բոլորի անուններն էլ արժանի են հիշատակման: Երբեք չեմ մոռանա Բեկորին (Աշոտ Ղուլյան),

Դուշման Վարդանին, Վալերա Չիչյանին և մյուսներին: Նրանք անմիջական հրամանների հետ միասին, հեռահար հրահանգներն էլ էին կատարում ժամանակից շուտ, և զարմանում էինք՝ ինչպես կարող էին այդքան մեծ տարածք կտրել՝ այդքան դժվարություններ հաղթահարելով:

-Դուք և Ձեր մարտական ընկերները այդ օրերին ինչպիսի՞ անելանելի ու բարդ դրությունների մեջ եք եղել և ինչպե՞ս եք դրանք հաղթահարել:

-Մենք չենք եղել անելանելի վիճակներում, բացի այն պահից, երբ ամբողջովին շրջապատված էինք թշնամու կողմից: Մենք դրանք հաղթահարել ենք ռազմական տարբեր հնարքների միջոցով: Շատ դեպքերում փորձում էինք գուշակել թշնամու հաջորդ քայլը և, մասամբ, խուսափում՝ բարդ դրություններից:

Ճիշտ է, նման պայմաններում մարդու մոտ հիմնականում աշխատում է ենթագիտակցությունը, որը թելադրում է դիմել փախուստի, իսկ զինվորը պարտավոր է մտածել և ելք գտնել ստեղծված բարդ իրավիճակից, կանխագուշակել թշնամու քայլերը և մասնակիորեն պլանավորել սեփականը: Ահա այդ մարտավարության շնորհիվ էլ մենք կարողացանք և՛ դուրս գալ թշնամու շրջափակումից և՛ հաղթանակ տանել: Այդպես ամեն ինչ անում էինք ցույց տալու համար, որ մենք իրենցից թվով քիչ չենք, որ ունենք բավարար քանակով զենք ու զինամթերք:

Թշնամին մեզ հետևում էր. այդ ընթացքում մենք կարողանում էինք մի պահ կորչել տեսադաշտից, մեր հագուստը, արտաքինը մի քիչ փոխել, կրկին վերադառնալ ռազմադաշտ, և թշնամուն հեռվից թվում էր, թե դրանք նոր ուժեր են: Այդպես թշնամու աչքին կրկնապատկում էինք մեր զինվորների թիվը: Դա զինվորական խորամանկություն էր: Մենք կարող էինք մի տեղից կրակել, հետո վազել ու մյուս կողմից կրակել և այդպես շարունակ: Նրանց թվում էր, թե մենք շատ ենք, հետևաբար ավելի էին հուսահատվում: Այդպես մեր և նրանց հնարավորությունները հավասարեցնում էինք: Մենք չէինք կարող սպասել՝ հույս դնելով բախտի վրա: Ինչպես ասում են՝ հաղթում է նա, ով տիրապետում է իրավիճակին:



-Ինչպիսի՞ն էին մարդկային հարաբերությունները, հակասություններ և անհամաձայնություններ եղե՞լ են:

-Երբ մարդիկ խաղաղության մեջ են, նրանք կարող են իրենց շռայլություն թույլ տալ, օրինակ՝ նախանձել, վատություն անել, բայց պատերազմական ծայրահեղ, անգամ խուճապահար իրավիճակներում, կարծես այդ ամենը մոռանում են, մտերմանում և օգնում են իրար դժվարին պահերին: Երեք հոգով նստած էինք, մենք գիտեինք, որ ամբողջը մեզանից էր կախված, և իրար ավելի լավ էինք հասկանում, ավելի ներողամիտ էինք, ընկերական: Քանի որ գիտակցում էինք, որ մեկ թիմ ենք, մեկ բուռ և անպայման պետք է մեկ առաջնորդ ունենանք, ում խոսքը միայն պիտի լսվի և չստեղծվի խառնաշփոթ, չլինի մրցակցություն, չլինի նախանձ: Մի խոսքով՝ առաջնորդը պիտի տիրապետի իրավիճակին, հույս ու եռանդ հաղորդի մյուսներին, ում մեջ տիրում է համաձայնության, ընկերության, համախմբվածության ու եղբայրության մթնոլորտ: Այդ պայմաններում միմյանց քաջալերելով՝ առաջ էինք ընթանում:

-Եղե՞լ են այնպիսի մարտիկներ, ովքեր չեն դիմացել, տեղի են տվել և հեռացել մարտի դաշտից:

-Եղել են այնպիսի դեպքեր, երբ զինվորը պառկել է գետնին, գլուխը բռնել և սկսել դողալ: Դա նյարդային լարված պահ է, որը մարտական բնական վիճակ է, չնայած որ աստիճանաբար տեղի է տալիս քաջությանը ու անձնվիրությանը: Իմ գործն էր զինվել համբերությամբ և քաջալերելով՝ մղել նրանց նորմալ հոգեվիճակի, դուրս հանել նյարդային լարվածությունից: Այսինքն՝ հրամանատարը որոշ չափով նաև պետք է հոգեբան լինի և կարողանա մարդկային, ընկերական վերաբերմունք ցուցաբերել: Հենց այդ էլ ստիպում է զինվորին հավատալ, որ ինքը մենակ չէ, վախենալու կարիք չկա և իր համար առաջնայինը հարազատ հողի պաշտպանությունն է: Նա, ով վախ չունի, առնվազն անորմալ է, վախը մարդկային սովորական զգացում է, որը հատուկ է բոլորին:

-Հայտնի է, որ երբ զինամթերքը պակասել է, սկսել

եք քարեր նետել թշնամու վրա:

-Ամեն ինչ տեղի էր ունենում այսպես. պաշտպանության ժամանակ, ասենք, ունեցել ենք տասը փամփուշտ, կրակել ենք մեկ հատ և մի հինգ հատ էլ քար ենք նետել թշնամու վրա՝ խաբկանք ստեղծելով, որ մեր զինամթերքը չի սպառվել: Մի բան էինք այրում, ջարդում, խառնաշփոթ ստեղծում, որպեսզի թշնամին իմանար, որ այստեղ մարդ կա, որ հանգիստ չգար ու գրոհի անցներ: Մի խոսքով, ամեն կերպ ստեղծում էինք տեսողական և լսողական խաբկանք: Այդ բոլոր հոգեբանական և ռազմավարական քայլերը մշակվում են և սովորեցվում բանակում, մենք այդ ամենի օգնությամբ հաղթահարեցինք մեր առջև ծառացած դժվարությունները:

-Դուք գտնվել եք ամենաթեժ ու բարդ իրադրությունների կիզակետում: Եղե՞լ են պահեր, երբ հոգնել եք ամեն ինչից և ցանկացել եք ամեն ինչ թողնել-հեռանալ:

-Այո՛, եղել են պահեր, երբ հոգնել եմ, ինչպես դա կարող էր պատահել ցանկացած մարդու հետ, բայց ոչ թե կռվից, հարազատ հողը պաշտպանելիս, այլ այն խառ-

նաշփոթ, բարդ ու անհասկանելի իրավիճակից, որը երբեմն ստեղծվում էր շուրջս:

-Դժվարին պահերին ի՞նչ սկզբունքով էիք առաջնորդվում:

-Սկզբունքը նույնն էր, ինչպես յուրաքանչյուր մարտիկինը. «Առա՛ջ դեպի հաղթանակ», «Կյանքը հանուն հայրենիքի»... Ընդհանրապես, պատերազմական լարված իրադրություններում ամեն րոպե մտածում ես, որ կարող ես զոհվել, որ թշնամու գնդակը կարող է քեզ

հասնել: Սակայն, եթե չմտածես մահվան մասին, չես կարող կյանքդ գնահատել և առաջ ընթանալ: Իսկ սերը հայրենիքի նկատմամբ ստվերում է վախը մահվան հանդեպ: Շատերը կյանքում այլ արժեքներ ունեն, իսկ զինվորի համար առաջնայինը հայրենիքն է ու սիրելի կինը:

-Այսօր պետությունը որքանո՞վ է հովանավորում ազատամարտի վետերաններին, ի՞նչ վիճակում են նրանք:

-Եթե օբյեկտիվորեն նայենք, պետությունը այնքան գումար է տալիս նրանց, որը բավականացնում է միայն կոմունալ վարձերը մուծելու համար, իսկ թե ինչպե՞ս են հոգալու մյուս ծախսերը՝ հարց է: Նրանք կռվից վերադարձել են, և մինչ օրս նրանցից շատերը նյարդային են, չունեն աշխատանք: Բնականաբար, այդպիսի վիճակում նրանց պետք է դեղ, նորմալ սննունդ ու դրամ, իսկ պետության կողմից հատկացված այդ փոքրիկ գումարը բավական չէ այդ ամենի համար: Համենայն դեպս լավ է, որ այսօր պատերազմ չկա, տա՛ Աստված, որ է՛լ չլինի, որովհետև քա՜նի-քա՜նի երիտասարդներ են զոհվել, որոնք կարող էին ընտանիք կազմել, երեխաներ ունենալ: Պատերազմն ամենասարսափելի բանն է, որից մարդկությունը ամեն կերպ պետք է խուսափի:

-Ձեր կարծիքով՝ մեր երիտասարդությունը հայրենասե՞ր է և նրա բնավորության մեջ կա՞ հայ զինվորին բնորոշ գծեր:

-Երբ մարդ տարիքն առնում է, սկսում է գովել հին ժամանակները և ասել, որ այն օրերն ավելի լավ էին, մարդիկ՝ ավելի արժանավոր, քան՝ այսօր: Բայց մեր օրերում պատկերը այլ է, երիտասարդն այսօր իր ձևով է մտածում և իր կարծիքով նա իրավացի է: Այսօր մտածելակերպի նորացման, վերափոխման վրա ազդում են նաև նորագույն տեխնոլոգիաները, որոնք զգալիորեն թեթևացնում են և՛ մարդու առօրյան, և՛ զինվորի կյանքն ու գործունեությունը: Դրա հետևանքով էլ ձևավորվում է նոր մտածելակերպ: Անկասկած, այսօրվա մարդն էլ արժանավոր է իր ժամանակի մեջ: Նախ և առաջ պետք է հաշվի առնել, որ փոխվել են ժամանակները, բանակում ծառայելու ցանկությունը փոքր է, որովհետև հենց ժամանակն է թելադրում մարդու ապրելակերպը, բնավորության գիծը, բայց ես չեմ կարող այդ երևույթը համատարած համարել: Այսօր, իհարկե, կան տղաներ, որոնք ամեն ինչ անում են բանակից խուսափելու համար, բայց կան նաև այնպիսիները, որոնց ծնողները հոգում են ամեն ինչի մասին, զավակներին բանակ չուղարկելու համար ճար են գտնում: Բայց տղաներն իրենց հաստատուն խոսքն են ասում, կամավոր ծառայելու ցանկություն հայտնում:

Մեր երիտասարդության տարիներին էլ կային այնպիսիները, ովքեր չէին ցանկանում ծառայել: Դրա պատճառն այն է, որ երբեմն բանակը դարձնում են վախեցնելու միջոց, բայց երբ գնում են, ծառայում և հետ են վերադառնում, բոլորը գոհ են և շատ դեպքում էլ շնորհակալ, որ իրենց տղային, ինչպես ասում են, իսկական տղամարդ դարձրին: Մեզանում, ցավոք, շատ ծնողների համար գոյություն ունի մի խնդիր. ովքեր որդի ունեն պատրաստ են ամեն քայլի, որպեսզի իրենց տղան չծառայի Արցախի զորամասերում:

- Իսկ կա՞ անհանգստության իրական պատճառ:

-Արցախում զինվորներին ուղարկում են ճակատային պահակակետեր: Այդ դեպքում ծառայությունը մի փոքր վտանգավոր կարող է թվալ, բայց ոչ այնքան, որ ենթադրում են: Զինվորի անվտանգությունը մեծ մասամբ կախված է նրա կարգապահությունից և զգուշությունից: Ինքս հաճախ եմ լինում Արցախի զորամասերում և ամեն անգամ համոզվում եմ, որ այնտեղ ամեն ինչ կարգին է, ծառայությունն ընթանում է բնականոն հունով, առանց լուրջ խնդիրների:

-Պրն Թադևոսյան, ի՞նչ կմաղթեք նոր սերնդին:

-Գիտեմ, որ մերօրյա երիտասարդներին դժվար ժամանակներ են բաժին ընկել, քանի որ մեր պետությունն էլ է գտնվում բարդ շրջանում և առաջին հերթին կցանկանայի մաղթել համբերություն, կարգապահություն, ուժ, որպեսզի հաղթահարենք կյանքի դժվարությունները: Գլխավորապես մաղթում եմ մեծ երջանկություն: Սիրե՛ք ձեր հայրենիքը, ինչպես սիրել են ձեր հայրերն ու պապերը, օրինակ վերցրեք նրանց խիզախ վարքից, եղեք ուժե՛ղ, պայքարեք և անպայման կհասնեք ձեր նպատակին:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Գլաձոր» համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի

Հ.Գ. - Տա՛ Աստված, որ յուրաքանչյուր հայ երիտասարդի սրտում վառվի հայրենասիրության, ուժի, համառության և ապագայի հանդեպ հավատի կրակը, որպեսզի հաստատուն քայլերով շարժվի առաջ՝ օրինակ վերցնելով մեր ոչ վաղ հերոսական անցյալից:

ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ՝ ՊԱՏՐԱՍՏ ԵՄ ԱՄԵՆ ԻՆՉԻ

Խախտելով չհարձակվելու մասին 1939թ. կնքված սովետագերմանական պակտը՝ 1941թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա: Թշնամին սրընթաց շարժվեց երկրի խորքը: Խորհրդային բանակը նահանջեց, որովհետև նախ հարձակումն էր անսպասելի, հանկարծակի, և ապա գերմանական ռազմական տեխնիկան էր գերակշռում: Փոքր հայրենիքը սրտերում, մեծ հայրենիքը պաշտպանելու գնացին շատ-շատերը: Մեծ հայրենականի կամավորներից մեկի, այժմ պահեստի գնդապետ, ՀՀ վետերանների միավորման խորհրդի պատասխանատու քարտուղար պրն Արմենակ Նավասարդյանի հետ է մեր զրույցը:

-Պարո՛ն Նավասարդյան, ռազմական ինչպիսի՞ ուղի եք անցել:

-Շատ չեմ կռվել, որ գլուխ գովեմ, երեք ամիս՝ Հյուսիսային Կովկասում՝ 18-րդ բանակի 88-րդ գնդի կազմում: 1940թ. ավարտել եմ դպրոցը: Ռազմական գործ իմացող չկար. բոլոր զինապարտներին բանակ էին տարել: Ես ռազմական գործը մանկությունից էի սիրում և լինելով զինղեկ՝ որոշեցի զինվորական դառնալ: Զորակոչից ազատված էի, բայց քանի որ բոլոր ընկերներս 1942թ. մեկնել էին ճակատ, մենակ էի մնացել: Նրանց ծնողներն ինձ մի տեսակ էին նայում: Չհամբերեցի և մի գեղեցիկ օր մորս ասացի, որ գնում եմ Երևան: Իսկ Երևան գնալու փոխարեն մեր կայարանից նստեցի գնացք և ճանապարհ ընկա դեպի Թիֆլիս: Լինելով զինղեկ՝ զինվորական համազգեստ էի հագնում առանց ուսադիրների, գտա այն տեղը, որտեղից զինամթերք էին տանում Տուապսե, խնդրեցի, որ ինձ էլ տանեն ռազմաճակատ: Տեսնելով, որ զինվորական համազգեստով եմ, կարծեցին արձակուրդ եմ եկել, կամ նման մի բան, ինձ վերցրեցին իրենց հետ: Զինվորական մեքենայով էլ հասա Տուապսե: Գրեշկոյի 47-րդ բանակում չհաջողվեց «հանգրվանել», և ինձ մի մայոր՝ Հակոբյան ազգանունով, խորհուրդ տվեց գնալ 18-րդ բանակ, որտեղ շատ հայեր կային:

Հրամանատարությունն ինձ մեծ դժվարությամբ ընդունեց, որովհետև որևէ զորամասից չէի գնացել և զինկոմիսարիատից էլ գործուղում չունեի, ինքնագլուխ կամավոր էի: Բանակի հրամանատարը, իմանալով, որ ռազմագիտության ուսուցիչ եմ եղել, ընդունեց: Անմիջապես նշանակեցին քաղղեկի տեղակալ: Իսկ օգոստոսի 15-ից սեպտեմբերի 17-ը ուղարկեցին ճակատ, որտեղից գերմանացիները փորձում էին անցնել մեր թիկունքը: Նրանց ինչպես հարկն էր հակահարված տվեցինք, այնտեղ էլ վիրավորվեցի: Բուժվելուց հետո, արդեն զինկոմի միջոցով, մեկնեցի զորամաս: Այնտեղ գումարտակի կոմսոմոլի քարտուղարն էի՝ կրտսեր լեյտենանտի կոչումով: Երբ արևմուտքում վերջացավ պատերազմը, որպես զինվորական թղթակից ինձ գործուղեցին Մանջուրիա, որտեղ մերոնք կռվում էին Ճապոնիայի դեմ: Բանակում ծառայեցի 11 տարի, մինչև 1954թ.:

Երբ Հայոց բանակն էր կազմավորվում, չէի կարող անտարբեր մնալ, կրկին հագա զինվորական համազգեստ, մասնակցեցի բանակաշինության գործին: Սպարապետ Վազգեն Սարգսյանի ժամանակ ստացա փոխգնդապետի կոչում, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի օրոք՝ գնդապետի:

-Մեծ հայրենականի մարտիկը ի՞նչ նշանաբանով էր առաջնորդվում ռազմի դաշտում:

-Հանուն հայրենիքի ազատության՝ պատրաստ եմ ամեն ինչի:

-Ի՞նչ դժվարություններ եք ունեցել մարտի դաշտում:

Մարտը հենց ինքն իրենից դժվարություն է ներկայացնում: Ճակատում, երբ զինվորը խաղաղ նստած է և ճաշն ուշանում է, դժգոհում է, բայց մարտի ժամանակ շարունակում է կռվել:

Թամանյան դիվիզիայի գործողություններին ես չեմ մասնակցել, բայց երբ Ղրիմում էի, նրանց հետ միասին երկար ճանապարհ անցա: Այնտեղ էլ ականատես եղա, թե ինչպես էին կռվում թամանցիները: Կերչում՝ հայ զինվորների մեջ, լուր տարածվեց, որ Հայաստանից՝ Արև Բաղդասարյանի գլխավորությամբ, համերգային խումբ է եկել: Կատակումբերում (հատուկ փորված թունելներ, որտեղ զինվորները գիշերում են) խումբը համերգ տվեց հայ զինվորների համար: Գեներալ Սաֆարյանը այդ կապակցությամբ հոդված գրեց «Կարմիր զինվորում». «Կերչը գրավելու համար 3 ամիս չարչարվում էինք, իսկ Արև Բաղդասարյանի համերգներից հետո՝ երկու օրում այն գրավեցինք»: Ուզում էր ասել, որ արվեստը օգնում է հաղթանակին: Եվ յուրաքանչյուր դրական երևույթ, իրոք, զինվորների մարտական տրամադրությունը բարձրացնում է:

- Զվարճալի ի՞նչ հիշողություններ ունեք պատերազմից :

-Մի անգամ գերմանացիները՝ Կարմիր բանակի զինվորների հագուստով, շարքով գալիս էին, որ անցնեին մեր թիկունքը: Բայց մարտի դաշտում զինվորները շարքով կգնա՞ն: Նրանք այնքան միամիտ էին, որ էլ ուրիշ բան չէին մտածել: Հրամանատարը ռուսերեն հրամայում էր, իսկ նրանք շարքով գնում էին: Մեր հետախույզները տեղեկացրին, որ գերմանացիները շարքով գալիս են, որ անցնեն թիկունք, խուճապ առաջացնեն և մեր զորաշարը խառնեն: Նրանց թույլ տվեցինք անցնել, ապա շրջապատեցինք և լիկվիդացրինք:

-Մարտական ընկերներ ունե՞ք, որոնց հետ պահպանել եք մտերմություն:

-Պատերազմի ժամանակ առանց ընկեր չի լինում: Բո-

լորն էլ ընկերներ են, և զինվորական ընկերությունն անչափ թանկ է, միշտ հիշվող ու անփոխարինելի: Ունեցել եմ և՛ հայ, և՛ վրացի, և՛ ռուս ընկերներ: Օրինակ՝ վրացի մի լավ տղա կար Դավիթ անունով, Դաթիկո էինք ասում: Մինչև վերջերս կենդանի էր, նամակագրական կապ ունեինք: Երբ Թիֆլիս էի գնում, անպայման գնում էի նրանց գյուղ և հանդիպում նրան: Եթե ինքն էր գալիս Երևան, առանց ինձ տեսնելու երբեք Թիֆլիս չէր վերադառնում:

-Պատերազմը շրջադարձայի՞ն էր Ձեր կյանքում:

-Եթե ես համարվում էի մեր գյուղի կտրիճ տղաներից մեկը, ապա պատերազմն ինձ դարձրեց ավելի համարձակ: Պատերազմից հետո ոչ մի բանից չեմ վախեցել: Մահը ինձ համար չէր և չէ: Հիմա էլ, երբ տարիքս առել եմ, բոլորովին չեմ մտածում մահվան մասին. առհասարակ, բանակը մարդուն առնականացնում է:

Մի ժամանակ, հատկապես գյուղական վայրերում, սովորություն է եղել, որ եթե տղան ծառայած չէր բանակում, դժվարությամբ էին նրան աղջիկ տալիս: Այնպես, որ ծառայությունը կամքի ուժ և ինքնուրույնության ձևավորում է:

-Մեծ հայրենականի մարտիկն ինչո՞վ է հիմա զբաղված:

-Հիմա երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերով ենք զբաղված: Առհասարակ, վետերանները դպրոցներում արիության դասեր են տալիս հայրենական պատերազմի մասին: Սա է մեր հիմնական աշխատանքը: Հայաստանի գնդերից մեկը կոչվում է Թամանյան դիվիզիայի անունով: Այդ դիվիզիայի վետերանների խորհրդի նախագահի տեղակալն եմ և հաճախ եմ լինում զորամասում, զրուցում զինվորների հետ: Աշխատում ենք, որ այդ անունը կրող գնդում ծառայող զինվորները իմանան դիվիզիայի մարտական ուղու մասին: Այնպես որ, անում ենք ամեն բան, որպեսզի մեր երիտասարդները դառնան ավելի հայրենասեր և անվախորեն կանգնեն հայրենիքի պաշտպանության դիրքերում:

-Ի՞նչ եք կարծում, մերօրյա երիտասարդությունը տարբերվու՞մ է նախկինից:

-Շատ հայրենասեր երիտասարդներ ունենք, և մեր բանակում ծառայող երիտասարդների զգալի մասը հայրենասեր տղաներ են, բայց և ունենք տղաներ, ովքեր իրենց հայրերի «Ջիպերով» առավոտյան գալիս են զորամաս՝ ներկա ստանում ու գնում, և դա համարում են ծառայություն:

-Ի՞նչ կմաղթեք մեր երիտասարդությանը:

-Ե՛վ մեր երիտասարդությանը, և՛ հայ ժողովրդին մաղթում եմ առողջ մտածելակերպ և մեծ հայրենասիրություն, որովհետև առանց հայրենասիրության մենք չենք կարող Հայաստանը պաշտպանել, քանի որ շրջապատված ենք վատ հարևաններով: Որպեսզի կարողանանք պաշտպանել մեր հայրենիքը, նախ՝ պետք է լինենք մեծ հայրենասերներ, ապա, շենացնելով մեր հայրենին, ամուր ու անսասան կանգնենք մայր հողին:

ՄԱՐԻՆԵ ՄԱՄՅԱՆ
«Գլաձոր» համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի

ՀԱՅԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմին ընդհանուր առմամբ մասնակցեց ավելի քան 600.000 հայ, այդ թվում 500.000-ը՝ ԽՍՀՄ-ից, 100.000-ը՝ Սփյուռքից: Մարտերում զոհվել են ավելի քան 200.000 հայորդիներ:

Խորհրդային Միության հերոսի բարձրագույն կոչմանն է արժանացել 108 հայ, նրանցից 4-ը՝ խորհրդա-ֆիննական պատերազմում, 3-ը՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին կատարված սխրանքների համար:

Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի:

27 հայ ռազմիկներ պարգևատրվել են Փառքի շքանշանի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճաններով ու դարձել՝ Զինվորական փառքի շքանշանի լրիվ ասպետներ: Նրանք կարգավիճակով իրավահավասար են Խորհրդային Միության հերոսներին:

1945թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով՝ պատերազմին մասնակցել է 64 հայ գեներալ, երեք մարշալ և մեկ ծովակալ: Պատերազմի մասնակից հայ սպաներից այնուհետև գեներալի կոչում է շնորհվել 83 հոգու:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից մեկը եղել է ռազմաճակատի, 3-ը՝ բանակի, 5-ը՝ կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատար:

1943թ. Ուկրաինայի և Բելոռուսիայի տարածքներում մարտնչում էին մոտ 2.000 հայազգի պարտիզաններ: Թշնամու թիկունքում գործում էին «Հաղթանակ», «Միկոյանի անվան», N:10 և N:41 հայազգի պարտիզաններով համալրված ջոկատները:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին տարբեր երկրների բանակների կազմում ֆաշիստների դեմ կռվեց ավելի քան 100.000 հայ, այդ թվում ԱՄՆ-ի բանակում՝ 20.000, Մեծ Բրիտանիայի բանակում՝ 1.000, Ֆրանսիայի բանակում՝ 10.000: Սփյուռքահայության հանգանակած միջոցներով ստեղծվեց «Սասունցի Դավիթ» և «Մարշալ Բաղրամյան» տանկային շարասյուները:

Դաշնակից բանակների կազմում ցուցաբերված քաջության, արիության ու հերոսության համար պարգևատրվել են բազմաթիվ հայորդիներ:

ԱՄՆ-ի բարձրագույն պարգևով՝ «Կոնգրեսի պատվո մեդալով»՝ լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը, «Պղնձյա աստղ» շքանշանով՝ Ջորջ Պետրոսյանը: Ժիրայր Զարգավաթյանին շնորհված պարգևը հանձնել է անձամբ ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտը:

Մեծ Բրիտանիայի բանակում աչքի ընկան հատկապես Աղազարյան գերդաստանի անդամները: Լևոն Աղազարյանը Անգլիայի թագուհուց ստացել է ոսկեձույլ բռնակով Պատվո սուր, որը այժմ պահվում է «Մայր Հայաստան» զինվորական թանգարանում:

Իտալիայում Մկրտիչ Դաշտոյանը արժանացել է Իտալիայի ազգային հերոսի կոչման:

Չեխոսլովակիայում Արտեմ Պետրոսյանը պարգևատրվել է երկրի բարձրագույն շքանշանով:

Ֆրանսիայում Միսաք Մանուշյանը (Ժորժ) գլխավորում էր «Չապաև», «Ստալինգրադ», «Վիկտոր Հյուգո», «Ազատություն» ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատները:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 7 մայիս 2005թ.

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԱՆՁԱՐԱՆ

Սարդարապատի հուշահամալիրը, Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատմության պետական թանգարանը երկմաս պատմամշակութային օջախ է: 1968թ. ստեղծված Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշահամալիրը (ճարտարապետ՝ Ռաֆայել Իսրայելյան) այցելուներին ցույց է տալիս այն վիթխարի պատմական նշանակությունը, որն ունեցել է Սարդարապատի հերոսամարտը հայրենիքի և հայոց հնագույն մշակույթի փրկության գործում:

Հայաստանի ազգագրության պետական թանգարանը հայոց ազգային մշակույթի մերօրյա տաճարն է: Այն գտնվում է Սարդարապատի ճակատամարտի տարածքում՝ Արմավիրի մարզում: Այն հանրապետության առաջատար թանգարաններից է և հաշվվում է առաջին քառյակի մեջ: Այստեղ պահվում, ցուցադրվում և ուսումնասիրվում է հայ էթնոսի մշակութային ժառանգությանը վերաբերող բարձրարժեք թանգարանային մասունքներ՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:



Մեր հիանալուրց ազգն աշխարհին ներկայացվում է ժողովրդական և մշակույթի նշանային համակարգի ինքնատիպ նմուշների, ազգային ինքնության կարևորագույն խորհրդանիշների միջոցով:

Խորհրդային կառավարության 1978թ. սեպտեմբերի 13-ին, Հայաստանի ազգագրության թանգարանը իր դռները բացեց այցելուների առաջ: Այս սրբազան տարածքում Հայաստանի ազգագրությանը՝ բուն էթնիկ մշակութային ժառանգությանը նվիրված թանգարանի ստեղծումը մեծ ու անանց խորհուրդ ունի: Այստեղ են պահվում և ներկայացվում մշակութային արժեքներ, որոնց համար մարտնչել են Սարդարապատի հերոսները: Խորհրդանշական է և այն, որ անդրանիկ ցուցադրությունը նվիրված էր Հայկական լեռնաշխարհի բնակչության կիրառական և գեղազարդման արվեստին, իսկ առաջին այցելուները հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովի մասնակիցներն էին:

1981-82թթ. կազմակերպվեց մեր ազգային մշակույթը ներկայացնող հիմնական ցուցադրություն, որը տարեցտարի համալրվելով և ամբողջացվելով, առանձին թեմատիկ համալիրներով ներկայացնում է հայոց վաղնջական մշակույթի նշխարները մինչև XVIII դարը ներառյալ: Ներկայացվում են նաև հայոց ավանդական մշակույթը (XIX-XXդդ.), ազգային ինքնության խորհրդանիշները:

Թանգարանի չորս գիտական բաժիններում գիտահետազոտական աշխատանքները են տարվում հայոց մշակույթի և ազգային ազատագրական պայքարին նվիրված հարցերի շուրջ: 1998թ. կազմակերպվել է ՀԱՊԹ հիմնադրման 20-ամյակին նվիրված գիտաժողով, և տպագրվել է «Ավանդույթն ու նորույթը հայոց կենսաապահովման մշակույթում» խորագրով հիմնադրույթների ժողովածուն:

Ինդիանայի համալսարանում (ԱՄՆ) 2001թ. հրատարակված «Հայ ժողովրդական արվեստ, մշակույթ և ինքնություն» անգլերեն լեզվով գրքի ինը հեղինակներից վեցը նախկին և ներկա սարդարապատցիներ են: Գրքում տեղ գտած թանգարանային արժեքներից շատերը վերցված են Հայաստանի ազգագրության հավաքածուից:

2000թ. վերջնական տեսքի է բերվել և տպագրության պատրաստվել թանգարանի «Պատմաազգագրական հանդես»-ի անդրանիկ համարը պրոֆ. Դերենիկ Վարդումյանի գիտական խմբագրությամբ: Հանդեսը, լույս տեսնելով տարին երկու անգամ, կշարունակի 1916թ. ընդհատված «Ազգագրական հանդես»-ի ավանդույթները: Հանդեսը բաղկացած է առաջաբանից, ազգաբանությանը և ազգային ազատագրական պայքարի պատմությանը վերաբերվող բաժիններից, բանավեճի, վարկածների, գիտական կյանքի նորություններին, մեր երախտավորներին վերաբերող նյութերից, հրատարակված գրականության գրախոսականներից և բովանդակությունից (եռալեզու):

Սարդարապատի ճակատամարտի 80-ամյակին նվիրված՝ հրատարակվել է «Սարդարապատ-80» գրքույկը:

Թանգարանն ունեցել է և ունի մեծ թվով «թանգարանի բարեկամներ», որոնց դերը վիթխարի է թանգարանի հավաքածուների համալրման առումով:

Հայաստանի ազգագրության պետական թանգարանը շարունակում է իր գիտահավաքչական աշխատանքները, վերջին տարիներին կատարվել են կարևոր գնումներ և ստացվել՝ մեծարժեք նվիրատվություններ: Շարունակվում են համալրվել թանգարանի 10.000-ից ավելի անուն ունեցող գրադարանի գրապահոցը: Թանգարանում գործում են թանգարանային արժեքների վերականգնման և պահպանման լաբորատորիաներ:

Իհարկե, թանգարանն ունի նաև իր խնդիրներն ու անելիքները: Վաղուց ժամանակ է հրատարակելու թանգարանի բազմալեզու ուղեցույցը, տպագրության պատրաստ բազմաթիվ ալբոմներն ու կատալոգները: Անհրաժեշտ է վերականգնել թանգարանի Հայկական լեռնաշխարհի մանրակերտը՝ գունալուսային էֆեկտներով: Պետք է շարունակել Սարդարապատի ճակատամարտի տրամապատկեր-դիորամայի, «1918թ. Մայիսյան հերոսամարտերը» հիմնական ցուցադրության կազմակերպման աշխատանքները՝ առանձնապես կարևորելով Սարդարապատի մերօրյա խորհուրդը: Ժամանակն է տեխնիկապես վերազինելու թանգարանը: Թանգարանի առաջնահերթ խնդիրներից են՝ Ինտերնետային էջի բացումը, թանգարանի բուկլետի (եռալեզու) հրատարակումը, հուշահամալիրի ցուցադրական մակերեսի կազմակերպումը: Կարևոր խնդիրներից է նաև թանգարանի հավաքածուներից եզակի ցուցանմուշների մասնագիտական կրկնօրինակումը, սարդարապատյան թեմաներով հուշանվերների արտադրության իրագործումը:

Այսօր Հայաստանի ազգագրության պետական թանգարան են այցելում մեծաքանակ հյուրեր: Դա խոսում է թանգարանի կենսունակության, գործուն աշխատանքային առօրյայի մասին: Թանգարանը հետամուտ է իր առաքելությանը, նպատակներին և խնդիրներին:

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
Թանգարանի գիտքարտուղար

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Մշակութային և քաղաքակրթական տեսակետից զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող թուրքերի ներխուժումը Փոքր Ասիա աղետալի հետևանքներ ունեցավ տեղաբնակ քրիստոնյա ժողովուրդների՝ հույների, արամեալեզու քրիստոնյաների և հայերի համար, որոնց մշակութային և տնտեսական զարգացումը խափանվեց: Այս ամենը չի բացատրվում կրոնական տարբերությամբ, քանի որ արաբական մշակույթը նույնպես նահանջ ապրեց այնքան ժամանակ, որքան այն թուրքական լծի տակ էր գտնվում: Թուրքական գերիշխանության ներքո թուլացավ նաև հունական մշակութային կենտրոնների դերն ու նշանակությունը: Հայաստանում թուրքական տիրապետության ծավալումից հետո հայկական մշակույթը զարգացավ ոչ թե Հայաստանում, այլ նրա սահմաններից դուրս:

Մինչև իրենց բռնագաղթն ու վերջնական բնաջնջումը Փոքր Ասիայի քրիստոնյա ժողովուրդները դարեր շարունակ դատապարտված էին ճնշման, կեղեքման, բռնի դավանափոխման և իրավունքների կամայական ոտնահարման:

Օսմանյան Սուլթանության կողմից նվաճված ժողովուրդների անկախության ձգտումները, և եվրոպացիների դեմ կրած պատերազմական պարտությունները ստիպեցին թուրքերին դիմել նախ՝ պանիսլամիզմին (համաիսլամականությանը) և վերջապես՝ պանթուրքիզմին (համաթուրանականությանը): Թուրքերը համաիսլամականության և համաթուրանականության դրոշների ներքո ցանկանում էին Ադրիական ծովից մինչև Չինական պատ ընկած տարածքներում՝ էթնիկ թուրք ժողովուրդներին միացնելով կազմել մեծ պետություն՝ Օսմանյան Սուլթանության գլխավորությամբ: Բոլոր մյուս ժողովուրդները, որոնք խոչընդոտում էին դրա ստեղծմանը, պետք է թուրքացվեին, բռնի տեղահանվեին կամ բնաջնջվեին: 1894-96թթ. կոտորածները, 1909թ. Կիլիկիայի հայերի ջարդերը և մյուս տեղական նշանակության արյունահեղությունները ապացույցն են նման ծրագրի: Այդ իսկ պատճառով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում (1914-18թթ.) իրականացված Հայոց ցեղասպանությունը ոչ թե եզակի դեպք կամ դժբախտ պատահար էր, այլ խնամքով նախագծված և հետևողականորեն իրականացվող բնաջնջման քաղաքականության բարձրակետ:

Հայոց ցեղասպանության հարցում ո՞րն է եղել Գերմանիայի դիրքորոշումը՝ Մոլթքեի (գերմանացի զորական, 1835-39թթ.) ժամանակներից ի վեր, երբ այդ երկիրն է եղել Թուրքիայի զինվորական խորհրդատուն, քաղաքական հովանավորն ու ռազմական դաշնակիցը:

Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի խնդրագրում, որը 2001թ. ապրիլին հանձնվեց Բունդեսթագի խնդրագրերի հարցերով հանձնախմբին գրված է. «Գերմանիան, լինելով Թուրքիայի ռազմական դաշնակիցը, իր հատուկ դերն է ունեցել թե՛ հայկական, և թե՛ թուրքական պատմության մեջ: Ի տարբերություն Թուրքիայի դեմ պատերազմող երկրների՝ Գերմանիան Թուրքիայի գրեթե բոլոր նահանգների վարչակենտրոններում հյուպատոսություններ է ունեցել, որոնց առկայությունը թույլ էր տալիս Գերմանիային ճշգրիտ փաստագրել հայերի բնաջնջման բոլոր վայրերը: Որոշ գերմանացիներ, որոնք ծառայում էին թուրքական բանակում, մասնակցում էին հայերի դեմ ուղղված զինվորական գործողություններին: Կայսերական Գերմանիայի պետական գործիչները լռելյայն ընդունեցին Հայոց ցեղասպանությունը՝ հանուն «գերագույն շահերի» և Թուրքիայից եկող լրատվությունը ենթարկեցին գրաքննության: Որոշ թուրք ոճրագործներ պատերազմից հետո Գերմանիայի բարձրաստիճան քաղաքական գործիչների օգնությամբ ապաստան գտան Գերմանիայում, թեպետ նրանք 1919թ. Թուրքիայում՝ որպես պատերազմական ոճրագործներ և մարդասպաններ, մահվան էին դատապարտված: Գերմանիան, հրաժարվելով հանձնել ոճրագործներին, արգելք հանդիսացավ օրինական ճանապարհով հայերի ցեղասպանության արծարծման առաջին և միակ փորձին»:

Կցանկանայի հավելել նաև, որ օսմանյան զինվորական իշխանությունները հազարավոր հայ աշխատավորներ էր տրամադրել Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարությանը՝ ստիպողաբար ու անվճար աշխատելու: Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարությունը հանդիսանում էր Արևելքում՝ Գերմանիայի ամենակարևոր ձեռնարկը և պատերազմի օրերին մեծ դեր ունեցավ զենքի ու զինամթերքի տեղափոխման գործում:

Գերմանիայում հասարակության կարծիքը հայերի մասին բացասական էր: Սա է փաստում Վիլհելմ Լիթնի «Պարսկական մեղրամիս» գիրքը: Հեղինակը Թեհրանում կայսերական Գերմանիայի դեսպանատան անդամ էր և 1916թ. Եփրատ գետի ափերով Բաղդադից դեպի հյուսիսարևմուտք՝ Գերմանիա ուղևորվելով՝ ականատես էր եղել Հայոց ցեղասպանությանը: Անտեսելով եղածը՝ նա հայերի բնաջնջումը թուրքերի կողմից համարել է մաքուր հատում: Իր տեսակետը խտացնելով՝ այդ օրերին գերմանական ռազմական և դիվանագիտական շրջանակներում տարածում գտած հակասեմիտական և հակահայկական նախադասություններով՝ ավելացնում է. «Հայերը՝ հակառակ իրենց հնդեվրոպական լեզվին, պատկանում են Մերձավոր Արևելքի ռասային: Նրանք շատ ավելի քիչ են խառնվել արևելյան արյանը, քան հրեաները: Թե՛ հայերի, և թե՛ հրեաների մոտ երկարատև ճնշման հետևանքով առաջացել է տեսակավորող և հակատեսակավորող ազդակ, արդյունքը՝ մարդիկ, որ զզվանք են տածում հրեաների նկատմամբ, առավել զզվանք են զգում հայերի նկատմամբ: Ակնառու է, որ քրիստոնյա միսիոներներից բացի, Արևելքում գտնվող հյուսիսային եվրոպացին բա-

ցահայտ և հաճախ բուռն հակակրանք ունի հայերի նկատմամբ»:

Այս գիրքը լույս տեսավ Վայմառյան Հանրապետության օրոք՝ 1925թ., և պատճառ դարձավ, որպեսզի Հայոց ցեղասպանությունը և գերմանա-թուրքական դաշնակցությունը հանրության կողմից քննության առարկա չդառնա: Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ ցեղասպանությունը չստացավ պահանջված քաղաքական հնչեղություն:

Պրուսական արդարադատության նախարարությունը և արտգործնախարարությունը ջանքեր չխնայեցին հրեշավոր մարդասպանի սպանության դատավարությանն իրենց ցանկացած հունով ուղղորդելու, այնպես որ խնդրի քաղաքական կողմը լայն չափով չպարզաբանվեց (ինչպես վերը նշեցինք): Թալեաթի դին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1941-45թթ.) տեղափոխվեց Թուրքիա և թաղվեց Կ.Պոլսո, այսպես կոչված, հերոսների բլուրում:

Դաշնային Գերմանիայի պատմության մեջ էլ առկա են դեպքեր, երբ արտգործնախարարությունը հանդուրժել և մինչև անգամ հովանավորել է Թուրքիայի ազդեցությունն ու միջամտությունը Գերմանիայի ներքին քաղաքական խնդիրներին: 1985թ. Բրեմեն քաղաքում հայերի, ասորիների և արամեալեզու քրիստոնյաների ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված մի միջոցառման ժամանակ ոստիկանությունը բռնագրավեց այդ առիթով պատրաստված փաստագրական գրքույկները (թուրքական մամուլի հակահայկական թղթակցությունները): 1987թ., երբ Եվրապառլամենտում քվեարկության էր դրված Հայոց ցեղասպանության հարցը, մի երկիր միայն դեմ քվեարկեց՝ այդ երկիրը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն էր: 2001թ. թուրքական դիվանագիտական մարմինները խոչընդոտել են Լեփսիուսի տան վերակառուցումը Պոտսդամ քաղաքում, իսկ այս տարվա սկզբին էլ փորձեցին Հայոց ցեղասպանության մասին հիշատակող նախադասությունը հանել Բրանդենբուրգի երկրամասի դպրոցական դասագրքերից: Ցեղասպանության ճանաչման հանձնախմբի ներկայացրած խնդրագիրը մերժվեց Բունդեսթագի կողմից (խնդրագրի հետ հանձնվել էր 18.000 ստորագրություն, որից 12.000 Թուրքիայի քաղաքացիների ստորագրություններ էին):

Բունդեսթագի պատգամավորներին և քաղաքական գործիչներին թվում է, թե Թուրքիան երբևէ կսրբագրի իր ցեղասպան անցյալը, անհրաժեշտ է միայն նրան ժամանակ տալ: Նկատի ունենալով Թուրքիայի Հայոց ցեղասպանության 90 տարիների ուրացումը՝ միամիտ և կասկածելի է թվում այս դիրքորոշումը: 2004թ. դեկտեմբերի 17-ին Թուրքիայի ԵՄ անդամակցության բանակցությունների ժամանակ Դաշնային Գերմանիայի քաղաքական գործիչների համար ո՛չ ցեղասպանության չընդունման փաստը, ո՛չ փոքրամասնությունների և կանանց իրավունքների ոտնահարումը էական դեր չկատարեցին: Որպես հայ և մարդու իրավունքների պաշտպան կազմակերպության անդամ՝ ի մի բերելով այս ամենը, Գերմանիայի դիրքորոշումը համարում եմ չափազանց քննադատելի և մտահոգիչ: Գերմանիայի քաղաքական գործիչների և դիվանագետների դիրքորոշումը կայսերական ժամանակներից մինչ օրս թուրքամետ է և զիջողական, այդ պատճառով էլ թուրքերին հաջողվում է միջամտել Գերմանիայի ներքին քաղաքական կյանքին: Անդրադառնալով CDU/CSU կուսակցության 2005թ. փետրվարի 22-ի խնդրագրին՝ հարկ եմ համարում հիշեցնել, որ այն վտանգներով լի ծուղակ է, որը առիթ է տալու հետագա բազմաթիվ դժվարությունների: Ցեղասպանության և դեպորտացիայի փոխարեն միտումնավոր օգտագործվում է **ջարդ, կոտորած, արտաքսում, վտարում** բառերը, քանի որ կոտորածը ցեղասպանություն չէ, ինչպես նաև վտարումը՝ դեպորտացիա: Արտաքսված և վտարված անձը, որ երկիր ցանկանա և կամ հնարավոր լինի, կարող է գնալ, իսկ դեպորտացիայի ենթարկվածը այդ հնարավորությունը չունի, ուզենա, թե ոչ, տարվում է պատժավայր:

Մամուլից տեղեկացանք, որ «Կանաչներն» ու «SPD»-ն (կառավարություն կազմող կուսակցությունները) ուզում են միանալ այդ խնդրագրին, միայն ոչ այդ խստությամբ և այն էլ մայիսից հետո, երբ կանցլերը կվերադառնա Թուրքիա կատարած իր այցելությունից: (Այս միջոցին կանցլերը վերադարձել է Գերմանիա և արդյունքն էլ մամուլից բոլորին հայտնի է:)

Բեռլինի Սենատի կողմից լիազորված օտարերկրացիների միգրացիայի և ինտեգրացման հարցերով զբաղվող վարչությունը հանձնարարել էր դոկտոր Թեսսա Հոֆմանին գրել մի գրքույկ՝ «Հայերը Բեռլինում-Բեռլինը և հայերը» խորագրով: Գրքի լույս ընծայումը հետաձգվել է մինչև այս տարվա ապրիլ ամիսը, քանի որ գրքույկում արծարծված է Հայոց ցեղասպանության հարցը: Ցավալի և անհանդուրժելի է, որ ցեղասպանությունից 90 տարի անց էլ Գերմանիայի օրենսդիր մարմինները համարձակություն չունեցան հետևել 17 երկրների օրինակին և ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ համաձայն ՄԱԿ-ի կոնվենցիայի: Պատճա՞ռը. դարերից եկող գերմանա-թուրքական ավանդական բարեկամությունն է՝ Գերմանիան Թուրքիայի դաշնակիցն էր Առաջին համաշխարհային պատերազմում և դաշնակիցն է նաև մեր օրերում՝ NATO-ի ուխտում:

ԺԻՐԱՅՐ ՔՈՉԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր
Ապրիլ, 2005

Օգտագործված գրականության ցանկ.

Dadrian Vahakn: Children as victims of Genocide: the Armenian case. “Journal of Genocide Research” 2003,5(3) September, S. 424

Litten Wilhelm: Persische Flitterwochen, 1926, Berlin, S. 293-335

Հայկական հարց, Հանրագիտարան, Երևան, 1996

Hofmann Tessa: “Verfolgung, Vertreiboung und Vernichtung der Christen Im Osmanishen Reich, 1912-1922” , Lit Verlag, Münster, 2004

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

«Ցեղասպանության ճանաչման հանձնախումբը» նախագահ Թեսսա Հոֆմանի նախաձեռնությամբ դատական հայցով դիմել է Բեռլինի տարածքային դատախազություն՝ Բեռլինի թուրքական համայնքի նախագահ Թաչիդին Յաքկինի դեմ քրեական գործ հարուցելու պահանջով: Վերջինիս ղեկավարությամբ մարտի 15-ին մի խումբ գերմանաբնակ թուրքեր ծաղկեպսակ են դրել Բեռլինի Շառլոթենբուրգի շրջանի Հարդնբերգ փողոցում՝ ենթադրելով, որ 1921թ. մարտի 15-ին այնտեղ է սպանվել Թալեաթ փաշան: Իրականում Սողոմոն Թեհլերյանը նրան գնդակահարել է Հարնդբերգ և Ֆասանեն փողոցների խաչմերուկում: Ծաղկեպսակը դրվել է 200 մ հեռավորության վրա Շթայնպլաց հրապարակում գտնվող Ֆաշիստական Գերմանիայի զոհերի հիշատակին կանգնեցված հուշակոթողին: Իր ելույթի ավարտին Յաքկինը գերմաներենով ավելացրել է. «Մենք ողբում ենք մեր նահատակի հիշատակը և դատապարտում՝ մարդասպաններին»:

Թեսսա Հոֆման

Թ. Հոֆմանը իր բողոքում նշել է, որ իր կարծիքով «դատապարտում ենք մարդասպաններին» ասելով թուրքական համայնքի նախագահը նկատի ունի Գերմանիայում բնակվող 35-40 հազար հայերին, որոնց անվանում է մարդասպան, սպառնում է նրանց և թուրքերին հրահրում հայերի դեմ:

Դատապաշտպան Սվեն Լեստիկովի (Sven Leistikow) դիմումը ուղղված է Բեռլինի տարածքային դատախազություն՝ քրեական գործի հարուցման պահանջով.

Իմ մանդատով և կից լիազորագրով դիմում եմ ներկայացնում Թաչիդին Յաքկինի՝ Բեռլինի թուրքական համայնքի նախագահի դեմ քրեական գործի հարուցման պահանջով՝ ազգամիջյան թշնամանք հրահրելու մեղադրանքով:

Թուրքական համայնքի նախագահ Թաչիդին Յաքկինը 2005թ. մարտի 15-ին կազմակերպել է հուշ-միջոցառում՝ մեծարելու օսմանյան Թուրքիայի նախկին ներքին գործոց նախարար (մինչև 1918թ. հոկտեմբերի վերջը), մեծ վեզիր Մեհմետ Ալի Թալեաթ փաշային նրա սպանության օրվա կապակցությամբ: Նույն օրը՝ Շառլոթենբուրգի շրջանի Շթայնպլաց հրապարակում, 20 թուրք մի ծաղկեպսակով մեծարեցին Թալեաթին՝ օսմանյան վերջին ներքին գործոց նախարարին:

Ոճրագործի մեծարումը տեղի ունեցավ նացիոնալ-սոցիալիստների զոհերին նվիրված հուշակոթողին ծաղկեպսակ դնելով: Ժապավենին գրված էր. «Թալեաթ փաշան սպանվել է 1927թ. մարտի 15-ին մի հայի ձեռքով»: Այնտեղ Յաքկինը թուրքերեն մի ճառ է ասել, որն ավարտել է հետևյալ խոսքերով. «Մենք ողբում ենք մեր նահատակի հիշատակը և դատապարտում ենք մարդասպաններին»: Միջոցառման թուրք մասնակիցները բազմիցս կրկնել են այն միտքը, թե հայոց նկատմամբ ոչ մի ցեղասպանություն էլ տեղի չի ունեցել:

Բացակա էր մի նուրբ զգացողություն. ծաղկեպսակ դնել Հայոց ցեղասպանությունը կազմակերպողի՝ Թալեաթի հիշատակին, այն էլ մի վայրում, որտեղ ոգեկոչում են նացիոնալ-սոցիալիստների զոհերի հիշատակը: Այսպիսով՝ Թ. Յաքկինը այդ միջոցառման միջոցով անարգել-պղծել է այդ զոհերի հիշատակը: Որպեսզի ճիշտ ընկալվի արարքի բուն էությունը, ցանկանում եմ մի համեմատություն անել. նացիոնալ-սոցիալիստների զոհերի հուշակոթողին Թալեաթին հարգելու համար մի ծաղկեպսակ դնելը համազոր է Հիտլերի և Հայդրիխի հիշատակին նույն վայրում ծաղկեպսակ դնելուն:

Թալեաթի կազմակերպած 1.5 միլիոն հայերի ցեղասպանությունը 1915-16թթ. օսմանյան Թուրքիայում օրինակ է ծառայել ֆաշիստական Գերմանիայի ղեկավարների համար՝ նացիստական բռնապետության օրոք անպատիժ իրականացնելու հրեաների Հոլոքոստը:

1915թ. ապրիլի 14-ին երիտթուրքերի ազգայնամոլ ռեժիմը ձերբակալել է մայրաքաղաքի բոլոր պոլսահայ մտավորականներին, որին հետևել է հայ ժողովրդի ոչնչացումը հաջորդող 18 ամիսների ընթացքում: Շատերին գնդակահարել են տեղում, ուրիշներին առանց ջրի ու սննդի կուտակել՝ մահվան երթերում և աքսորել սիրիական անապատներ: Համաձայն Կոստանդնապոլսի Գերմանիայի դեսպանատան 1916թ. հոկտեմբերի 4-ի տվյալների՝ 2.5 միլիոն հայությունից շուրջ 1.5 միլիոնը զոհվել է: Թալեաթը, որն այդ ժամանակ կայսրության ներքին գործոց նախարարն էր, այդ ցեղասպանության գլխավոր կազմակերպիչն ու պատասխանատուն էր: Նա 1919թ. հուլիսի 5-ին օսմանյան հատուկ զինվորական դատարանի կողմից ճանաչվել է հանցավոր և դատապարտվել՝ մահվան: Դատավճիռը հրապարակել են նրա բացակայությամբ, քանի որ Թալեաթը, ինչպես նաև նրա մյուս հանցակիցները, փախել էին Գերմանիա և ապաստանել Բեռլինում:

Թ. Յաքկինի արարքը ժողովրդական մասսաներին հրահրելու մի փորձ է: Հասարակական կարգը խանգարելով և ծաղկեպսակ դնելով վերը նշված վայրում՝ օրենքի կողմից դատապարտված պատերազմի ոճրագործի ու մարդասպանի հիշատակին՝ պատճառ է դարձել, որ հասարակական կարծիքը Գերմանիայում բորբոքվի: Դա պատճառ է, որ ժողովրդավարական շրջանակները իրենց վիրավորված զգան իրենց պատմական ընկալումներում:

Ցեղասպան ոճրագործի հիշատակը «հարգելն» ու «մեծարելը» նշանակում է Գերմանիայում ապրող թուրք ժողովրդավարների մեջ ատելություն սերմանել հայերի նկատմամբ: Ոճրագործ-վարչապետին սպանող հայ երիտասարդը՝ Սողոմոն Թեհլերյանը, գերմանական երդվյալների դատարանի կողմից 1921թ. հունիսի 3-ին ազատ է արձակվել: Թեպետ ծագումով հայ՝ նա Թուրքիայի քաղաքացի էր: Նա մի անձ էր, բայց ոչ «մի հայ»: Ինչպես Թ. Յաքկինն է ասում՝ «Մենք դատապարտում ենք մարդասպաններին»: Կոչը հստակեցնում և ցույց է տալիս այդ պարոնի նպատակը. նա հրաժարվում է հստակ անվանել ծագումով հայ, թուրքիայի քաղաքացի «մեղավորին», այլ ձգտում է նրա արարքը վերագրել «մեղավոր հայերին»: Նա գիտակցաբար ատելություն է հրահրում հայերի նկատմամբ: Շուրջ 40.000 հայ է ապրում Գերմանիայում. սա ոտնձգություն է մարդու արժանապատվության նկատմամբ, հատկապես, երբ իրենց պապերի (հայերի-խմբ.) մարդասպանը մեծարվում է ոմն Յաքկինի կողմից: Նա, իր ճառում հատուկ շեշտադրությամբ մեծարելով ցեղասպանության կազմակերպչին, ուրանում է Հայոց ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել Թուրքիայում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Բեռլին, 10.05.2005թ.

ՆՇՎԵՑ ՊՈՆՏՈՍԻ ՀՈՒՅՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 83-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Սույն թվականի մայիսի 19-ին կազմակերպվեց երթ դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ Պոնտոսի հույների 1922թ. ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված: Հայոց ցեղասպանությունից մեկ տասնամյակ էլ չէր անցել, երբ 1922թ. «աշխարհիկ» Թուրքիան Պոնտոսում կոտորեց շուրջ 450.000 հույն: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Անտոնիոս Ֆլավիանոսը, դեսպանատան ռազմական կցորդը և այլ աշխատակիցներ, Հայաստանում գործող հասարակական և քաղաքական կազմակերպությունների, ազգային համայնքների ներկայացուցիչներ.

«Հայ Ազգայնական Ճակատ» դաշինքից՝ («Մեկ ազգ» կուսակցություն, «Հայ ազգայնական միություն» և այլն)՝ Ռ. Գևորգյանց, Գ. Թամազյան, «Ուխտ Արարատի» հասարակական կազմակերպությունը՝ Տ. Փաշաբեզյան, Վ. Սիսլյան, «Միտք» երիտասարդական վերլուծական կենտրոն՝ Հաբեթ Մադոյան, «Գարեգին Նժդեհ» հայրենասիրական միություն՝ Վ. Տարխչյան, «Հայ հեղափոխական դաշնակցություն»՝ Լ. Մկրտչյան, Հ. Կարապետյան, ԱԻՄ՝ Պ. Հայրիկյան, «Հայաստանի Հանրապետական» կուսակցության թև՝ է. Շարմազանով, Հայաստանի և ԼՂՀ-ի հույների միություն «Պատրիդա»՝ է. Փոլադով, Հայաստանի հրեական համայնքը՝ Ռ. Վարժապետյան, Հայաստանի «Քուրդիստան» կոմիտե՝ Չ. Մստոյան, Հայաստանի ասորական համայնք, Հայաստանի հույների «Պոնտոս» միություն, Շենգավիթի ԵԿՄ, Երևանի ճարտարագիտական համալսարանի ուսանողադասախոսական կազմի ներկայացուցիչներ, Հայաստանի «Մարդու իրավունքների պաշտպան»-ի ներկայացուցիչ:

Բացման խոսքով հանդես եկավ Ցեղասպանության թանգարանի տնօրեն Լ. Բարսեղյանը: Այնուհետև ելույթ ունեցան ՀՀ-ում Հունաստանի դեսպանը, «Պոնտոս» միության նախագահը, Հայաստանի քրդական համայնքի ներկայացուցիչը, ասորական համայնքի ներկայացուցիչը, վերջում է.Փոլադովը կարդաց «Պատրիդա» կազմակերպության հայտարարությունը, որը ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը.

Սիրելի՛ հայրենակիցներ,

Հանցագործ երկիրը, որ կոչվում է Թուրքիա, գրավելով Կ. Պոլիսը, իր ոճրագործությունը սկսեց ժողովուրդներից՝ գողանալով նրանց պատմությունը, հոգևոր և մշակութային արժեքները, ապա անցավ Բյուզանդիայի հույն և հայ բնակչության մասսայական ոչնչացմանը: Իմաստ չունի թվարկել այդ հանցագործությունների ամբողջական ցուցակը, այն շատ մեծ է: Բավական է նշել դրանցից մի քանիսը. 1822թ-ին հայտնվեցին առաջին տվյալները Խիոս կղզում հույների մասսայական ոչնչացման մասին, 1915-16թթ. սպանվեցին պոնտոսցի 300.000 հույն, 1,5 մլն-ը տեղահանվեցին, 1919-22թթ. թուրք քեմալականները շարունակեցին հայերի և հույների ծրագրավորած ոչնչացումը՝ ըստ գենետիկ հատկանիշի՝ վերացնելով քրիստոնյա ազգաբնակչությանը: Այդ տարիներին Կիլիկիայում և Զմյուռնիայում սպանվեցին ավելի քան 250.000 հայ և հույն:

Մասնագետների պնդմամբ հարյուրամյակի ընթացքում կոտորվել է 16-26 մլն հայ և հույն: 1917-25թթ. տեղահանվել ու սպանվել է 2 մլն մարդ, իսկ ոտնձգությունները քրդերի նկատմամբ շարունակվում են մինչ օրս: Կոտորվել են ասորիներ, եզդիներ, արաբներ, բուլղարներ, սերբեր և այլ ազգությունների հազարավոր մարդիկ բռնի դավանափոխման են ենթարկվել:

Այսօր թուրքերը, ինչպես հարյուրամյակներ առաջ, բնակվելով Բյուզանդիայի տարածքում՝ գրեթե նույնանման սցենարով գնում են դեպի իրենց նպատակը. բնակչությանը կենտրոնացնելով Եվրոպայի սրտում՝ հետագայում Եվրոպական քաղաքակրթությունը գրավելու և այն վերացնելու համար: Այս գաղափարը ուներ իր պատմությունը և արմատներով գնում է դեպի դարերի խորքը:

Հայրենակիցնե՛ր, ինչպես գիտենք 20-րդ դարի 2-րդ կեսը դարձավ մեղքերի թողության ժամանակաշրջան: Չնայած որ միջազգային հանրությունը (փաստերի վրա հիմնված) փորձում է համոզել Թուրքիային ընդունել իր մեղքը, սակայն՝ վերջինս կտրականապես հրաժարվում է իր չարագործությունից, ավելորդ անգամ ապացուցելով, որ շարունակում է իր ոճրագործությունը: Դրա համար էլ պատմական այդ մեծ հանցագործը՝ Օսմանյան Թուրքիան, պարտավոր է կանգնել համաշխարհային հանրության դատի առաջ: Մենք կոչ ենք անում մեր սերունդներին հետամուտ լինել, որ մեր ժողովուրդների հանդեպ ոճրագործություն կատարած Թուրքիան ընդունի իր մեղքը. վերադարձնի հոգևոր, պատմական, մշակութային և մյուս արժեքները իրենց իսկական տերերին:

19.05.2005թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ ՋԱՎԱԽՔԻ ՄԻՋՈՑՈՎ

2005թ. ապրիլի 6-ին Բաքվում կազմվեց արձանագրություն Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթգծի շինարարության մասին: Այս իրադարձությունը մոտ ապագայում կարող է բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի համար: Ավելին, այն իր նշանակությամբ կարող է համեմատվել նույնիսկ 1993թ. Թուրքիայի կողմից Հայաստանի հետ սահմանի փակման կամ 1992թ. աբխազական երկաթգծի շրջափակման փաստի հետ:

Դեռ անցյալ տարվա դեկտեմբերի 29-ին վրացական, ադրբեջանական և թուրքական կողմերը ստորագրեցին համատեղ պայմանագիր երկաթգծի նախագծի վրա աշխատելու վերաբերյալ: Այժմ այդ նախագիծը սկսում է իրական ուրվագծեր ստանալ: Տեղեկություններ կան վրացական կողմից 110 մլն դոլլար Վրաստանի երկաթուղիների նախարարությանը հատկացնելու մասին Ախալքալաք-Կարս երկաթգծի շինարարության համար, որի 20 կիլոմետրը պետք է անցնի վրացական տարածքով՝ մինչև Թուրքիայի սահմանը: Միաժամանակ թուրքական «Ջունգիզ հոլդինգ» և «Օքան հոլդինգ» ընկերությունները Վրաստանի կառավարությանը ներկայացրեցին ավելի քան 150 մլն դոլլար արժողությամբ նախագիծ: Ի հայտ եկան տեղեկություններ, թե ԱՄՆ Պետդեպարտամենտի «Միլենիում» ծրագրի իրականացման գործում Վրաստանի ներքաշման շնորհիվ զգալի գումարներ են հատկացվել Թբիլիսի-Նինոծմինդա ավտոմայրուղու շինարարության համար՝ հետագայում այն մինչև թուրքական սահման հասցնելու հեռանկարով: Ենթադրվում է, որ ավտոմայրուղին կանցկացվի երկաթուղագծին զուգահեռ:



Այս նախագիծը հեռանկարի տեսակետից առաջնակարգ էր համարվում հայաբնակ Ջավախքի սոցիալ-տնտեսական զարգացման առումով, բայց նկատի չեն առնվում մի շարք կարևոր գործոններ: Հաշվի առնելով Ջավախքի հայ բնակչության ավելի սերտ առևտրատնտեսական կապերը Հայաստանի հետ՝ երկրամասի վերականգնման համար առավել իրական և արդյունավետ նախագիծ կարող էր լինել Նինոծմինդան հայկական սահմանի հետ կապող 20 կիլոմետրանոց հատվածի վերանորոգումը կամ կոնկրետ նախագծի իրականացումը տարածաշրջանի տնտեսության արտադրական բնագավառների, առաջին հերթին՝ գյուղատնտեսության վերականգնման ուղղությամբ: Բացի այդ, ոչ ոք չի խոսում հայաբնակ երկրամասի համար քաղաքական բացասական հետևանքների մասին, եթե կյանքի կոչվեն այդ մասշատաբի հաղորդակցության նախագծերը: Օրինակ՝ Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխության իրական սպառնալիքը, հայտնի է, որ Ջավախքը յուրօրինակ բուֆեր է Թուրքիայի և Վրաստանի Քվեմո-Քարթլիի տարածաշրջանի, հոծ բնակեցված ադրբեջանական շրջանների և անմիջապես Ադրբեջանի միջև: Բնական է, որ նշյալ նախագծի իրականացման դեպքում հիմնական տնտեսական օգուտը կստանան Ադրբեջանն ու Թուրքիան: Նախագիծը, միաժամանակ, տվյալ երկրներին թույլ կտա հաստատել իրենց իրական քաղաքական ազդեցությունը տարածաշրջանում: Դրան ավելացնենք նաև վերջին շրջանում նոր հնչեղություն ստացած թուրք-մեսխեթների վերադարձի հիմնախնդիրը, և կամբողջանա թուրքերի կողմից Վրաստանի հարավարևելյան հատվածի շրջափակման պատկերը: Այս համատեքստում ակնհայտ է վրացական իշխանությունների կարճատեսությունը, որոնք չեն գիտակցում այդ սպառնալիքը վրացական պետության համար:

Դժվար չէ գուշակել, որ Կարս-Ախալքալաք և Թբիլիսի-Նինոծմինդա նախագծերի իրականացման դեպքում հայկական երկաթգծերի և ավտոճանապարհների կարիքը վերանում է, շրջանը փակվում է: Փաստորեն՝ «Ջավախքի միջոցով» Հայաստանի աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական մեկուսացումը կարող է դառնալ իրականություն:

Մյուս կողմից, Վրաստանի պաշտպանության նախագահը ԻՏԱՌՏԱՍ-ին ասել է, որ իր երկիրը պատրաստ է չեզոքացնելու Ջավախքի «հակավրացական քարոզչության մեջ ներքաշված խմբերին»: Իրակլի Օքրուաշվիլին ասել է, որ Վրաստանի կառավարությունը չի հաշտվի մեկ այլ անջատողական կենտրոնի ստեղծման գաղափարի հետ և կհետևի, որ ռուսաստանյան ռազմակայանի դուրսբերումից հետո տեղի բոլոր բնակիչները ապահովվեն աշխատատեղերով: Բարձր մակարդակով վրաց-ռուսական բանակցություններից հետո Վրաստանի արտգործնախարարը BBC-ին ասել էր, որ Ախալքալաքից և Բաթումիից ռուսական ռազմակայանների դուրսբերումը կսկսվի 2005թ. վերջին և կավարտվի 2003թ.: Արտգործնախարար Սալոմե Զուրաբիշվիլին հավաստիացրել է, որ Ախալքալաքի հայերը, ովքեր ծառայում են ռուսական բանակում, կապահովեն աշխատատեղերով: Նախագահ Սահակաշվիլին ևս հավաստիացնում է, որ հայերը անգործ չեն մնա:

Օրերս Վրաստանի պատրիարքն իր նստավայրում ընդունեց ՀՀ ԱԺ-ի նախագահ Արթուր Բաղդասարյանին: Պատրիարքը, փաստելով, որ շատ կարևոր է բարեկամական ելակետից հարաբերությունների մշակումը, հիշատակեց, որ մեր նախնիները եղբայրական հարաբերություններ են ունեցել: Սակայն Վրաստանի տարած-

քում գտվող հայկական եկեղեցիների պատմական հիմքերը համատեղ ուսումնասիրելու առաջարկով՝ ըստ էության, կասկածի տակ առավ նրանց պատկանելությունը:

Վերջին տարիներին, վրաց ուղղափառ եկեղեցին իրար հետևից «սեփականաշնորհում է» ու «վրացական ծեսով օծում է» հայկական եկեղեցիները, և երբ վիրահայությունը փորձում է ընդդիմանալ, վրաց հոգևորականները բացատրում են, որ նախկինում այդ եկեղեցիները եղել են վրացական, հարուստ հայերը գնել են և վերածել հայկականի: Փաստորեն՝ վրաց պատրիարքը հայկական եկեղեցիները զավթելու նոր արդարացում է գտել:

Ջավախք. Մերենիայի ավերակները

Անցած տարիներին Վրաստանում յուրացվել են շուրջ 30 հայկական եկեղեցիներ, ևս 9-ի խնդիրը վիճաբանության առարկա է: Ա. Բաղդասարյանը անհրաժեշտ է համարել քննարկման նյութ դարձնել այդ 9-ը եկեղեցիների խնդիրը, որոնց վրացականացման վտանգը առկա է:

1700 տարիների ընթացքում հայերը տասնյակ հարյուրավոր եկեղեցիներ են կառուցել ոչ միայն պատմական հայրենիքի տարածքում, այլև նրա սահմաններից դուրս: Դրանց մի մասը ժամանակի ընթացքում ավերել կամ յուրացրել են այլազգիները:

Վիրահայության կարևոր խնդիրներից է նաև կրթությունը: Վրաստանի տարածքում գործող 150 հայկական դպրոցներում սովորում են շուրջ 20.000 աշակերտ: Հայոց լեզու և գրականություն ուսուցանվում է հայաստանյան դպրոցի ծրագրով: Մինչդեռ հայ ժողովրդի պատմության դասավանդումը դուրս է մնում, քանի որ վրացական իշխանությունը վիճելի կետեր է նկատում դասագրքում: Վրացահայ ուսուցիչները առաջարկում են դասավանդումը սկսել տարաձայնություն առաջացնող պատմական հատվածներից հրաժարվելու գնով: Խնդրում են կարևորել հայ և վրաց մասնագետների համատեղ կազմելիք պատմության դասագիրքը:

Ի տարբերություն Ջավախքի դպրոցների՝ Թբիլիսիի հայկական դպրոցներում ուսուցման ընդհանուր մակարդակի բարելավման կարիք կա: Շատ հայեր տեղի հայկական դպրոցների ցածր մակարդակի պատճառով նախընտրում են ռուսական կրթություն ստանալ, և այս փաստը վիրահայությունը տագնապահարույց է համարում: Բուհական ընդունելության քննություններն այսուհետ Վրաստանում անցկացվելու են միայն վրացերենով: Սա էլ իր հերթին վտանգում է հայերենի բուհական ուսուցման հնարավորությունը: Կրթության ոլորտի այսպիսի խնդիրներ առաջադրեցին հայ համայնքի ներկայացուցիչները ՀՀ ԱԺ նախագահին:

Որտեղ հաստատվում են հայերը, առաջինը եկեղեցի և դպրոց են կառուցում: Վրաստանում հայկական եկեղեցիների յուրացմանը կարող է հետևել հայկական մշակութային և կրթական օջախների օտարումը հայությունից: Իսկ երբ չկա հայկական եկեղեցի և դպրոց, հայությունը վտանգված է:

Եթե վրաց պետությունը շարունակի իրագործել խտրական վերաբերմունք հայերի նկատմամբ, ապա վիրահայությունը ստիպված կլինի պաշտպանել իր իրավունքները և այդ դեպքում կսրվեն հակասությունները իշխանությունների և վիրահայության միջև: Հնարավոր է, որ վրացիները հենց դրան էլ ձգտում են:

ԱՐՇԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
3-րդ կուրսի ուսանող

ՀԱԲ-Ը ԴԱՐՁԱՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Արցախյան ազատագրական պայքարի ակունքներում եղած Հայոց ազգային բանակ (ՀԱԲ) կազմակերպությունը հունիսի 4-ի առաջին ընդհանուր ժողովում վերակազմավորվեց Հայոց ազգային բանակում հասարակական կազմակերպության: ՀԿ-ի առաջին համագումարում միաձայն քվեարկությամբ հետմահու պատվավոր նախագահ ընտրվեց ՀԱԲ-ի հիմնադիր, գլխավոր հրամանատար Ռազմիկ Վասիլյանը: Ընտրվեցին վարչության 21 անդամները, նախագահ ընտրվեց Արամ Թորգոմյանը՝ «Արամո» ջոկատի հրամանատար Արամոն, ինչպես կոչում են մարտական ընկերները՝ հարգանք տածելով նրա անցած մարտական ուղու նկատմամբ:

Կազմակերպության խնդիրներից է մարտական գործողություններին մասնակցած անձանց սոցիալ-տնտեսական հարցերի լուծումը: Այդ նպատակով կազմակերպությունը խորհրդարան է ներկայացնելու «Մարտական գործողությունների մասնակցի մասին» օրինագիծը:

Համագումարի երկրորդ մասում առաջադրվեց ևս մեկ խնդիր. «Հայ ազգի և նրա պետականության պաշտպանության կոորդինացիոն խորհրդի» ստեղծման առաջարկը: Նշվեց, որ արդեն շուրջ 80 կազմակերպություններ տվել են իրենց համաձայնությունը այդ խորհրդի ստեղծմանը աջակցելու և նրա աշխատանքներին մասնակցելու համար: Կանոնակարգում նշվում են խորհրդի հետապնդած հիմնական խնդիրները, որոնցից են մասնավորապես՝ «ՀՀ-ում պաշտպանության նախարարության հզորացմանն աջակցություն» և «Արտաքին իրական վտանգի դեպքում՝ աշխարհազորայինի արագ և կազմակերպված ձևավորում»:

Համագումարին մասնակցում էր «Ուխտ Արարատի» կազմակերպության պատվիրակությունը:

1600–ԱՄՅԱ ԳՐԵՐԸ 1600 ՄԵՏՐ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

2005-ի մայիսի 28-ին տեղի ունեցավ աննախադեպ միջոցառում՝ «Միասնության շուրջպար»: Նպատակը՝ հարյուր հազարավոր հայերի միասնության համախմբումն էր Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռան՝ Արագածի շուրջ: Ինչպես օրը, այնպես էլ ամիսը պատահական չէին ընտրված: Չէ՞ որ մայիսը հայերի համար շրջադարձային է եղել թշնամու դեմ տարած փառավոր հաղթանակների առումով. հիշենք՝ Ավարայրի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հաղթանակները, Մեծ հայրենականում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը, Շուշիի ազատագրումը:

Հայրենասիրության կանթեղը ճառագում էր Արագածի լանջերից: Դեպի շուրջպարի՝ ոգևորված և խանդավառությամբ ոտքի են ելել մեծ ու մանուկ: Կարծիքները բազմաթիվ են ու բազմազան, անկեղծ են ու հավատով լեցուն:

Մասնավորապես, երիտասարդ մի հայուհի նկատեց.

Նիկոլ Աղաբաբյան, «Մենք», 2002թ.

«Մենք կրկին ցույց տվեցինք, որ երբ պետք է, կարող ենք համախմբվել»:

Մի հայ երիտասարդ էլ ոգևորությամբ ասաց. «Կարծում եմ, հաջորդ շուրջպարը կարող ենք կազմակերպել Արարատի լանջերին: Քսան տարի առաջ, եթե մեկն ասեր, թե Արցախը մերն է լինելու, ո՞վ կհավատար»:

«Միասնության շուրջպարի» կազմակերպչական աշխատանքի հոլովույթում տեղի ունեցավ ևս մի նշանակալի միջոցառում: Մայիսի 21-ին՝ Աշտարակ - Ապարան մայրուղու 20-րդ կիլոմետրին՝ բաց երկնքի տակ, բացվեց մի աննման թանգարան «Տառերի պուրակ», որը նվիրվեց հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին, և որը կդառնա հայության համար մի յուրօրինակ սրբավայր, դեպի իրեն կձգի բազմաթիվ զբոսաշրջիկների:

Պուրակի ստեղծման գաղափարը «Նիգ Ապարան» հայրենակցական միությանն էր: Հուշարձանը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մետր բարձրության վրա՝ խորհրդանշելով այբուբենի ստեղծման 1600-ամյակը: Տառերը ստեղծվել են Արմավիրի սև և վարդագույն տուֆից, դրանց բարձրությունը 1.5 մետր է, լայնությունը՝ 90 սմ, հաստությունը՝ 30 սմ: Ի դեպ, նախագծի հեղինակ-ճարտարապետ Ֆրեդ Աֆրիկյանը տառերի չափերը ընտրել է այնպես, որ դրանք ներդաշնակ լինեն տեղանքին: Տառերը նայում են դեպի հյուսիս-արևելք՝ Սաղմոսավանք և Օշական, որտեղ ամփոփված է Մեսրոպ Մաշտոցի աճյունը: Ամեն տառի տակ Օշականից բերված սրբազան հող է ամփոփված:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԱԳԱԾ. ասքապահ են հայոց լեռները, որն էլ փորփրես՝ նախ ասք է դուրս գալիս: Բայց դե լեռ էլ կա, լեռ էլ: Լեռ կա մի ասք ունի, լեռ կա՝ հազար ու մի: Ասում են՝ Արագածն ինը հարյուր իննսունինն ասք ունի: Չեն կլորացնում, ինը հարյուր իննսունինն ուրիշ է, հազարն՝ ուրիշ, որովհետև մեր նախնիներն ասում էին, թե ինը հարյուր ինսունինը ճշմարիտ թիվ է, հազարը՝ ճշմարտանման:

Երբ Արա Գեղեցիկն ընկավ Շամիրամի դեմ մղած կռվում, հայերն իրարով անցան: Մտահոգությունից մեկն էլ դարձավ Արա Գեղեցիկի գահը՝ հայոց սրբազան սոսու փայտից պատրաստված, ադամանդազարդ արքայական աթոռը թշնամու աչքից հեռու պահելը: Արա Գեղեցիկի մերձավորները շատ մտմտացին և որոշեցին գահաթոռը տանել ու թաքցնել Մասիսի դիմաց գտնվող քառագագաթ լեռան վրա: Շամիրամի զորականները հոտն առան և սկսեցին ոտքի տակ տալ հսկա լեռան բոլոր լանջերը: Բայց ոչ մի շամիրամական չկարողացավ ոտք դնել չորս գագաթներին, որովհետև հենց այդ օրերին լեռան վրա առաջին անգամ ձյուն տեղաց և ծածկեց ամեն բան: Ձյունն այնպես կերպարանափոխեց լեռան կատարը, որ գահաթոռի տեղը կորցրին նաև հայերը:

Ժամանակներ անցան և մոռացության ձյան տակ շատ շամիրամներ ծածկվեցին: Բայց մարդիկ ո՛չ Արա Գեղեցիկին մոռացան, ո՛չ էլ նրա ադամանդակուռ գահաթոռը: Նայում էին դեպի քառագագաթ լեռն ու ասում՝ այնտեղ Արայի գահն է: Արայի գահ, Արայի գահ ասելով՝ լեռը կոչվեց «Արագահ», որը հետո հնչյունափոխվեց ու դարձավ «Արագած»:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Սոսյաց անտառ», Երևան, 1988 թ.

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ (1988-1994թթ.) ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այսպես է կոչվում ստվարածավալ այն բաժինը, որը տեղ է գտել «Ղարաբաղյան պատերազմ. (1988-1994թթ.)» նորաստեղծ հանրագիտարանում:

Շարժման ազգային ոգին, ղարաբաղյան մարտերի հերոսապատումը, ազատամարտիկների սխրանքները, ապրողների կենարար կամքը և ուժը իրենց վառ գեղարվեստական մարմնավորումն են գտել հայ կոմպոզիտորների, գուսանների խմբերգային, սիմֆոնիկ և այլ ժանրերի ստեղծագործություններում:

Գաղափարական և իմաստային բովանդակությամբ ղարաբաղյան պատերազմի թեման արտացոլող հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները բաժանվում են հիմնականում երեք ժանրի՝ առաջին՝ ռազմական–հերոսական (քայլերգեր), երկրորդ՝ հերոսապատման (հիմներ, ձոներգեր), երրորդ՝ խոհաքնարական, կենցաղային (երգեր, խմբերգեր): Որպես ընդհանուր գաղափարական մեկնակետ՝ այս երեք ժանրի ստեղծագործությունները համակված են հայրենասիրական շնչով:

Արցախին նվիրված երգերը սիրված և ճանաչված են համայն հայության կողմից: Դրանցում իր ուրույն տեղն ունի Ռոբերտ Ամիրխանյանի «Արևի երկիր» երգը: Հիշատակելի են նաև Մարտին Վարդազարյանի, Գեղունի Չթչյանի, Ստեփան Շաքարյանի, Արզաս Ոսկանյանի, Ռոբերտ Պետրոսյանի, Արեգ Լուսինյանի ստեղծագործությունները: Հանրագիտարանում դրանցից յուրաքանչյուրի ընդգրկումը կարևոր նշանակություն ունի:

Իրականացնելով հիշյալ Հանրագիտարանի՝ «Ղարաբաղյան պատերազմի արտացոլումը երաժշտության մեջ» բաժինը, պիտի նշեմ, որ այն չափազանց կարևոր մաս է կազմում: Չէ՞ որ ղարաբաղյան թեման և ղարաբաղյան գոյամարտը սոսկ ռազմական գործընթաց չեն: Թեման իր բազմակողմանի արտացոլումն է գտել նաև հայ մշակույթի տարբեր բնագավառներում՝ գրականության, թատերարվեստի, կինոարվեստի, գեղանկարչության, ինչպես նաև երաժշտության մեջ:

Հայտնի ճշմարտություն է՝ «Ազգային ոգին հաստատվում է երգի թևերով»:

Եվ «Ղարաբաղյան պատերազմ. (1988-1994թթ.)» հանրագիտարանի երաժշտական բաժինը Արցախյան շարժմանը ձոնված երգերի վեհ շտեմարան է:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

Արևի երկիր

Երազ իմ երկիր հայրենի,
Հոգուդդ շատ, հուշդ մեջ
Քարքարոտ երկիր:
Ես մի թուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արքի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր:
Հայաստան, Հայաստան, Հայաստան,
Երազ իմ երկիր հայրենի,
Հոգուդդ շատ, հուշդ մեջ
Արծվաթույն երկիր:
Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրն են քեզ պահել
Հայրենի երկիր:
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ռոբերտ Ամիրխանյան

Հ.Գ. - Ընդհանրապես նման հանրագիտարանի ստեղծման փաստը չափազանց կարևոր երևույթ է: Դեռևս երեք տարի առաջ Զորի Բալայանի աջակցությամբ հիմք դրվեց այն ստեղծելու գործընթացին: Նպատակը Արցախյան գոյապայքարի մասին պատմական իրականության վերականգնումն է՝ «Ոչ ոք չի մոռացվում և ոչինչ չի մոռացվում» գաղափարի ներքո: Նախատեսվում է հետագայում հանրագիտարանը հրատարակել նաև ռուսերեն, անգլերեն և թուրքերեն լեզուներով: Ուշագրավ է, որ հատորը պատկերազարդ է, ունի շուրջ 200 քարտեզ, ընդգրկում է շարժմանը վերաբերող բոլոր ոլորտները: Վավերագրական նյութերը տեղեկացնում են կամավորական ջոկատների, պաշտպանական շրջանների, մարտական ուղիների, մարտերի ընթացքի, ինչպես նաև անհատ զինվորների մասին: Վերջինս ընդգրկում է հերոս ազատամարտիկներին ներկայացնող փաստագրական նյութեր՝ կից լուսանկարներով:

Հետաքրքրական է նաև հատորի՝ «ԼՂՀ-ն՝ որպես հայկական պետական նոր կազմավորում» առանձին բաժինը, որտեղ զետեղված են պատկերազարդ նյութեր՝ մարտերի տեսարանների, եկեղեցիների, պատմական հուշարձանների, մարտական տեղանքների ու հերոսների լուսանկարներ: Հանրագիտարանի մեկ այլ բաժինն էլ անդրադառնում է այն բոլոր քաղաքական ուժերին և կուսակցություններին, որոնք շարժման սկզբից, ամեն մեկն իր չափի ու ձևի մեջ սատարել են ղարաբաղյան գոյամարտին: Հանրագիտարանը ստեղծվել է պետական պատվերով՝ ՀՀ և ԼՂՀ պետբյուջեի միջոցներով: Այս ազգանվեր գործի հովանավորներն են երկու հանրապետությունների նախագահները: Աշխատանքները ղեկավարել է Հայկական Հանրագիտարանի գլխավոր խմբագրության բազում տարիների փորձառու ղեկավարներից մեկը՝ գիտնական Հենրիկ Խաչատրյանը:

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔԻՑ ՈՒ ՎԱՐԱԳԱՍԱՐԻՑ

Վերջերս Ծիծեռնավանքում մեծ շուքով նշվեց Սբ. Գևորգի օրը: 2000-ամյա տաճարի կամարների տակ հնչում էին հոգևոր երգեր, աղոթքներ: Տոնախմբությանը մասնակցում էին հոգևոր հայրեր, Քաշաթաղի շրջանի վարչական աշխատակազմի, տարբեր վարչությունների ու բաժինների աշխատակիցներ, հյուրեր՝ Շուշիից, շրջակա գյուղերից: Տոնախմբությանը մասնակցեց Երևանից ժամանած «Նախաբեմ» կրթամշակութային-հասարակական միության «Շոկոլադ» մանկական թատերախումբը «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ու՞ր ենք գնում» ներկայացմամբ: Ներկայացումները հանդիսատեսի կողմից արժանացան ջերմ ընդունելության և բարձր գնահատանքի:

Ծիծեռնավանաց (Աղավնո) գետի հովիտը, որն սկսվում է Իշխանասարի փեշերից և հասնում մինչև Աղավնո (Զաբուղ) գյուղ: Այն հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով, հնագիտական հուշարձաններով՝ վանք ու եկեղեցի, մատուռ ու խաչքար, կամուրջ ու տապանաքար, դամբարան, գերեզմանատուն: Այս բոլորի մեջ իր հնությամբ, ճարտարապետությամբ, վեհությամբ, դիրքով՝ որպես սիրված ուխտատեղի, աչքի է ընկնում Ծիծեռնավանքը, որը մ.թ. I հազարամյակի սկզբին կառուցված հոգևոր կենտրոն է և հետագա դարերում մի քանի անգամ նորոգվել ու հասել է մեզ: Վերջին անգամ վանքի Սբ. Գևորգ տաճարը, սեղանատունը և պարիսպների մի մասը նորոգվեցին 2000-2003 թթ.: Ծիծեռնավանքը հավետ հային է մնալու, և փառք հայ շինարարներին, բարերարներին (Ք. և Զ. Նաճարյաններ), Քաշաթաղի ղեկավարությանը, հնագետներին, ճարտարապետին, այն հավերժ կանգուն է լինելու:

Ծիծեռնավանքի մասին առաջինը հիշատակել է Ստեփանոս Օրբելյանը «Սյունյաց պատմություն» գրքում՝ սրբավայրը դասելով Սյունիքի 30 նշանավոր վանքերի շարքում, իսկ Աղահիճք գավառում նշում է երեք հայտնի վանք՝ Ծիծառնոյ, Խաչատրոյ և Ձիւնասարի վանքերը: Խաչատրոյ վանքի տեղն առայժմ անհայտ է, Ձիւնասարինը գտնվել է այժմյան Սոնասար գյուղում (Հոչանց գետի ավազան, համանուն սարից մոտ 6 կմ հյուսիս-արևմուտք):

XX դարի 30-ական թթ. այդ վանքը հիմնովին քանդվել է և սյուներն ու որոշ սրբատաշ քարեր ադրբեջանցիների կողմից տեղափոխվել են այլ վայրեր: Գյուղի տներից մեկի բակում պահպանվել է մի խոյակ, մոտակա միջնադարյան գերեզմանատունը քանդվել է, խաչքարերի ու տապանաքարերի մի մասը, ինչպես նաև, եկեղեցու զարդանախշ ու սրբատաշ քարերը որպես շինանյութ են օգտագործվել ադրբեջանցիների տների ու գոմերի համար:

Ծիծեռնավանքի մասին միջնադարյան մատենագիրներից հիշատակում են նաև Վարդան Արևելցին «Աշխարհացոյց» գործում և Թովմաս Վարդապետ Վանանդեցին: Հետագայում արժեքավոր տեղեկություններ են հայտնում Ղևոնդ Ալիշանը, Երվանդ Լալայանը, Կայծակ Սյունին: Ըստ նրանց տեղեկությունների՝ Ծիծեռնավանքն իր անունը ստացել է՝

ա) կապված Պետրոս Առաքյալի ճկույթի հետ (ծիծեռն), որը, որպես սուրբ մասունք, պահպանվել է սրբավայրում:

բ) կապված ագռավի հետ, որը փրկել է վանքը կառուցող շինարարներին օձի թույնից՝ ինքնազոհությամբ: Տեսնելով, որ օձը ընկել է շինարարների համար եփվող ճաշի մեջ, ագռավը ցուցադրաբար ընկնում է եռման ամանի մեջ: Եվ երբ թափում են արդեն հարամված կերակուրը, տեսնում են տակի օձը և, հասկանալով եղե-

ԶՈՀՐԱԲ ԼՈՔՈՅԱՆ
Քաշաթաղի շրջանի կրթ. տեսչ. բաժնի պետ,
ԵԿՄ տարածքային բաժանմունքի փոխնախագահ

լությունը, ագռավին թաղում են վանքի արևմտյան մասում՝ բարձր դիրքում գտնվող Ցից քարի խոռոչում, և տեղը կոչում՝ «Ագռավախաչ» կամ «Ագռավի գերեզման»:

Ըստ Ալեքսան Հակոբյանի ուսումնասիրությունների՝ Ծիծեռնավանքի անվանումը կապված է Սբ. Գևորգի հետ: X դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր մատյանում գրում է, որ Մղե անունով արաբ մի զորավար (841թ.), դուրս գալով Պարտավ քաղաքից, արշավանք է սկսում և ճանապարհին ավեր ու սպանդ, գերեվարություն սփռելով՝ հասնում է Արքագետ կոչվող գետին, և հրամայում՝ այրել գետափնյա Սբ. Գևորգ եկեղեցին: Սակայն, ինչպես նշում է պատմիչը, այստեղից դուրս է գալիս սպիտակ ձիով մի հեծյալ և կոտորում արաբական ելուզակներին: Նրանցից մի մասին է հաջողվում փախչել «ընդ սարն, որ կոչի Եղջերխոռ»: Այսպիսով՝ փրկվում են նաև գերիները:

Հաշվի առնելով, որ Արքագետը նույն Աղավնո կամ Ծիծեռնավանուց գետն է, և պատմիչի հիշատակումը, կարելի է եզրակացնել, որ տեղանքը՝ Ծիծեռնավանքն է, իսկ տաճարը՝ Սբ. Գևորգը:

ԵՍ՝ ԲԵՐԶՈՐԻ ՆՌԱՆ ՀԱՏԻԿՍ

Դուք ինձ չե՞ք ճանաչում:

Ես Շուշանիկն եմ: Ապրում եմ Բերձորում: Սովորում եմ 5-րդ դասարանում: Դուք կարծում եք, թե ես միայն ապրում եմ Բերձորո՞ւմ և սովորում 5-րդ դասարանո՞ւմ:

Ես էլ էի այդպես կարծում: Իսկ ես իմացա, որ ես նռան մի հատիկ եմ: Մի՛ զարմացեք: Ինչպե՞ս ես իմացա այդ մասին: Պատմեմ:

Ես մասնակցել եմ «Նռան հատիկ» փառատոնին: Այնտեղ հավաքվել էին «Նռան հատիկներ»՝ Արցախից, Դիլիջանից, Գավառից, Աշտարակից, Հրազդանից, Ջավախքից և Երևանից: Փառատոնի կազմակերպիչներ Գառնիկ Սեյրանյանը և Լևոն Իվանյանը մեզ՝ փառատոնի մասնակիցներիս, անվանում էին «Նռան հատիկներ»: Հետո մենք հասկացանք, որ մեր թատերական խմբերը փոքրիկ նռնենիներ են: Նրանցից ամենափոքր ըՔարեգահ գյուղի «Սմբատ Թաթոսյան» կենտրոնի մեր թատերախումբն էր, որը մեկ տարեկան է: Մենք եղանք Հայաստանի շատ վայրերում, այցելեցինք Խոր Վիրապ, Սբ. Էջմիածին, Գավառ, Հին Արտաշատ: Դիտեցինք շատ ներկայացումներ, որոնք ինձ դուր եկան: Հուսանք, որ մեր ներկայացումն էլ հանդիսատեսին է դուր եկել:

Իսկ «Նռան հատիկին» կասեմ՝
«Քաղցրությունից ճաք ես տալիս,
Մեզ բոլորիս թև ես տալիս,
Հյութդ համեղ, անմահական,
Ծնունդովդ էլ զուտ հայկական:
Հայկական ես քո խոհերով
Եվ քո բռնած վեհ գործերով:
Մաղթում ենք քեզ շատ-շատ բարիք,
Մեր սիրելի «Նռան հատիկ»:

ՇՈՒՇԱՆ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Բերձոր, թիվ 1 դպրոց,
5-րդ դասարան

Նկարներում՝

1. «Շոկոլադ» թատրոնի «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ու՞ր ենք գնում» Սասնա Ծռերի հերոսներից Փոքր Միհրին նվիրված ներկայացումը Բերձորի թիվ 1 դպրոցում.
2. «Շոկոլադի» դերասան Մեսրոպ Ապտոյանը՝ Փոքր Միհրի դերում.
3. Քաշաթաղի Սբ. Գևորգ եկեղեցին, IV դար.
4. Ծիծեռնավանքի Սբ. Գևորգ եկեղեցու բակում «Շոկոլադ» թատրոնի փոքրիկ դերասանները, հայր Աթանաս քահանան, թատրոնի գեղարվեստական ղեկավար Մարինե Ասատրյանը, Քաշաթաղի նախկին մարզպետ Ալեքսան Հակոբյանը:

«ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՏԱԼ ԱՊՐԱԾԴ ՕՐՎԱՆ ՈՒ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ՎԵՐՑՆԵԼ»

-Երբ պարապ եմ, տեղս չեմ գտնում, -ասում է բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող Լևոն Բլբուլյանը: -Իմ նշանաբանն է. «Երբեք իզուր ու անտեղի չվատնել թանկ ժամանակը, թույլ չտալ՝ հոգիդ ճահճանա, գրիչդ՝ ժանգոտվի, միշտ քեզանից ինչ-որ բան տալ ապրածդ օրվան եւ ինչ-որ բան վերցնել անպայման, երևի դա է պատճառը, որ աստիճանաբար այսպես բազմաժանր դարձա. բանաստեղծական ժողովածուների, թարգմանությունների և երգիծական գրքերի հեղինակ եմ, ունեմ երգերի լազերային ձայնասկավառակ...»

-Ո՞րն է Ձեզ համար բանաստեղծության խորհուրդը:

-Դժվար հարց է: Ինչ էլ ասեմ պատասխանս թերի է լինելու, օրինակ՝ սիրո մասին ասված ամենագեղեցիկ ու խորիմաստ խոսքերն անգամ նրա էությունը լիովին չեն բացատրում: Եթե բանաստեղծ ես Աստծո կամոք, ապա բանաստեղծությունը քո կյանքը, քո գոյությունը իմաստավորող ամենակարևոր գործոններից մեկն է: Համո Սահյանը մի բանաստեղծություն ունի պոետի այն վիճակի մասին, որտեղ ասվում է, թե ինչպես է ներշնչանքը լքել նրան, որ նա այլևս չի կարողանում ստեղծագործել, բառերը չեն ենթարկվում իրեն: Հատկապես տպավորիչ է հետևյալ տողը. «Արդեն քանի օր է՝ հարսանիքն է մահիս»:

-Ինչպե՞ս է ընթանում Ձեր ստեղծագործական կյանքը վերջին տարիներին, այսպես ասած՝ նոր ժամանակներում:

-Նոր ժամանակներում, իհարկե, եղավ անտանելի մի շրջան, երբ ամենքս անորոշության ու հուսահատության մեջ էինք: Փա՛ռք Աստծո, որ անասելի ճիգերի, կորուստների գնով, կարծես թե այդ ճգնաժամը հաղթահարեցինք կամ հաղթահարում ենք: Եվ պիտի ասեմ, որ ծանր այն օրերին ինձ դարձյալ նեցուկ էին ստեղծագործական աշխատանքն ու պոեզիան: «Աներգ օրեր» ժողովածուս գրվեց և տպագրվեց հենց այդ օրերին: Այդ ժամանակ իմ մեջ վերջնականապես հասունացավ ծննդավայրիս զվարճապատումները գրի առնելու, հրատարակելու վաղուց ծնված գաղափարը (համատարած հուսահատության ու մռայլության մեջ մարդկանց ամենից առաջ նման գրքեր էին պետք)... Կարելի է ասել, որ ստեղծագործական տևական դադարներ չեմ ունեցել. բանաստեղծություն չի գրվել՝ զբաղվել եմ թարգմանությամբ, դա չի ստացվել՝ ժուռնալիստիկան է եկել օգնության («Ժամանակ և դեմքեր» գիրքս նույնպես վերջին տասնամյակի արդյունք է): Այդպես՝ մինչև հիմա: Վերջին շրջանում սկսել եմ քառյակներ գրել. երևի տարիքն իրեն զգացնել է տալիս: Եթե այսպես գնա, հաջորդ գիրքս քառյակների ժողովածու է լինելու:

-Երգից չխոսեցիք: Ի՞նչ է էլ նոր երգեր չե՞ն ծնվում:

-Բարեբախտաբար, ծնվում են և, պիտի ասեմ, դա էլ ինձ ստեղծագործական «մարզավիճակում» պահող կարևոր հանգամանքներից մեկն է: Միշտ էլ համագործակցության առաջարկություններ կան՝ թե՛ անվանի և թե՛ երիտասարդ երգահանների կողմից, այդ ընթացքում շատ նոր երգեր են ծնվել: Իսկ երբ կոմպոզիտոր Արամ Սաթյանի հետ աշխատում էինք «Լիլիթ» պոպ օպերայի վրա, այդ ընթացքում ստեղծագործական ինչ-ինչ նոր կողմեր, հնարավորություններ բացահայտեցի իմ մեջ: Հետաքրքիր շրջան էր: Քանի որ երգից խոսեցինք, չեմ կարող չնշել իմ և քրոջս՝ Ժաննա Բլբուլյանի արդյունավետ համագործակցության մասին: Շուրջ տասը տարիների համատեղ աշխատանքի ամփոփումն էր Օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում կայացած մեր հեղինակային երեկոն՝ ճանաչված երգիչ-երգչուհիների և ասմունքող Գայանե Սամվելյանի մասնակցությամբ: Հրաշալի անցավ. լեփ-լեցուն դահլիճ, ջերմ մթնոլորտ: Արդեն համերգը կրկնելու առաջարկություններ կան, բայց մենք որոշեցինք դա անել մեկ տարի անց՝ նոր ծրագրով:

-Իսկ ինչպե՞ս են ծնվում Ձեր զվարճապատումների գրքերը: Որքան գիտեմ, արդեն «Բոյիդ մեռնեմ»-ն է ընթացքի մեջ:

-Ես գտնում եմ, որ իմ ծննդավայրի՝ Գավառի (մեզ ավելի հարազատ է Քյավառը) հանրահայտ հումորն ու զվարճապատումները ժողովրդական բանահյուսության գեղեցիկ ու արժեքավոր նմուշներ են, չպետք է թույլ տալ, որ դրանք կորչեն: Անկեղծ ասած, երբ առաջին գրքույկը տպագրվեց, չէի կարծում, թե կծնվի երկրորդը. թվում էր՝ եղածն ի մի եմ բերել: Բայց... ահա երրորդ գիրքն է պատրաստ և ինձ համար շատ հաճելի է, որ մարդիկ նույնիսկ տուն են զանգահարում՝ հետաքրքրվելու, թե այն ե՞րբ պիտի տպագրվի: Ասեմ, որ նրանք էլ ինձ այդ գործում շատ են օգնում, հատկապես իմ հայրենակիցները հաճախ հուշում, հիշեցնում են, որ այս կամ այն պատմությունը բաց եմ թողել (ի դեպ՝ դրանց մեջ քիչ չեն իրական պատմությունները ու հերոսները) և ես, իհարկե, դրանք հաշվի եմ առնում:

Բանաստեղծուհի ԼԻԼԻԹ

ՔՅԱՎԱՌԻ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄՆԵՐԻՑ

-Կանաս ասես՝ ի՞նչ տարբերություն արաղի ու արևի միջև,-երբ Գևոյի «վետերոկում» արդեն իրենց նորման կատարել էին, Հայրոյին հարց տվեց Գարսևանը:

-Գիվա նմանություն կա՞, որ տարբերությունն ասեմ,-քմծիծաղ տվեց Հայրոն:

-Ա՛յ խելոք, չե՞ս գիդում, խարցրա՝ ասեմ,-վիրավորվեց Գարսևանը: -Ուրեմն, արևը ցերեկային լուսատու ա, իսկ արաղը՝ գիշերային, որ օրը խմուկ խասնում եմ տուն, կնիկս ասում ա՝ լուս քո տեսնողին:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻ

Ըստ ավանդության՝ այստեղ թաղված է Հռիփսիմե կույսը:

Հռիփսիմեի տաճարը կառուցվել է 618թ.՝ Կոմիտաս կաթողիկոսի օրոք: Նա քանդել է տվել Հռիփսիմեի գերեզմանի վրա Սահակ Պարթևի օրոք (395թ.) կառուցված մատուռը՝ «զի կարի ցած ու մթին էր շինուած»: Իր գոյության ընթացքում այն հիմնականում կանգուն և անփոփոխ է մնացել: Մասնակի նորոգումներ կատարվել են ուշ միջնադարում:

Հետագայում՝ 1635թ., Հռիփսիմե եկեղեցու նորոգումը ձեռնարկում է Փիլիպոս կաթողիկոսը: Այդ մասին պատմում է Առաքել Դավրիժեցին. «Իբրեւ կատարեալ աւարտեցան ամենայն շինուածք Գայանեայ կուսին, ապա գնացին ի տաճար սրբուհի կուսին Հռիփսիմեայ և ձեռն ի գործ արկեալ սկսան զայն նորոգել»:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գահակալության տարիներին Հռիփսիմեի վանքապատկան քառանկյուն հողամասը պարսպապատվում է հողաշեն պարիսպներով:

1884թ.՝ Խրիմյան Հայրիկի օրոք, վանքի հողամասի հարավարևելյան անկյունում կառուցվել է երկհարկանի մի շենք միաբանության համար և հողաշեն պարիսպների արևելյան ու հարավային հատվածները փոխարինվել են քարաշեն պարիսպներով:

1936թ. Հայաստանի հուշարձանների պահպանության կոմիտեն ամրացրել է տաճարի հիմքերը: Այդ շրջանում նորոգվել են տաճարի տանիքը, գմբեթը, գետնախարիսխները, բակը, պարիսպները, հարակից շենքերը:

1945թ. ծառատնկվել է բակի հարավային մասը: Որոշ աշխատանքներ են արվել Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին: Սկզբից դրանք բարեկարգման բնույթ են կրել. տուֆ քարով սալարկվել է տաճարի շրջապատը, նորոգվել է քարաշեն սանդուղքը: Աշխատանքներ են կատարվել նաև տաճարի ներքին բարեզարդման ուղղությամբ: Ավագ խորանում (նախագծի հեղինակ՝ ճարտ. Ռ. Իսրայելյան)՝ վեմ քարի փոխարեն, տեղադրվել է նոր սեղան:

Ճանգակատան հիմնական նորոգումն իրականացվել է 1986-87 թթ.:

Հռիփսիմեի տաճարը առանձնանում է համախմբված, լայնածավալ և դեկորատիվ էլեմենտներով, որտեղ կենտրոնագմբեթ ճարտարապետական համակարգը հասցված է կատարելության: Այն կենտրոնագմբեթ, խաչաձև տիպի եկեղեցիների ավելի զարգացած ու կատարելագործված օրինակն է: Տաճարի ուղղանկյուն հատակագծի մեջ ներգրավված է խաչ, որի թևերը կազմված են տաճարի երկու առանցքների վրա համաչափորեն տեղավորված կիսաշրջան չորս աբսիդներով: Չորս անկյուններում տեղավորված են քառակուսի խորաններ: Հյուսիսարևելյան խորանի միջից մուտք է բացվում դեպի տապանատուն: Խորանի ներսում դրված են VIII դ. արձանագրություններ: Տաճարն ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային: Գմբեթը, ծածկելով տաճարի սրահի մեծ մասը, իրեն է ենթարկում եկեղեցու ներսն ամբողջությամբ: Գմբեթահակ քառակուսում տեղավորված են բարդ ու անկյուններում հովհարային պահունակներ ունեցող տրոմպներ: Մի շարք տրոմպների (փոքր) օգնությամբ կատարվում է ութանկյան փոխանցումը գմբեթահակ շրջագծին: Խորանի հյուսիսային կողմում՝ տուֆ քարի վրա, կա հետևյալ արձանագրությունը. «Կանգնեցա ի Մատուռս Սրբոց Կուսանանց Հռիփսիմեանց ի թուին Հայոց ՌՆՈՒԶ Արդեամբք եւ Ծախիլք Նախագահին Հ.Բ.Ը. Միութեան էին Լուիզ Մանու կեան Սիմոնի ի Յիշատակ Մորն իւրուց Մարի Մանուկեան»:

Տաճարում կա շարժական մկրտության ավազան: Մի քանի տարի է ինչ այստեղ գործում է կանանց միաբանություն: Տաճարի ետնամասում՝ հռիփսիմյանց կույսերի գերեզմանների վրա, կանգնեցված է խորան, որի վրա արձանագրված է. «Յայսմ որանի Ամփոփեալ կան Նշխարք Սրբոյ Կուսանայն Հռիփսիմեանց որք նահատակվեցան Վասն Հավատոյն և Սիրոյն Քրիստոսի»:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գրականություն.

Վարազդատ Հարությունյան, «Էջմիածին», 1978 թ.,

Վարազդատ Հարությունյան, «Եկայք Շինեսցուք», 1988 թ.,

О.Х.Халапчьян, “Архитектурные ансамбли Армении”, 1980 г..

ՀԱՅ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Հովհան Մանդակունին Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից է եղել: 478-490թթ. զբաղեցրել է Հայոց կաթողիկոսական աթոռը: Հեղինակ է մեծարժեք աստվածաբանական երկերի, սակայն նրա աշխատություններից առավելապես հայտնի են ճառերը, որոնք վերաբերում են քրիստոնեության կարևորագույն հարցերին՝ ապաշխարությանը, խոստովանությանը, սիրուն, աղոթքին, առաքինություններին, աղքատներին մխիթարելուն, մեղքերին, անօրինությանը, արհամարհանքին, նախանձին և այլն:

Մանդակունու ճառերը բարոյակրթական քարոզների շարքեր են, որտեղ բարձրացվում է քրիստոնեական հասարակության բարքերի մաքրության գաղափարը: Ադամի մեղք գործելու պատճառով մարդկությունը զրկվեց դրախտից և ընկավ մեղքերի մեջ: Այժմ մարդկության նպատակը պետք է լինի խուսափել սատանայի որոգայթներից, հաղթահարել մեղքերը մահից հետո երանելի դառնալու համար: Դրա համար անհրաժեշտ է կատարել Տիրոջ պատվիրանները՝ չշնանալ, չգողանալ, չզբաղվել վաշխառությամբ, չբարկանալ, չդիմել գուշակների օգնությանը, չբամբասել, չկոծել մեռելների վրա, չտրտնջալ Աստծուց, չշփվել հերձվածողների (աղանդավորների) հետ: Նշված մեղքերից յուրաքանչյուրին նվիրված են առանձին քարոզներ, որոնցում բացահայտվում են դրանց պատճառներն ու հետևանքները, մատնանշվում՝ նրանց հասարակական և բարոյական վնասները:

Մկրտություն. Գլաձոր. Ավագ. 14դդ. դպր

Հեղինակի կարծիքով՝ մեղսագործությունը զսպող ուժը «Վերջին դատաստանի» քարոզն է, որը պետք է նկատի ունենալ ամեն մի քայլ անելիս: Մեղավորները ենթարկվում են ոչ միայն «Վերջին դատաստանի» պատժին, այլ նաև հասարակական պարսավանքին և խղճի դատին: Բարքերի մաքրության գործում Մանդակունին մեծ տեղ է հատկացնում հոգևոր դասին, որի պարտականությունն է մարդկանց սովորեցնել Աստծո ուղիղ ճանապարհը, նրանց հեռու պահել զանազան մոլորություններից և սատանայի խաբեություններից:

Ինչ վերաբերում է փրկությանը, ապա Մանդակունին ասում է, որ մեղք չգործելը դեռևս քիչ է փրկության արժանանալու համար, մարդը պետք է աչքի ընկնի քրիստոնեական առաքինություններով, որոնցից ամենակարևորը խոնարհությունն է: Խոստովանությամբ, ապաշխարությամբ, պահքով, ողորմությամբ, աղոթքով մարդը մաքրվում է իր բոլոր մեղքերից և արժանանում՝ անդրաշխարհի վայելքներին: Ապաշխարության սկիզբը դժվարին է, սակայն ապաշխարողի գործը հեշտ է դառնում, քանի որ խոստովանությունը շնորհք է բերում, վերջինս էլ լուսավորում է մարդու միտքը, որը արտասուք և սուգ է առաջացնում: Սուգը բերում է պահքի, պահքը մղում՝ աղոթքի, աղոթքը՝ ողորմության: Ապաշխարությունը չպետք է ուշացնել և հետաձգել վաղվան: Մանդակունու աստվածաբանության մեջ՝ մեղքերի քավության խնդիրը դառնում է անկյունաքարային:

Մարդկությանը մշտապես հուզող հարցերից մեկը եղել և մնում է սոցիալական անհավասարության խնդիրը, որը մարդկանց երբեմն հանգեցրել է Աստծո արդարադատությանը կասկածելու մտքին: Հեղինակը, սակայն, հակաճառում է այդպես մտածողներին՝ ընդգծելով, որ Աստված մարդկանց ստեղծել է հավասար: Եթե որոշ մարդիկ հարստություն են կուտակել, ապա դա կատարել են կա՛մ ուրիշներին կողոպտելու, կա՛մ աշխատասիրության շնորհիվ: Աղքատների վիճակը թեթևացնելու այլ ճանապարհ չտեսնելով՝ հեղինակը նրանց մխիթարում է այս աշխարհում վայելած ազատությամբ, քանի որ աղքատները, հարստություն չունենալով, ազատ են գողերի, դատավորների, բռնակալների ոտնձգություններից և նույնիսկ հոգսերից: Բացի դրանից, նրանց սպասում է նաև երկնային կյանքի վայելքները:

Վատագույն մեղք է համարվում հարբեցողությունը, որը կործանում է մարդու և՛ մարմինը, և՛ հոգին: Վատ սովորություն է նաև սնահավատությունը, որը մեղք է:

Տուրք տալով միջնադարյան կրոնական նախապաշարումներին՝ Ժողովրդի մեջ տարածված «թատերասիրության ախտը» Մանդակունին քննադատում է՝ թատրոնի սիրահարներին համարելով անպարկեշտներ:

Գրելով քրիստոնեական ընդհանուր բարոյական խնդիրների մասին՝ հեղինակը օգտվել է եկեղեցու մեծանուն հայրեր Բարսեղ Կեսարացու, Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու նույնաբնույթ երկերից:

Մանդակունին ընդարձակել է «ժամագիրքը»՝ այն համալրելով իր հորինած աղոթքներով, երգերով:

Մանդակու անունով հայտնի է նաև «Խրատ վանականաց միանձնյաց» երկը, որտեղ զետեղված են հոգևոր կենցաղավարության վերաբերյալ հանձնարարականներ: «Մաշտոց» ժողովածուի մեջ նրան է պատկանում Մկրտության կանոնը, Խաչի, Պասկի, Ժամհարի, Ավագանի և այլ օրհնություններ:

Ճառերի պատկանելության գործում Հովհան Մանդակունին հայագիտության մեջ առայժմ համընդհանուր ճանաչում չի գտել, քանի որ դրանք հաճախ վերագրվում են նաև Հովհան Մայրագոմեցուն:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի
ասպիրանտ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՋԱՒԱԽՔ

Արեւմտեան Հայաստանում իր ուխտագնացութիւնն աւարտելուց յետոյ նրա հոգին չհանդարտուեց: Զգում էր, որ ճանապարհ ունի անցնելիք, ու այդ ճանապարհը հոգու կանչով տանում էր Ջաւախք: Գնաց: Մենակ չէր: Ուխտաւորների քանակը գերազանցում էր վեց տասնեակը. եկել էին Արցախից, Սփիւռքից, Հայաստանի Հանրապետութեան տարբեր մարզերից:

Սա մի մտայղացում էր, որը Ջաւախքի ընդհանուր Առաջնորդական փոխանորդ Հայր Բաբկէն Սալբիեանի եւ նրա՝ Մեսրոպ արք. Աշճեանի ջանքերով կեանքի կոչուեց: Ուխտաւորները հաւաքուեցին: Սպասում էին ու այդ սպասումի մէջ մի քիչ վախ կար՝ սրբազանը վատառողջ էր, կարող էր չգալ, բայց ճանաչողները վստահ էին՝ գալու է: Եկաւ: Շարուեցինք: Ճանապարհը երկար էր եւ յոգնեցուցիչ: Ամբողջ ճանապարհի ընթացքում նա անհանգիստ էր: Շտապում էր: Օրուայ երկրորդ կէսին Ջաւախքում էինք: Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու բակում անսովոր եռուզեռ էր տիրում. հաւաքուածներն անհամբեր սպասում էին տեսնելու մի մարդու, ով ոտքով անցել էր Մշոյ դաշտը, աղօթք է կարդացել Մշոյ Սուրբ Կարապետում, ձեռքերն էր լուացել Եփրատի զուլալ ջրերում: Ջաւախքցիները եկել էին տեսնելու մեծ հայրենասէրին, եկել էին մեծ հոգեւորականից օրհնութիւն ստանալու կամ պարզապէս մեծ մարդու կողքին գտնուելու: Ոչ միայն տեսան Մեսրոպ արք. Աշճեանին, այլեւ լսեցին նրա աղօթքը առ Աստուած. «Թող Տէրը զօրաւիգ լինի Ջաւախք աշխարհին եւ ջաւախքահայութեանը»:

Սրբազանի խօսքը «Լուսաւորչի կանթեղը» ֆիլմից. «Օրը մթնում էր: Բոլորը հանգստանալ էին ուզում: Ուխտագնացութիւնը սկսուելու էր յաջորդ օրը, վաղ առաւօտից: Քայլելու էինք Թումանեանի հետքերով: Ճանապարհը տանելու էր Թմկաբերդ»:

Հաւաքուեցինք առաւօտ կանուխ եւ աղօթքից յետոյ ճանապարհ ընկանք: Երկար ու դժուար էր ճանապարհը, սակայն Սրբազանի ոգեւորութիւնը վարակել էր բոլորին: Օրը մի տեսակ մթնում էր, անձրեւոտ, եւ հեռում՝ մութ ամպերի տակ, աչքը՝ եկողի ճամփին, կանգնած էր Թմկաբերդը, աւելի ճիշտ՝ այն ամենը, ինչ մնացել էր Թմուկ բերդից: Սրբազան Հայրը յուզուած էր: Քայլում էր դանդաղ եւ երեւի մտքով հասել ու զրուցում էր Թումանեանի հետ լաւ ու վատ օրերից, «էս անցաւոր աշխարհից»: Մեզ հետ էին դերասաններ Լորենց Առուշանեանն ու Ամիրան Գալստեանը, եւ հենց նրանք էլ բոլորիս մասնակից դարձրեցին երկու մեծերի լուռ զրոյցին՝ կարդալով «Թմկաբերդի առումը» պոեմը: Ընթերցումից յետոյ հնչեց հայկական քոչարին, եւ բոլորս շուրջպար բռնեցինք, լեռները դղրդում էին ուխտաւորների «հեյ-հեյից»: Երջանիկ էինք բոլորս:

Թմկաբերդից շարժուեցինք դէպի Վարձաւունիք՝ հայ իշխանների բնակատեղին: Լուռ շրջեցինք, խմեցինք խորհրդաւոր աղբիւրի ջրեն: Կէսօրին եփւում էր մատաղը: Հաւաքուեցինք սեղանների շուրջ: Սրբազանը օրհնանքի արարողութիւն կատարեց Հայր Բաբկէնի հետ, եւ ով զարմանք, արեւ դուրս եկաւ: Սա բոլորիս հաւատքի արդիւնքն էր, խորհուրդ խորին: Մատաղի արարողութիւնը առիթ հանդիսացաւ, որ Վարձաւունիքի դարբասների մօտ կրկին հնչի հայ երգն ու պարը՝ հաստատելով, որ քանի դեռ հայ ժողովուրդը կարող է տալ այդպիսի մեծ հայրենասէրներ, ինչպիսին Մեսրոպ արք. Աշճեանն է, հայը կը շարունակի ապրել եւ ապրել արժանավայել: «Սասուն» երգի-պարի ազգագրական համոյթի ազգային երգերի ներքոյ ուխտաւորներից իւրաքանչիւրը հայրենիքի մի գինուոր էր եւ պարում էին յաղթական, ոգեւորուած՝ պատմական հողը սեփական ոտքի տակ ունենալու մտքից: Ախալքալաքից մեզ էր միացել Լեւոն Իսպիրեանը. նա հոգեթով ձայնով երգում էր Էրզրումի երգերը:

Մայրամուտ էր արդէն, երբ վերադարձանք Ախալքալաք: Ուխտագնացութեան երկրորդ օրը ճանապարհը տարաւ սիրոյ մեծ երգիչ Վահան Տէրեանի ծննդավայրը՝ գիւղ Գանձա: Ողջ գյուղը ուխտաւորներին դիմաւորելու էր եկել: Տէրեանի տուն-թանգարանը գտնուում էր գիւղի Ս. Կարապետ եկեղեցու բակում: Սրբազանը քայլում էր կիսաւեր եկեղեցում, տեսնելով աղաւնու հիւսած բույնը խորանի մօտ, վախուորած ձեռքերով վերցրեց աղաւնու ձուն եւ շրջելով դեպի ուխտաւորները, անթաքոյց յուզմունքով ասաց.- «Ես հիմա՛ հասկացայ Կոմիտասին՝ խախտուել գերաններ, փլուել են տներ, բուն պիտի դնեն մէջ վայրի հաւքեր»: Յետոյ բոլորս հաւաքուեցինք Տէրեանի արձանի շուրջ՝ լսելու նրա ստեղծագործութիւնների ընթերցումները: Իսկ երգիչներ Մ. Մկրտչեանն ու Ա. Գրիգորեանը իրենց երգերով ոգեւորեցին ներկաներին:

Սրբազանը Սբ. Խաչի բակում

Հրաժեշտ տուեցինք Գանձային, իսկ առջեւում ուխտաւորներին կարոտով սպասում էր չքնաղ Փարաւանա:Հասանք Փարաւանա: Խռովք կար լճի սրտում: Ինչո՞ւ էր տխուր: Սրբազանը դա շուտ հասկացաւ եւ հաշտութիւն կնքեց զուլալ լճի հետ՝ ջրօրհնէքի արարողութիւն կատարելով: Աղօթքն ու շարականը յաջորդում էին միմեանց: Եւ ի՜նչ հրաշք, թախծոտ Փարաւանան ժպտալ սկսեց, կայտառացաւ եւ իր երգով միացաւ ուխտաւորներիս: Սա մի գեղեցիկ սիմֆոնիա էր: Ժամանակը սուղ էր: Առջեւում Փոկա գիւղն էր: Պէտք էր առաջ գնալ: Սրբազանը մի վերջին հայեացք նետեց լճին, հոգու թեւերով գրկեց լիճը եւ չէր ուզում բաց թողնել: Ճանապարհը կանչում էր, իսկ չքնաղ Փարաւանան շշնջում. «Մի՛ գնա, մի քի՜չ էլ...»: Եւ նա, ով գոյացել էր սիրահարի արցունքից, ինքն էլ դարձած սիրահար՝ մեզ ճանապարհ դրեց կարօտ աչքերով:

Շարժուեցինք դէպի Փոկա, ուր մեզ դիմաւորեցին աղ ու հացով: Հաւաքուել էր ողջ գիւղը: Սրբազանը տպաւորութիւնները կիսեց ժողովրդի հետ եւ խնդրեց. «Թէկուզ տասը լեզու իմանաք, ձեր հաւատքն ու լեզուն «ղայիմ» պահէցեք: Եւ որքան, որ Աստուած ինձ կեանք պարգեւի պիտի ապրեմ ու աղօթեմ Ջաւախքի համար»: Եւ իմանալով, որ այդ տարածաշրջանի բնակչութիւնը զրկուած է դիտելու ՀՀ հեռուստածրագրերը, նա իր խօսքը գործի վերածեց՝ նուիրելով մի ալեհաւաք, որը ապահովեց եօթ գիւղերի հեռուստակապը Հայաստանի հետ: «Տէր Ողորմեա»-յի հնչիւնների ներքոյ «մնաս բարով» ասացինք Ջաւախքին: Աւարտուեց ուխտագնացութիւնը՝ նոր հանդիպման ակնկալիքով:

ԼԻԱՆԱ ԽԼՈՅԵԱՆ

Հոդվածն ու նկարը մեզ է տրամադրել Մեսրոպ արք. Աշճյանի անվան գրադարանի տնօրեն Հովիկ Մկրտչյանը

«ՓՈՐՁ» ՀԱՆԴԵՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

«Փորձ» հանդեսը համազգային-պահպանողական հոսանքի հեղինակավոր հրատարակություններից էր. լույս է տեսել Թիֆլիսում՝ 1876-81թթ. (սկզբում՝ եռամսյա, իսկ 1879 թվականից՝ իբրև ամսագիր): Խմբագիրը նշանավոր հասարակական գործիչ և հրապարակախոս Աբգար Հովհաննիսյանն էր: Պարբերականը, չնայած պաշտոնապես ընդունել էր ազգային և գրական ուղղություն, բայց գործնականում գտնվում էր ռուսահայ հասարակական-քաղաքական կյանքի հորձանուտում, իր էջերում արտացոլում էր ժամանակի հայ իրականության բոլոր նշանակալի իրողությունները և երևույթները, նպաստում էր ոչ միայն արևելահայության առաջընթացին, այլև համակողմանի քննարկում էր արևմտահայության սոցիալ-քաղաքական կյանքի կենսական խնդիրները:

1877-78թթ.՝ պատերազմի նախօրյակին և ընթացքում, խանդավառված սլավոնական ժողովուրդների մոտալուտ ազատության գաղափարներով, պարբերականը հնարավոր էր գտնում ռուսական զենքի օգնությամբ ձեռք բերել նաև արևմտահայության քաղաքական ազատությունը: «Փորձը» հարցի լավագույն լուծումը համարում էր Արևմտյան Հայաստանում հայկական ինքնավարության ստեղծումը: Պատերազմի ընթացքը և սլավոնական ժողովուրդների ազատագրության հեռանկարը այն երաշխիքներն էին տալիս, թե վատթարագույն դեպքում, օսմանյան սահմանադրության ներքո, Հայաստանի անկախության պահանջի ազդեցությամբ և մեծ տերությունների հովանավորությամբ, հայերը պետք է առաջադիմեին, և այն էլ ոչ թե «Օսմանյան պետության զանազան անկյուններում», այլ Հայաստանում, որը այսուհետև, հավատացած ենք, էլ լոկ պատմական և աշխարհագրական տերմին չպետք է լինի, այլ վարչական մի մարմին, ինչպես Բուլղարիան, Լիբանանը և այլն»:

> *Եթե կառավարությունը չի ցանկանում զրկել իր վայրենաբարո պաշտոնյաներին, ապա ժողովուրդը պետք է մտածի ինքնապաշտպանական եղանակների մասին:*

Ըստ պարբերականի՝ «Տաճկական Հայաստանի ժամանակակից ցավը գաղթականությունն է. դա այնպիսի ցավ է, որ եթե շուտով նորա առաջը չառնվի, գուցե հետո ուշ լինի»: Արտագաղթը կանխելու համար «Փորձի» խմբագիրը առաջարկում էր ընկերություններ և բանկեր հիմնադրել, ճանապարհներ կառուցել, դիմել եվրոպական դրամատերերին և կանխել արտագաղթի ծավալումը: Աբգար Հովհաննիսյանը միջոցներ էր առաջարկում նաև մյուս աղետի՝ արևմտահայության կյանքի և գույքի անապահովության դեմ: Հանդեսը երրորդ ցավոտ խնդիրը՝ պետական պաշտոնյաների կամայականությունները, կապում էր թուրքական կառավարության բարբարոսական քաղաքականության հետ: Եթե կառավարությունը չի ցանկանում զրկել իր վայրենաբարո պաշտոնյաներին, ապա ժողովուրդը պետք է մտածի ինքնապաշտպանական եղանակների մասին: «Փորձի» խմբագիրն արևմտահայերին հորդորում է չքողնել երկիրը, և սուր ու հրացան գործածել խաղաղ ապրուստ գտնելու համար:

Իր հրատարակման առաջին իսկ համարից՝ պարբերականը լուսաբանում էր Բալկանյան երկրներում ծավալվող ազատագրական շարժումները, մեծ համակրանքով էր խոսում թուրքական լծի դեմ ոտքի ելած փոքր ժողովուրդների ազատագրական պայքարի մասին: Վկայակոչելով հույների պայքարի օրինակը՝ «Փորձի» հրապարակախոս Ստ. Պալասանյանը կանգ է առնում այն օրինաչափության վրա, չնայած որ իրենց ուժերով թույլ են, սակայն, նրանք հաղթում են պատմության օրենքների, ժամանակի ոգու և մանավանդ ազգայնության սկզբունքի զորությամբ: Հանդեսը գրում է. «Սերբիան ոտքի է ելել և ազատագրական իր պատերազմում ձգտում է հայրենի սահմանները պաշտպանելուց զատ՝ ցեղակից և հավատակից եղբայրներին ևս ազատել մահմեդականների լծից: Սլավոնների հերոսական պատերազմը տաճկական լծից ազատվելու համար ցույց է տալիս, որ նոքա հաստատապես վճռել են վաղ թե ուշ իրենց վշտերին վախճան տալ»: Սակայն իրատեսորեն գնահատելով ստեղծված կացությունը՝ «Փորձը» միաժամանակ այն միտքն էր հայտնում, որ եվրոպական տերությունները, իրենց շահերից ելնելով, երբեք թույլ չեն տա, որ «Տաճկաստանի կայսրությունը բոլորովին հիմնահատակ լինի», որ նրանցից յուրաքանչյուրն ունի իր սեփական շահերն Արևելքում: Հանդեսը վեր է հանում մեծ տերությունների շահախնդրությունների և այդ հենքի վրա նրանց միջև առաջացած հակասությունների պատկերը ու հանգում հետևյալին. «Պահպանել օտար տերությունների հակառակորդությունը և արծարծել հպատակ քրիստոնյա ժողովուրդների փոխադարձ ատելությունը, այդպիսով՝ «Արևելյան խնդրից» կազմել մի խավար լաբիրինթոս, մի վտանգավոր հրեշ, որ անդադար սպառնում է տակնուվրա անել Եվրոպան. ահա օսմանյան քաղաքականության գաղտնիքը»:

Անգլիական դիվանագիտությունը, նախկինի նման, խոսքով հանդես էր գալիս օսմանյան կայսրության «ամբողջականության» պաշտպանությամբ, սակայն Ռուսաստանի արտաքին քաղաքականության ծրագրի դեմ հակազդելու ավանդական այդ միջոցը, միաժամանակ քողարկում էր Մերձավոր Արևելքի տարածքային նվաճումների իր իսկ անգլիական ծրագրերը:

Ռուսաստանին նույնպես գրավում էին Մերձավոր Արևելքի, Արևմտյան Հայաստանի և Բալկանների ռազմավարական նշանակությունները: Արևելյան հարցի հետ կապված՝ մեծ ակնկալիքներ ուներ նաև Ավստրո-Հունգարիան, որը չէր դադարում հուսալուց, թե իրեն կհաջողվի իշխանություն ձեռք բերել Բոսնիայի և Հերցեգովինայի վրա: Ռուս-թուրքական պատերազմը շուտով ցույց տվեց, որ այդ հակասությունները բնավ հանդարտվելու միտում չունեն: Պատերազմի լուրը հուզեց ոչ միայն բալկանյան սլավոններին, այլև՝ ամբողջ հայությանը: Այն միտքը, որ Ալեքսանդր 2-ը մտնում էր Թուրքիայի դեմ պատերազմի մեջ՝ մահմեդական բռնատիրությունից ազատագրելու քրիստոնյաներին, նոր հույսեր էր ներշնչում նաև «Փորձ» հանդեսին: Հանդեսն ամբողջապես վեր էր ածվում մարտաշունչ մի հրապարակախոսության, որը կոչ էր անում բոլոր առաջադեմ մտածողներին պաշտպանել աշխարհի ազնիվ ժողովուրդներից մեկի իրավունքները՝ ի տրիտուր նրա վաստակի, արդարամտության և հավատարմության:

«Փորձը» պատերազմի ամբողջ ընթացքում հրապա-

ռակում էր ժամանակի ռուսական և եվրոպական թերթերում տպագրված այն հոդվածների համառոտագրությունները, որոնք առնչվում էին արևմտահայության ազատագրության հարցին: Օրինակ՝ «Մոսկովսկիե վեդոմոստի» հոդվածագիրը հարցնում էր. «Մի՞թե միջազգային դեսպանախորհրդում ոչ ոք չի պահանջի հայոց համար ամենաանհրաժեշտ իրավունքներ միայն այն պատճառով, որ այդ ազգը թեև տանջվում ու չարչարվում է, բայց միշտ համբերում է և երբեք չէ ապստամբում»: «Պրավոսլավնոե օբոզրենիեն» ինքնավարություն էր պահանջում հայերի համար, ինչպիսին պահանջում էին Բալկանյան երկրները: Արևմտահայության ազատագրության հարցում հետադիմական դիրք բռնած «Ս. Պետերբուրգսկիե վեդեմոստի»-ն անգամ պահանջում էր ազատություն տալ ասիական Թուրքիայի հայերին, ինչպիսի ազատություն պետք է ստանային Բալկանյան սլավոնները:

Ռուս-թուրքական պատերազմը վերջացավ սուլթանական Թուրքիայի պարտությամբ և ռուսական բանակների հաղթական երթն ավարտվեց Դանուբյան ռազմաճակատում՝ Կ.Պոլսի դարպասների առջև, իսկ Կովկասյան ռազմաճակատում՝ Էրզրումի գրավմամբ: 1878թ. հունվարի 19-ին կնքվեց Ադրիանապոլսի զինադադարը, իսկ մեկ ամիս անց՝ ռուսական դիվանագետները Շիպկայի, Պլևնայի ու Կարսի հերոսների սվիններով ուժով Սան Ստեֆանոյում, հաղթողի իրավունքով, իրենց պայմանները թելադրեցին Թուրքիային: Կ.Պոլսից 12 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սան Ստեֆանո ծովային ավանի այն ամառանոցում, որը պատկանում էր հայ մեծահարուստ Առաքել Տատյանին և որտեղ իջևանել էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, 1878թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) ստորագրվեց պատերազմի արդյունքներն ամփոփող Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որը նշանավորվեց՝ որպես Բալկանյան քրիստոնյաների ազատագրման մանիֆեստ: Անկախ էին հռչակվում Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան: Բուլղարիան դառնում էր ինքնավար իշխանություն և որոշ հարկեր պետք է վճարեր Թուրքիային: Նա ընդգրկելու էր Դանուբից ու Սև ծովից մինչև Էգեյան ծովն ընկած հսկա մի տարածություն, որտեղ ռուսական զորքերը մնալու էին երկու տարի: Ինքնավարություն էին ստանում նաև Բոսնիան և Հերցեգովինան: Ռուսաստանը ստանում էր 35 միլիոն ռուբլու ռազմատուգանք և տեր դառնում 1856թ. կորցրած Բեսարաբիային (բացի Դանուբի գետաբերանում գտնվող կղզիներից), Արևմտյան Հայաստանի 35.650 քառ. կմ տարածությամբ խոշոր մի հատվածի՝ Կարսին, Արդահանին, Բայազետին և մինչև Սողանլու (Մեծրաց լեռներ) ընկած տարածքին, ինչպես նաև կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Բաթումիին:

Սան Ստեֆանոն չլուծեց արևմտահայության հարցը: Արևմտահայության հարցը Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի ներքո ձևակերպվեց՝ որպես «բարելավումների» խոստում միայն: Այդ հոդվածի միակ օգուտը համայն հայության համար այն էր, որ Թուրքիան պաշտոնապես ճանաչում էր Օսմանյան կայսրության սահմաններում «Հայաստան» երկրի գոյությունը: Ռուսաստանը հանդես էր գալիս արևմտահայության պաշտոնապես հովանավորը և Արևմտյան Հայաստանի մի զգալի հատվածի միակցումը Ռուսաստանին՝ հնարավորություն էր տալիս այդ տարածքի հայությանը փրկվելու ֆիզիկական ոչնչացման անխուսափելի վտանգից: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, ինչպես նաև ողջ պայմանագիրը, չնայած իր հայանպաստ չափավոր տարողությանը, հայ հասարակական հոսանքների նշանավոր գործիչների, այդ թվում «Փորձ» պարբերականի քաղաքական տեսաբանների կողմից ընդունվեց հավանությամբ:

Սակայն 16-րդ հոդվածում ամրագրված այդ նվազագույնն անգամ իրագործման բախտի չարժանացավ: Իր բազում հրապարակումներում «Փորձը» տվեց «ինչո՞ւ» հարցի պատասխանը. Թուրքիայի ժառանգությունը վիճարկող տերությունները չհանդուրժեցին Ռուսաստանի միակողմանի հաջողությունը, հաջողություն, որը դժգոհություն առաջացրեց հատկապես Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի կառավարող շրջաններում, որոնց դիվանագիտությունը մեծ ջանքեր գործադրեց միջազգային կոնգրեսում Սան Ստեֆանոյի պայմանագիրն ամբողջապես վերանայելու ուղղությամբ:

Եվ այդպես էլ եղավ. 1878թ. հունիսին Բեռլինի կոնգրեսում արևմտաեվրոպական դիվանագիտությանը Անգլիայի գլխավորությամբ հաջողվեց արևմտահայության ճակատագրի որոշման խնդրում ևս Ռուսաստանին զրկել «մենաշնորհից»: Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինում փոխակերպվեց 61-րդ հոդվածի, որտեղ ասվում էր՝ «Բարձրագույն Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ շրջաններում իրագործել տեղական կարիքներից ելնող բարվոքումներ, բարենորոգումներ, ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Այդ նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին Բ. Դուռը պարբերաբար պետք է հաղորդի տերություններին, որոնք կհետևեն դրանց իրագործմանը»:

Այս ձևակերպումը, որտեղ անգամ չէր նշվում, թե այն չկիրառելու դեպքում եվրոպական տերությունները ի՞նչ միջոցների կդիմեն Թուրքիայի նկատմամբ, ընդունվեց և պայմանագրի մեջ մտավ «Հայկական բարենորոգումներ» անվան տակ:

Սան Ստեֆանոյի պայմանագրով՝ ռուսական զորքերի առկայության պայմաններում, բարենորոգումներ անցկացնելու երաշխիքը փոխարինվում էր վերոհիշյալ անորոշ բանաձևով:

Բեռլինի կոնգրեսից հետո «Փորձի» քաղաքական ուղեգծի մասին էլ ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ծանոթանալ մի կարևոր փաստաթղթի հետ, որը հրատարակվել է հանդեսի էջերում՝ նրա գոյության վերջին տարում:

1979թ. մայիսի 17-ին Թիֆլիսի ժողովարանում «Փորձի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանը կարդում է մի հրապարակային դասախոսություն, որը հետագայում տպագրվում է ամսագրի 1881թ. 1-ին և 2-րդ համարներում և առանձին գրքով լույս է տեսնում «Հայը և Հայաստանը օտարների աչքում» խորագրով: «Փորձի» խմբագրի այդ գրքույկը երկու նպատակ էր հետապնդում. առաջին՝ ցույց տալ, թե ի՞նչ կարծիք ունեն արտասահմանյան գործիչները հայերի մասին, որքանո՞վ են օբյեկտիվ արտացոլվում հայկական իրադարձությունները օտար հեղինակների և ճանապարհորդների երկերում, ինչպե՞ս է լուսաբանվում Հայկական հարցը եվրոպական երկրների

մամուլում: Աբգար Հովհաննիսյանի առաջադրած երկրորդ խնդիրն էր՝ անհրաժեշտ ճշգրտումներ կատարել օտարալեզու աշխատություններում, ցույց տալ դրանցում սպրդած սխալները, այն հաշվով, որ Հայաստանին և Հայկական հարցին նվիրված աշխատությունների հետագա հրատարակությունները հնարավորին ճշգրտությամբ ներկայացնեին իրական կացությունը: Եվ նա գերազանց կատարեց այդ խնդիրները, քանզի տիրապետում էր մի քանի օտար լեզուների, որն էլ նրան հնարավորություն էր տալիս անձամբ հետևել արտասահմանյան մամուլին և գրական նորույթներին:

Իր այդ աշխատության մեջ «Փորձի» խմբագիրը Հայաստանի և Եվրոպայի առնչությունների պատմությունը բաժանեց երեք փուլի: Դրանք են՝ նախազեյթունյան (երբ հայերը դիտվում էին որպես մեծ ձիրքեր ունեցող քրիստոնյա ժողովուրդ, որը քաղաքակրթություն էր տարածում Արևելքում), երկրորդ՝ Զեյթունից մինչև ռուս-թուրքական պատերազմն ընկած ժամանակաշրջանը (որը հրապարակախոսը կոչում է քաղաքական շրջան), 3-րդ՝ Սան Ստեֆանոյին հաջորդած ժամանակաշրջանը (որը պայմանականորեն «Միջազգային» է անվանում): «Փորձի» տեսաբան-խմբագիրը այս շրջանի վերջնագիծը համարում է այն գալիք ժամանակները, երբ «միջազգային» բառը կդադարեր լոկ խոսք լինելուց և Արևմտյան Հայաստանը կդառնար ինքնուրույն երկիր՝ միջազգային հասկացողությամբ:

«Փորձի» խմբագիրը դժգոհ էր Բեռլինի կոնգրեսի արդյունքներից: Կոնգրեսից հետո Աբգար Հովհաննիսյանը հայ ժողովրդին ինքնաճանաչողության կոչ էր անում, համոզված, որ ազգը ինչքան խորը պատկերացնի իր ստրկական վիճակը, այնքան լավ կկողմնորոշվի այդ վիճակից դուրս գալու ուղիները ճշգրտելու, այնքան հետևողական կլինի ցանկալի գալիքին հասնելու իր ձգտումների ու պայքարի մեջ, այնքան հավանական կդառնա Եվրոպայի կամ Ռուսաստանի օժանդակությունը: «Փորձի» խմբագրի համար հերթական կարևոր խնդիրը Արևմտյան Հայաստանի վարչական կառուցվածքի լուծումն էր: Ինքնորոշման ի՞նչ ուղիով պետք է ընթանա հայ հայրենիքը: Պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո «Փորձի» և նրա խմբագրի ամբողջ հրապարակախոսությունը ուղղված էր մեկ նպատակի՝ Արևմտյան Հայաստանի համար ամեն գնով ձեռք բերել երկրի ղեկավարման ինքնավար վարչաձև:

Այն բանից հետո, երբ Բեռլինի կոնգրեսի մի շարք մասնակիցներ հայ գործիչների պահանջը համարում էին «մի հանդուգն, ռոպեական ազդեցության տակ ներշնչված, կամ թե Թուրքիայի թշնամիներից դրդված գաղափար», «Փորձի» խմբագիրը որոշում է հակահարված տալ թերահավատներին և նրանց ծանոթացնել հարցի պատմությանը: 1880թ. «Փորձի» խմբագրությունը պատրաստում էր մի հոդված՝ «Հակոբ Շահամիրյանի մատենագրական գործունեությունը Հնդկաստանում» խորագրով, որը, փաստորեն, Հայաստանի ազատագրման և ինքնավարության համար հայ գործիչների մղած պայքարի պատմությունն էր: Հոդվածագիրն անդրադառնալով Բեռլինի կոնգրեսում արտահայտված այն կարծիքներին, թե ինքնավարության գաղափարը հանդուգն միտք է, ներկայացնում է ինքնավարության համար մղված պայքարի ավելի քան 150-ամյա պատմությունը, պատմական այն իրողությունը, որ ինքնավարության հարցը ռուսական բարձր ատյաններում քննարկվել է մի քանի անգամ և միշտ հնդկահայ գործիչների գործուն մասնակցությամբ:

Հոդվածի վերջին բաժնում խոսվում է Շահամիրյանի գործունեության, մասնավորապես, նրա «Որոգայթ փառաց» աշխատության մասին, ընդ որում՝ վերապատմվում են աշխատության այն հատվածները, որտեղ խոսվում է հանրապետական կարգերի առավելության մասին և նշավակվում է միապետական համակարգը:

Գրաքննության կողմից հոդվածը մերժվում է 1880 թվականի մայիսին: Արխիվում պահպանված զեկուցագրից պարզվում է, որ 1880 թվականին «Փորձից» մերժվել է ևս երկու հոդված («Մեծ և փոքր ազգությունները» և գերմաներենից թարգմանված «Արևելյան հարցի ամենահասարակ տարրերը»:

Աբ. Հովհաննիսյանին, այնուամենայնիվ, հաջողվում է (շատ ուշացումով) Շահամիրյանին նվիրված այդ հոդվածը տպագրել «Փորձի» 1881 թվականի երկրորդ համարում՝ Սրբուհի Երիցյանի ստորագրությամբ:

Նույն թվականի առաջին համարում նա զետեղում է նաև մեծ գործիչների ասույթները, ազգի և հայրենիքի մասին ասույթներ, որոնք խորհրդանշում էին խմբագրի հավատամքը «Փորձի» հրատարակման և հաջորդող տարիներին: Ահա այդ ասույթներից մի քանիսը. «Մարդուս առաջին առաքինությունն է՝ զոհել յուր անձը հայրենիքին», «Անկարելի է ստրկացնել մի ազգ, որ հաստատ կամք ունի ազատ լինելու», «Ազգերի բարօրությունը կարող է ծնվել միայն յուրյանց հողի վրա», «Ստրկացած ազգը երջանիկ օրեր չունի», «Ամենայն ազգ, որ ցանկացել է ազատություն, միշտ ազատ է եղել»…

> «Փորձի» խմբագիրը դժգոհ էր Բեռլինի կոնգրեսի արդյունքներից: Կոնգրեսից հետո Աբգար Հովհաննիսյանը հայ ժողովրդին ինքնաճանաչողության կոչ էր անում, համոզված, որ ազգը ինչքան խորը պատկերացնի իր ստրկական վիճակը, այնքան լավ կկողմնորոշվի այդ վիճակից դուրս գալու ուղիները ճշգրտելու, այնքան հետևողական կլինի ցանկալի գալիքին հասնելու իր ձգտումների ու պայքարի մեջ:

Ազատության ձգտելու և ինքնապաշտպանության դիմելու «Փորձի» կոչը բխում էր պատմական ժամանակաշրջանի ոգուց: Չէ՞ որ ռուս-թուրքական պատերազմից հետո նվազագույն բավարարություն իսկ չստանալով, արևմտահայերը մի շարք գավառներում դիմում են վճռական միջոցների: 1879 թվականից զինվում են Մուշը, Էրզրումը (Կարին), Վանը: Սպասվող ընդվզումներին օժանդակելու նպատակով Թիֆլիսում ու Երևանում կազմակերպվում են գաղտնի խմբակներ և կամավորական ջոկատներ: «Փորձը»՝ այն պարբերականներից և Պարոնյանն այն հրապարակախոսներից մեկն էր, որոնք իրենց գործունեությամբ ոչ միայն արձագանքում էին ըմբոստացող օրերի կանչին, այլև իրենք էին փորձում նպատակասլաց հունի մեջ դնել գալիքի ընդվզումները: Սակայն 1881թ. ընդհատվում է «Փորձի» հրատարակությունը, հրատարակություն, որի փորձը ապարդյուն չանցավ: Հարկադրված լինելով դադարեցնել «Փորձ» ամսագրի աշխատանքները (ֆինանսական պատճառներով)՝ Աբ. Հովհաննիսյանը 1881թ. վերջին ձեռնամուխ է լինում նոր պարբերականի՝ «Արձագանք» շաբաթաթերթի հրատարակությանը, որը շարունակում է նախորդի բարի ավանդույթները:

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՔԱՌՍ ԵՎ ԿԱՋՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

(Արդյունաբերականցումը ազգային և հասարակական կյանքի զարգացման իդեալ. XIX դարի 70-90- ական թթ.)

19-րդ դարի կեսերից նավթի արդյունաբերման և առևտրի շնորհիվ Բաքվում ձևավորվեց հայ առևտրական և արդյունաբերական բուրժուազիա: Նավթային արդյունաբերության արագ զարգացման պատճառով մեկ-երկու տասնամյակում Բաքուն հայտնվեց տնտեսական աշխարհի ուշադրության կենտրոնում: Նավթի առևտրի շնորհիվ, ինչը քաղաքի հարստության գլխավոր աղբյուրն էր, փոքր և աննշան այդ գյուղաքաղաքը դարձավ Անդրկովկասի առաջին արդյունաբերական քաղաքը:

Հետազոտելով Բաքվի հայ արդյունաբերական բուրժուազիայի անցած ուղին և բնույթը՝ Շիրվանզադեն շեշտադրում է մի առանձնահատկություն, ինչը ածանցյալ բացասական շատ իրողությունների պատճառ դարձավ տեղի հանրության կյանքում: Քաղաքի կյանքի և հարաբերությունների կատարյալ անկազմակերպ և քաոսային բնույթը նա պատճառաբանում է հիմնականում Բաքվի տնտեսական կյանքում կատարված հանկարծակի հեղաշրջմամբ, ինչը և կատարյալ «բարոյական հեղափոխություն ձգեց տեղացիների կյանքի մեջ»: Այդ հանկարծակի փոփոխության պատճառը նավթի հայտնագործումն էր, ինչի շնորհիվ արդյունաբերողներ դարձան և հարստացան հիմնականում տեղացի չարչիները, գործակատարները, երկրագործ գյուղացիները: Նավթային արդյունաբերության սեփականատեր դարձան հասարակ գրագիտությունից զուրկ մարդիկ, մինչդեռ առաջընթացի էական նախադրյալը, ըստ էության, տնտեսության այդ ոլորտի **գիտական** կազմակերպումն է:

Շիրվանզադե

Շիրվանզադեն շեշտադրում է, որ տնտեսական գործունեության համար պահանջվում է համապատասխան մասնագիտացում և գործնական փորձառություն, ինչպես նաև արդյունաբերության կազմակերպման և տնտեսավարման **գիտական** միջավայր, որը դեռևս չէր ձևավորվել Բաքվի նավթարդյունաբերողների շրջանում, ինչը և հասարակական կյանքի զարգացման և առաջընթացի գլխավոր խոչընդոտն էր: «Գիտական իմացությունը մշակութային գործունեության կողմերից մեկն է, ինչը այս կամ այն աստիճանով մշտապես, իսկ որոշակի ժամանակաշրջաններում առանձնապես ուժեղ կերպով ազդում է մշակույթի բնույթի և հասարակական կառուցվածքի վրա ամբողջությամբ» (П. П. Гайденко, Эволюция понятия науки , М., 1980, с. 5):

Հայտնի է, որ դրապաշտ փիլիսոփաների կարծիքով, հասարակարգի էվոլյուցիոն զարգացման և առաջընթացի բարձրակետը **արդյունաբերական քաղաքակրթությունն է**: Ճանաչողության այս դիրքերից է Շիրվանզադեն իր հոդվածներում հետևողականորեն հիմնավորում այն տեսակետը, ըստ որի, տնտեսական այդ ոլորտի՝ նավթարդյունաբերության, հետևաբար նաև հասարակական կյանքի զարգացման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է «...արդյունաբերության հին նահապետական ձևերը փոխարինել նոր՝ **գիտության** պահանջներին համապատասխան ձևերի», քանի որ այս իրողության հետ է կապվում դրապաշտների ուրվագծած ապագա հասարակության և քաղաքակրթության իդեալը: «Իսկ **ապագան** այն ժամանակ միայն կարող է ապահոված համարել, երբ արդյունաբերությունը, դուրս բերելով նահապետական դրությունից, կդրվի **գիտական** անհրաժեշտ հիմունքների վրա» (9, 356, 413):

Միանգամայն բնական է, որ նավթի հանքահորերի և գործարանների միանգամից սեփականատեր դարձած երեկվա երկրագործը, սայլապանը, մրգավաճառը, խանութպանը, չունենալով մտավոր և բարոյական համապատասխան նախապատրաստություն, սկսեց նավթի արդյունաբերությունը կազմակերպել վաճառականությանը իրենց բնորոշ եղանակներով: Եթե օտար արդյունաբերողի «զենքերն են՝ **գիտություն, դրամ և եռանդ՝...** հանուն **հեռու ապագայի** կանոնավոր և հաստատուն շահերի, ...այնինչ՝ տեղացիները մեծամասնորեն գործին վերաբերվում են իբրև չարչի-վաճառականներ, որոնց թշվառ զենքերն են՝ **խորամանկություն, անտեղի խնայողություն, տգիտություն»** (Տե՛ս, 9, 414):

Մտավոր և բարոյական այս նախադրյալները, ըստ էության, չափազանց աննպաստ են արդյունաբերության կազմակերպման և զարգացման տեսանկյունից: Եթե վերջիններս, Շիրվանզադեի կարծիքով, վաճառականական գործունեության մեջ ինչ-ինչ ձևերով կարող են դրսևորվել, ապա արդյունաբերության կազմակերպման գործում միայն խանգարող և կազմալուծող դեր են խաղում: Շիրվանզադեի կարծիքով, տեղացիների գլխավոր սահմանափակությունը՝ «տնտեսության այդ երկու ֆակտորները», իրարից չզանազանելն է: Վաճառականությունը, ինչ-որ տեղ, առանց **գիտության** կարող է դրսևորվել, իսկ արդյունաբերությունը չի կարող գործարկվել առանց դրա: Իր հերթին արդյունաբերությունն անհնար է կազմակերպել վաճառականությանը բնորոշ եղանակներով, ինչը Բաքվի հանրության կյանքը քաոսի վերածող գլխավոր պատճառներից մեկն է:

Հայ գործարանատերերից և ոչ մեկը չի մտածում ընդլայնել իր արդյունաբերության նախադրյալները, այլ մի որոշ գումար վաստակելով, տրվում է «ցանցառ և ծիծաղաշարժ շռայլությունների»՝ դառնալով հանրության կյանքի խեղված բարոյական մթնոլորտի պատճառ: «Վերաբերելով այդ գաղափարը Բաքվի տեղացի արդյունաբերներին, մենք գալիս ենք շատ անմխիթար եզրակացության: Մենք սոցա կյանքում նկատում ենք հանկարծակի բարոյական մի փոփոխություն: Երեկվա հասարակ կոշկակարը, ջրկիրը, մշակը, գործակատարը, երկրագործը, նավթային արդյունաբերության շնորհիվ՝ մի քանի տարվա ընթացքում՝ դառնալով նշանավոր հարստության տեր, այսօր արմատապես փոխվելով, բարոյական կետից ներկայացնում են մեր ժողովրդի մեջ մի անմխիթար դասակարգ: Հայտնի է, որ հարստությունը ի չարը չգործ դնելու համար հարկավոր է ունենալ քիչ թե շատ **բարոյական ուժ**, նույնպես հայտնի է, որ այդ ուժը մարդուն տալիս են ընտանեկան կրթությունը, շրջապատող հասարակությունը կամ գիտությունը: Այդ տեսակ բարոյական ուժից զուրկ լինելով՝ Բաքվի հասարակությունը յուր նյութական կարողությունը գործ է դնում դեպի չարը

թե՛ ներկայի, թե՛ ապագայի վերաբերությամբ» (9, 419):

Այս երևույթը դրապաշտների կողմից դիտվում է տնտեսական, հասարակական և քաղաքակրթական առաջընթացի լուրջ խոչընդոտ: Քանի որ, ըստ դրապաշտների, «մարդիկ ինչքան նվազ բարեխիղճ են իրենց դրամական պարտավորությունների մեջ, այնքան բարձր է տոկոսի նորման, այնքան մեծ է շրջանառությունից թաքնվող կապիտալը, այնքան զգալի են արդյունաբերականացման տանող ճանապարհի խոչընդոտները» (Основания науки о нравственности Герберта Спенсера, СПб, 1880, с. 259):

Ներքոհիշյալ այս օրինաչափությունը բնորոշ է, իհարկե, կազմակերպված հասարակարգի տնտեսությանը, սակայն այդ երևույթն իր բացասական ազդեցությունն ուներ նաև նոր արդյունաբերականացող հասարակարգի զարգացման վրա: «Մենք գտնում ենք,-գրում է Շիրվանզադեն,-որ Բաքվի տեղացիները, նամանավանդ՝ սոցանից երիտասարդները, վերջին տասնյակ տարիներ-


Բաքվի նավթահորերը...
1900թ.

ի ընթացքում, բացի անբարոյականությունից, շռայլությունից, ոչինչ չեն կարողացել օտարներից ընդունել իրանց կյանքի մեջ: Դորա միակ հիմնական պատճառը, կրկնում ենք, նոցա **տնտեսական դրության հանկարծակի փոփոխություն է»** (9, 420):

Իրականության քաոսային դրության արմատական պատճառ էր համարվում նաև հանրության գիտակցության մեջ կատարված հեղաշրջումը, ինչը ստեղծել էր պատկերացումների, բարոյական ըմբռնումների կատարյալ խառնաշփոթ: «Երկու գծեր են բնութագրում մեր ժամանակաշրջանի բարոյականությունը՝ գաղափարների քաոսը և լիարժեք ճշմարտության կրքոտ որոնումը,- գրում է 19-րդ փիլիսոփան: Մյուս կողմից, նոր իդեալների ճշմարիտ և վսեմ բովանդակությունը, չնայած և վերջնականապես հաստատված է բարոյական գիտակցության համար, սակայն դեռևս տեղ չի գտնում իրական կյանքում, ինչը և ճշմարտությունը դարձնում է պատրանք: Այսպիսին է մեր ժամանակի բարոյական քաոսը, որտեղ հին ճշմարտությունը թվացյալ հերքված է, իսկ նոր ճշմարտությունը՝ տկար է, անզոր: (Н. Ланге, История нравственных идей XIX века, СПб, 1888, с. I):

Սակայն, ըստ դրապաշտների, հասարակությունը քաոսային վիճակում երկար չի կարող մնալ, այն դուրս է գալիս և ձեռք բերում զարգացման հեռանկար իր իսկ բնության զարգացման և մարդկային էվոլյուցիայի բնականոն տրամաբանության գործակիցներով: «Մարդկային պատմությունը նույնպիսի բնական բան է, ինչպես ամենայն բան աշխարհում, նրա զարգացման ուղղվածությունը ելնում է միայն իր տարրերից, այն չի կառավարվում ոչ մի արտաքին ուժի կողմից, այլ ծնվում է ներքին ուժերի խաղով: Այն չի ձգտում ոչ մի նպատակի, այլ պարզապես հանգում է որոշակի արդյունքների: Եվ այդ գլխավոր արդյունքը արտահայտվում է մարդկային ոգու առաջընթացի մեջ: Խորանալով պատմության մեջ՝ մենք տեսնում ենք, որ ի թիվս բոլոր այդ կոտորածների և ավերածությունների սերը **կարգուկանոնի** հանդեպ չի դադարում աննկատ ոգևորել մարդկային ցեղը և պահպանում է նրան վերջնական կործանումից: Այդ սերը մարդկային սրտի բնական զսպանակներից մեկն է, որը մշտապես վերականգնում է իր ուժը: Այդ սերն է ստեղծել միջազգային իրավունքը, այդ նա է նախագծել տարբեր ժողովուրդների դատաստանագրքերը և կանոնագրքերը, այդ նա է տունկիների կամ թե Ֆորմոզա կղզու բնիկների մեջ հարուցել պարտքի հանդեպ և այն կատարողների մեջ այնպիսի հարգանք, ինչպես որ էր Հռոմում: Այսպիսով՝ մարդու մեջ գոյություն ունի **«բանական սկիզբ»**, կամ «**մեխանիկական բնազդ»**, ինչը ներշնչում է նրան տարբեր օգտակար գաղափարները, և **«արդարության բնազդ»**, ինչը նրան հուշում է իր բարոյական գաղափարները: Այդ երկու բնազդները կազմում են նրա օրգանական կազմակերպվածության մասը. դրանք նա ստանում է ի ծնե: Ահա թե ինչու մարդը ունակ է կատարելագործվելու իր իսկ բնույթի շնորհիվ, հետևաբար, երբ նա բարելավում է իր խելքը կամ իր դրությունը, ապա նա միայն հարմարվում է իր բնության օրենքներին» (И. Тен, «Происхождение общественного строя современной Франции», т.1, с. 253):

Մարդու բնության օրենքների առաջնայնությունը պրոգրեսի և քաղաքակրթության ձևավորման մեջ զարգացվում էր դրապաշտների մեծ մասի կողմից: Այսպես՝ Հ. Սպենսերը հիմնավորում է այն տեսակետը, ըստ որի՝ հասարակական երևույթները հիմնականում որոշարկվում են անհատի բնության հոգեկան և ֆիզիկական ոլորտներից: «Մարդն այն ժամանակ միայն ընդունակ կլինի հասարակական կյանքի ամենապարզ իրողությունները, ինչպես, օրինակ՝ առաջարկության և պահանջի մեջ եղած հարաբերությունները հասկանալու, երբ բավական քանակությամբ սկզբնական, փորձառական գաղափարներ ստանա մարդկային բնության մասին: ...Հասարակությունը բաղկացած է անհատներից, բոլորը, ինչ որ կատարվում է հասարակության մեջ, կատարվում է անհատների հավաքական գործողություններով, հետևաբար անհատական գործողությունները ծառայում են՝ իբրև բոլոր հասարակական երևույթները հասկանալու բանալի: Բայց անհատների գործողությունները առաջ են գալիս բնության օրենքներից, ուստի այդ գործողությունները հասկանալու համար պետք է նրանց օրենքները հասկանալ, իսկ այդ օրենքները, իրենց ամենապարզ ձևով, դուրս են գալիս ընդհանրապես մարմնի և հոգու օրենքներից: Սրանից հետևում է, որ սոցիոլոգիան չի կարելի ուրիշ կերպ հասկանալ, բայց եթե նախապես կենսաբանություն և հոգեբանություն սովորելով՝ կամ ավելի պարզ ասած, բոլոր հասարակական երևույթները կյանքի երևույթներ են, բառի ամենաընդարձակ նշանակությամբ, և ենթարկված են կյանքի օրենքներին» (Հերբերտ Սպենսեր, Դաստիարակություն..., էջ 89): Հարցադրման շարադրանքի փոքր ինչ ծավալումը մեր կողմից՝ նպատակ ունի Շիրվանզադեի ստեղծագործությունը առավել հանգամանորեն դիտարկել իր մետատեքստային սնուցիչ իմացաբանության համատեքստի շրջանակներում, որից դուրս տարվող հետազոտությունները կարող են եղծել այդ ստեղծագործության իմացաբանական և պատմամշակութային բովանդակությունը:

Հայ հեղինակը, եվրոպացի տեսաբանների համանմանությամբ, մարդու հասարակական վարքի պատճառակիրները բացահայտում և գնահատում է էվոլյուցիան կազմակերպող հոգեբանական վերոհիշյալ նախադրյալների՝ «**բանական սկզբի**»՝ «**մեխանիկական բնազդի**» և «**արդարության բնազդի**» տեսանկյունից, հիմնավորելով, որ «**բնավորության** կրթությունը ահագին ազդեցություն ունի **մտքի** արտադրությունների վրա»(9, 474):

«Հայ մտավորականները շատ քիչ բացառությամբ,- գրում է նա ,-լավագույն դեպքում կարողանում են զարգացնել իրենց **միտքը,** իսկ կրթել իրենց **բնավորությունը** ավելորդ են համարում իրենց համար» (9, 474): «**Արտի դատաստանը** և **խղճի օրենքը** վաղուց հետե նորա համար գոյություն չունին. կա միայն **արտաքին իրավունք**»,-բնութագրում է հայ վաճառականին (9, 431): Այսինքն՝ այս պարագայում ևս գործում են դեռևս **արտաքին** քաղաքակրթության՝ ավատական ինստիտուտների և հոգեկերտվածքի լծակները: Անմխիթար տպավորություն է թողնում նաև երիտասարդությունը: Էվոլյուցիայի ցածր սանդղակի վրա գտնվող այդ անհատների կյանքը ևս զուրկ է բարոյական և հոգեկան բարձրագույն մղումներից և անմնացորդ ենթարկված է զգայական, կենդանական մութ բնազդներին: Հոգեկան այս որակների առկայությունը մեծ չափով խոչընդոտում է էվոլյուցիայի ընթացքը: «Ակնհայտ է, որ գեդոնիստական էթիկան եթե գլխավորապես նկատի ունի այս կամ այն արարքի անմիջական ազդեցությունը մարդու երջանկության վրա, ապա նա դատապարտում է նման այն արարքը, որը շուրջ բոլորը ստեղծում է դժբախտություն, իսկ էվոլյուցիոն էթիկան, մանավանդ եթե նկատի ունի արարքների **հեռավոր արդյունքները**, ապա խստորեն դատապարտում է այն արարքը, որը ապագա սերունդների ժառանգության մեջ բարձրակարգի փոխարեն թողնում է ցածրակարգ կազմություններ (организации) Сочинения Герберта Спенсера, Основания этики, иев, СПб, Харьков, т. 5, ч. II, с. 14...): Բաքվի նորագոյացած հարուստ խավը, ըստ էության, պատկանում է հիմնականում զգայական վայելքների աշխարհին: Համանման վարքը զուրկ է սիմպատիկ մղումներից, նպատակներից, ինչը և հիմնավորապես խանգարում է հանրության կատարելության առաջընթացին: «Իսկ ես եղել եմ **ճակատագրի մի կույր գործիք**, ... մեր միջավայրն առայժմ տալիս է միայն և միայն ապականություն,-խոստովանում է «Քաոսի» Միքայելը,- որի կատարյալ մարմնացումը ես եմ ու ինձ նմանները, որոնց թիվը շա՜տ , շա՜տ է: Հիշում եմ իմ վատթար, **աննպատակ** ու նողկալի կյանքը» (3, 419):


Հերբերտ Սպենսեր

Այսինքն՝ պատմական անհատի հասարակական վարքը դրսևորվում է հիմնականում արտաքին քաղաքակրթության արժեքային համակարգի շրջանակներում, և կամ բնազդների ենթակայությամբ, մինչդեռ Շիրվանզադեի ողջ ստեղծագործությունը համակված է ներքին քաղաքակրթության բնութագրիչների և նախադրյալների (խիղճ, պատիվ, արդարություն, ազնվություն, այլասիրություն, կատարելություն և այլն) արծարծումներով և շեշտադրմամբ, քանի որ, դրապաշտության հիմնավորմամբ, մարդկության առաջընթացը դրսևորվում է առաջին հերթին հենց նախասկզբնական բնազդային կապերի հիմքի վրա ձևավորված պարտադրողական հիմնարկների, գրված և չգրված օրենքների (արտաքին քաղաքակրթություն) ենթակայությունը հաղթահարելով և ճշմարտության ու բարու նորմերի շնորհիվ ավելի ու ավելի ներքին բարոյականության իդեալին մոտենալու իրողությամբ (Տե՛ս Энциклопедический словарь Брокгауза и Эфрона, т. 13, с. 67):

Մարդկային հասարակության անհամասեռ բաղադրատարրերը այս պարագայում ներկայացնում են ոչ թե մեխանիկական գումար, այլ մեկը մյուսի հետ ներքուստ փոխհամակցված և սերտորեն համաձայնեցված օրգանական ներդաշնակ հասարակություն: «Հնազանդվելով ամոթի, մարդկայնության, **պատվի** և **խղճի** տիրական ձայնին՝ երբևէ անհայտ և լոկ շատ դանդաղ ճանապարհով գոյացած բոլոր այս կանոնները կարող են կոչվել **հոգիների քաղաքակրթություն**: Դրանց սրբությունը չի նվազում այն բանից, որ մենք դրանք ընդունում ենք անքնին, սոսկ հավատ ընծայելով. և ավելի սրբազան են դառնում դրանք միայն, երբ ենթարկվելով հետազոտության և ողջ պատմության ընթացքում հետամտորեն բացահայտվելով, պարզվում են մեզ համար որպես այն **խորհրդավոր ուժը,** որը նախկին կենդանական հոտը աստիճանաբար վերածել է ժամանակակից մարդկային հասարակության: Ընդհանրապես կարելի է ասել, որ ինչքան տարածված և հին է ինչ- որ սովորույթ, այնքան առավել հիմնավոր է, այնքան առավել խորն են դրա դրդապատճառները, դրդապատճառներ՝ քաղված ֆիզիոլոգիայից, հիգիենայից և հասարակական շրջահայացությունից» (И. Тэн, Происхождение общественного строя современной Франции, т. 1, стр. 292): « Բավական է պետությանը, միայն ուշադիր պաշտպանել մարդկանց **խիղճը** և **պատիվը,** և նա կտեսնի, ինչքան արագ, ժամ առ ժամ, ըստ ժամանակի և տեղի պայմանների, կսկսեն բազմանալ ամենաջանասեր և շնորհալի աշխատողներ, հողագործներ, գործարանատերեր, վաճառականներ, գիտնականներ, արվեստագետներ, ամուսիններ, հայրեր և մայրեր, հայրենասերներ, մարդասերներ և գթության քույրեր» (И. Тэн, Социализм как правительство, СПб, 1884, с. 60-61):

«Քաոսում» կան արդեն այդ հերոսների նախատիպերը (Սմբատ, Միքայել, Անտոնինա Իվանովնա, Դավիթ Զարգարյան, Շուշանիկ, մշակներ և այլք), որոնց հոգեբանությունը և բարոյական գիտակցությունը դրսևորվում են նոր-նոր սաղմնավորվող այլասիրության ենթակայությամբ: Վեպում տարբեր առիթներով հնչեցվում է անձի հասարակական վարքի այդ ստորոգելիները անխաթար պահելու անհրաժեշտությունը: «Երկուսդ էլ միմյանց խաբել եք և գողացել ուրիշների **պատիվը,**- հանդիմանում է Սմբատը Միքայելին,- ահա ինչու արածդ անբարոյական է...»: «Խաբել մտերիմ ընկերոջը՝ և նրա **պատվի** գնով հաճու՜յք վայելել-ահա՝ ինչումն էր բուն ախտը Սմբատի հայացքներով»:

«Քաոսում» Շիրվանզադեն գեղարվեստորեն հիմնավորում և հավաստում է, որ հանրության կյանքը և հարաբերությունները քաոսային վիճակից կվերաճեն հասարակական կազմակերպվածության անհատի բնական էության հենց այդ նախադրյալների՝ **խղճի, պատվի** ուժով նաև: Այդ է պատճառը, որ Շիրվանզադեն հայ հասարակական կյանքի իդեալը խարսխում է զարգացման այդ պատճառակիրներին և նաև գեղարվեստի հնարավորություններով այդքան հանգամանորեն հետազոտում է հոգեբանական և բարոյական այդ կարգերը իր երկերում: «Քաոս» վեպը, և առհասարակ Շիրվանզադեի ստեղծագործությունները, պատվի, խղճի, ընտանիքի, հասարակության գիտական կազմակերպման, կնոջ դերի, ազգային կյանքի էվոլյուցիոն զարգացման հեռանկարի, կյանքի արդյունաբերականացման և այլ դրապաշտական խնդիրների արծարծման համալիր գեղարվեստականացում է և չափազանց ինքնատիպ է 19-րդ դարի գրականության մեջ իր հարցադրումների հրատապությամբ և բազմազանությամբ:

ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅՈՑ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ԿԱՄ «ՊԱՐՈՆ 5%»

Գալուստ Կյուլպենկյանն այն եզակիներից էր, որ լիովին և լավագույնս իրացրեց ճակատագրի ընձեռած հնարավորությունը, այն զուգակցեց իր բնատուր խելքի, հրաշալի կրթության, ազնվազարմության հետ և հասավ փայլուն արդյունքների: Ավելի քան կես դար նա աշխարհի և ժամանակի ազդեցիկ մարդկանցից մեկն էր, և առանց նրա մասնակցության միջազգային որևէ խոշոր նավթարդյունաբերական գործարք չէր կայանում:

Նա առաջինն էր, որ մասնագիտական ունակությունների շնորհիվ կանխագուշակեց օսմանյան Թուրքիայի, Իրաքի, Արաբական թերակղզու և Պարսից ծոցի նավթային խոշորագույն պաշարների գոյությունը ու եվրոպական առաջատար երկրներին ներգրավեց դրանց շահագործման մեջ: Այսպիսով՝ նա ուղղակիորեն վերափոխեց աշխարհի կացութաձևը, դրդեց վիթխարի փոփոխությունների, որովհետև սկսեցին խարխլվել ամերիկյան ու ռուսական (իմա՝ Բաքվի) նավթարդյունաբերության տիրապետող դիրքերը: Իսկ դա հղի էր լրջագույն հետևանքներով:

Դեռևս 1898թ. նշանակվելով օսմանյան Թուրքիայի դեսպանատների տնտեսական խորհրդական Փարիզում ու Լոնդոնում, իսկ 1902թ. ընդունելով բրիտանական հպատակություն՝ Կյուլպենկյանը եվրոպական այդ երկու հզոր երկրների ուշադրությունը հրավիրեց միջինարևելյան նավթարդյունահանման վրա:

Նրա ջանքերով Իրաքի նավթապաշարների շահագործման նպատակով 1912թ. ստեղծված թուրքական նավթային ընկերության մեջ 35 տոկոս բաժնեմասը պատկանում էր Թուրքիայի ազգային բանկին, 25-ը՝ անգլո-հոլանդական խոշորագույն Ռոյալ Դատչ Շել կոնցեռնին, 25-ը՝ գերմանական բանկին (Դոյչե բանկ), իսկ 15 տոկոսը՝ անձամբ իրեն:

Սակայն աշխարհը չէր կարող հեշտությամբ համակերպվել նոր իրողությունների հետ: Մի կողմից՝ Եվրոպայում լիակատար տիրապետության ձգտող Գերմանիան խորացնում էր ռազմաքաղաքական ու տնտեսական հարաբերությունները օսմանյան Թուրքիայի հետ (այդ ժամանակ նույնիսկ յուրատեսակ «սև հումոր» կար. ասում էին՝ Վիլհելմ 2-րդը մահմեդականություն է ընդունել), մյուս կողմից՝ դա անընդունելի էր Պարսկաստանում «խրված» Անգլիայի համար: Ստեղծվեց անգլո-պարսկական նավթային ընկերությունը՝ ներկայիս Բրիթիշ փեթրոլիումը (BP), որի շահերից (նույն է թե՝ սեփականաշահերից ելնելով) Բրիտանական կառավարությունը թուրքական նավթային ընկերությանը ստիպեց վերաբաշխել մասնաբաժինները: Այդ բարդ թնջուկի հարթումը վերապահվեց բրիտանահպատակ Կյուլպենկյանին: 1913-14թթ. նա բանակցային, դիվանագիտական բացառիկ տաղանդով կարողացավ այնպես անել, որ Թուրքիայի ազգային բանկի մասնաբաժիններն անցնեն անգլո-պարսկական նավթային ընկերությանը, սակայն նվազեց նաև սեփական մասնաբաժինը՝ հասնելով 5 տոկոսի: Այդ տոկոսադրույքը ամրագրվեց ընդմիշտ, ինչի շնորհիվ էլ նա համաշխարհային բիզնեսի պատմության մեջ մնաց «Պարոն 5%» մականվամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո օսմանյան կայսրությունը փլուզվեց, սակայն վերջինս հասցրեց Հայոց ցեղասպանությունն իրականացնել: Աշխարհի քարտեզի վրա երևան եկան նոր երկրներ, ինչն անխուսափելիորեն հանգեցրեց նաև տնտեսական շահերի վերաբաշխման: 1928թ. Կյուլպենկյանի մտահղացմամբ «գծագրվեց» նավթային մի նոր քարտեզ՝ նշանավոր «Կարմիր գիծը», որտեղ նորաստեղծ Իրաքի նավթային ընկերության մեջ իրենց մասնաբաժիններն ունեցան անգլո-պարսկական նավթային ընկերությունը, Ռոյալ Դատչ Շելը, ֆրանսիական նավթային ընկերությունը և Մերձավոր Արևելքի զարգացման կորպորացիան՝ ամերիկյան վեց խոշոր նավթային ընկերությունների միակցությունը: Կյուլպենկյանի 5 տոկոսը կենտրոնացավ Կանադայի Տորոնտո քաղաքում և սկսեց վերահսկվել նրա լոնդոնյան գրասենյակի կողմից: Հետագայում ստեղծվեց «Պարտէքս» ընկերությունը, որի գրասենյակը գտնվում էր Պանամայում, և որը համակարգում էր Կյուլպենկյանի բոլոր գործառնությունները:

Կյուլպենկյանն ուներ կյանքի մի կողմ ևս, մի «թուլություն», որը նրա էության անբաժանելի մասն էր՝ կենսիմաստներից մեկը. դա հին, անտիկ իրերի հավաքումն էր: Մոլուցքի հասնող այդ կրքում՝ նա առաջնորդվում էր հետևյալ սկզբունքով՝ «Միայն լաւագույնը բաւական լաւ է ինձի համար»: Տիրելով վիթխարի կապիտալի (որոշ աղբյուրների համաձայն՝ 3 միլիարդ ֆունտ ստեռլինգի)՝ Կյուլպենկյանն իր կյանքի ընթացքում ձեռք բերեց աշխարհի տարբեր ժողովուրդների արվեստի ու մշակույթի 6.000 եզակի նմուշներ՝ հին դրամներ, մեդալներ, կտավներ, արձանիկներ, հախճապակե իրեր, կահ-կարասի, ձեռագրեր, գրքեր, թանկագին քարերից ու մետաղներից պատրաստված իրեր և այլն: Այս բոլորը նա համարում էր իր «զավակները» և գրում. «Յիրաւի, կը զգամ, որ անոնք մաս կը կազմեն հոգիիս ու սրտիս»: Ժամանակի և իրադարձությունների բազում փորձություններից իր «զավակներին» փրկելով՝ նա, ի վերջո, 1953թ.՝ մահվանից երկու տարի առաջ, այդ ամենը կտակեց Պորտուգալիային, և 1969թ. Լիսաբոնում բացվեց «Գալուստ Կյուլպենկյան» թանգարանը՝ այսօր աշխարհում լավագույններից մեկը:

***

Կյուլպենկյան տոհմն ունի հնամենի պատմություն: Այն սերում է Ռշտունյաց նախարարական տոհմից, որն իշխում էր Վանա լճի հարավային կողմում: 11-րդ դարում՝ Վասպուրականի Սենեքերիմ թագավորի տիրապետության շրջանում, Ռշտունիներն ընտանիքներով գաղթում են Կապադովկիա և բնակություն հաստատում Կեսարիայում՝ հանդիսանալով Թալաս գյուղաքաղաքի հիմնադիրներից: Այստեղ սկսում են կրել բյուզանդական ազնվականական տիտղոս՝ Վարդ-Պատրիկ, որը 17-րդ դարում՝ օսմանլու թուրքերի ժամանակ, թարգմանվում և ստանում է Կյուլպենկյան ձևը, ընդ որում՝ ավելանում է «ն» տառը, որպեսզի «բեկ» բառը չգրգռի թուրքերին:

Մինչ Գալուստը՝ այս գերդաստանի անդամները, ճնշող մեծամասնությամբ վաճառականներ, հաստատվել էին Զմյուռնիայում, Կ.Պոլսում, Մանչեստրում, Լոնդոնում, Փարիզում, Մարսելում, ԱՄՆ-ում, Պարսկաստանում, Եգիպտոսում և հայտնի էին իրենց ազգանպաստ գործունեությամբ: Միայն Թալասում նրանք 1848թ. կառուցել են Վարդ-Պատրիկյան վարժարանը, իսկ 1860թ.՝ համանուն օրիորդաց վարժարանը:

Գալուստը ծնվել է 1869թ. Կ.Պոլսում, նախնական կրթություն ստացել է տեղի Արամյան-Ունճյան դպրոցում և Սեն-Ժոզեֆ ֆրանսիական վարժարանում: Ֆրանսերենը կատարելագործելու նպատակով մեկնել է Մարսել, ապա՝ տեղափոխվել ծնողների մոտ՝ Լոնդոն, որտեղ 1887թ. գերազանցությամբ ավարտել է Քինգզ քոլեջը՝ ստանալով ճարտարագետի մասնագիտություն: Մինչև 1920թ. ապրել է Լոնդոնում, ապա՝ տեղափոխվել Փարիզ և գերմանական օկուպացիայից հետո, 1942թ. բնակություն հաստատել Լիսաբոնում: Պորտուգալիան չեզոք երկիր էր և նրան դուր էր գալիս իր հանդարտությամբ, խաղաղությամբ: Այստեղ էլ՝ 1955թ. կնքեց իր մահկանացուն:

Լինելով մեր ժողովրդի ամենաազգանվեր գերդաստաններից մեկի ժառանգորդը՝ Կյուլպենկյանը պարզապես չէր կարող զերծ մնալ հայոց գործերից: Եվ դա, առաջին հերթին, արտահայտվում էր բարերարությամբ: 1906թ. Կ.Պոլսի Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցում կառուցեց իր անունը կրող վիրաբուժարան: Հինգ տարի շարունակ 500-ական օսմանական ոսկի հատկացրեց Կեսարիայի որբերին: 1920-40թթ. օժանդակեց Թուրքիայի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Հորդանանի հայկական դպրոցներին ու բուժական հաստատություններին: Նպաստեց Իրաքի ու Լիբանանի բազմաթիվ հայկական եկեղեցիների կառուցմանը: 1922թ., հորն ի հիշատակ, Լոնդոնում կառուցեց Ս. Սարգիս եկեղեցին: 1929թ. Երուսաղեմի հայոց պատրիարքարանի տարածքում կառուցեց Դուրյան մատենադարանը, նորոգեց Ս. Գերեզմանի եկեղեցին և պատրիարքարանին նվիրեց իր նշանավոր հավաքածուի հայկական հին արվեստի նմուշների մեծ մասը:



Այստեղ հարկ է մի էական ճշտում կատարել. բանն այն է, որ բարերարությունների այս թվարկումը խիստ մոտավոր է ու թերի: Մենք, թերևս, երբեք չենք իմանա լիակատար ցանկը, որովհետև Կյուլպենկյանը, շատ հաճախ, գաղտնաբար էր բարերարություն գործում՝ ուրիշների անվամբ: Այդպես էր վարվում այն պարզ պատճառով, որ ազգային բարերարությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող էր վնասել նրա բիզնեսին, կարող էր դուր չգալ աշխարհատեր նրա գործընկերներին:

Սակայն Կյուլպենկյանի «հայկական կենսագրության» մեջ տեղի ունեցավ մի իրադարձություն, որը հետագայում լրջագույն հետևանքներ ունեցավ թե՛ իր և թե՛, ինչու ոչ, մեր ժողովրդի համար: 1930թ.՝ Պողոս Նուբար փաշայի մահից հետո, նա ընտրվեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) նախագահ, սակայն այդ կառույցը ղեկավարեց ընդամենը 2 տարի…

Ինչո՞ւ, ի՞նչն էր պատճառը:

Հունահայ 30 հազար գաղթականներ ծայրաստիճան անմխիթար վիճակում էին. ըստ հունական պաշտոնական տվյալների՝ նրանց 30 տոկոսը գործազուրկ էր, անոթի և անօթևան: Ձգտելով սովամահությունից փրկել տարաբախտներին՝ Կյուլպենկյանը գաղափար է հղանում նրանց վերաբնակեցնել Սիրիայում և աշխատանք տրամադրել Մոսուլից մինչև Տրիպոլի ու Հայֆա ծգվող նավթային խողովակաշարի շինարարությունում: Մանդատատեր, Ֆրանսիայի գերագույն կոմիսար Պոնսոն, հարգելով ՀԲԸՄ-ի նախագահի խնդրանքը, թույլատրում է, և կառուցվում է յոթ գյուղակ, որտեղ հազիվ 2-2,5 հազար գաղթական կտեղավորվեր: Եվ ի՞նչ…

Թուրքիան՝ ԽՍՀՄ-ի այն ժամանակների բարեկամը, աշխարհով մեկ վայնասուն է բարձրացնում՝ օգտագործելով թե՛ պետական-դիվանագիտական, թե՛ քարոզչական լծակներ, և թե՛ հատուկ ծառայություններին: Կյուլպենկյանը մեղադրվում է այն բանում, թե, իբր, սահմանի մոտ ստեղծում է «Հայկական օջախ» հարմար պահին Թուրքիա ներխուժում իրականացնելու համար: Այս սադրանքը կլիներ ծիծաղելի, եթե չունենար ողբերգական հետևանքներ:

Թուրքիայի ձեռքից փոխանցումավազքի փայտիկը վերցնում է… ՀԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը: 1931թ. հոկտեմբերի 14-ին Հայկոմկուսի կուլտպրոպբաժինների վարիչների խորհրդակցությունում նա հանդես է գալիս «Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները» զեկուցմամբ, որտեղ Սիրիայի «Հայկական օջախի» ստեղծումը որակում է որպես իմպերիալիստական ինտերվենցիայի պատվար ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի դեմ, իսկ Կյուլպենկյանին անվանում՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի սպասավոր: Այս ելույթը տպագրվեց «Սովետական Հայաստան» թերթում, իսկ դրանից հետո համայնավար կուսակցական ենթագրչակները շարունակեցին ՀԲԸՄ-ի նախագահի անվանարկումը:

Կյուլպենկյանը խիստ վիրավորվեց, վրդովվեց: Սփյուռքից Հայաստան հղվեցին բազմաթիվ դիմումներ, հորդորներ, որոնք մնացին անպատասխան: Խանջյանը դիրքորոշումը չփոխեց (թերևս, չէր էլ կարող): Խռովված Կյուլպենկյանը որոշեց թողնել ՀԲԸՄ-ի նախագահի պաշտոնը և 1932թ. ապրիլին հրաժարական տվեց: Այսպես՝ հայի ձեռքով, թուրքի մատուցմամբ ու հրահրմամբ, մեր ազգային շահերի դեմ գործվեց ժամանակի ամենածանր հանցանքներից մեկը:

Դժբախտաբար, դա ունեցավ իր շարունակությունը, Կյուլպենկյանը 1953թ. իր ողջ ունեցվածքը և նավթատոկոսները կտակեց Պորտուգալիային: Պիրենեյան թերակղզու այդ լռիկ երկիրը տեր կանգնեց կտակին՝ 1956թ. ընդունելով կառավարական հատուկ որոշում, և ստեղծվեց «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը: Այն այսօր աշխարհի հարանման վեց լավագույն կառույցներից մեկն է, որից օգտվում են ավելի քան 70 երկրներ: Բայց եթե 1956-69թթ. հիմնադրամը զանազան նպատակներով ծախսեց 103 մլն 406 հազար դոլար, ապա 1956-71թթ. հայկական բոլոր ծրագրերի վրա՝ 17 մլն 406 հազար:

***

Մեզ մնում է պատասխանել մի կարևորագույն հարցի՝ ինչպե՞ս Կյուլպենկյանը ոտք դրեց նավթարդյունաբերություն, ինչի՞ց, ավելի ճիշտ՝ ումի՞ց սկսվեց նրա ուղին: Միանգամից ասենք, որ դա կատարվել է մեծն Ալեքսանդր Մանթաշյանցի շնորհիվ: Նավթարդյունաբերության արքան Գյուլբենկյանի հետ ծանոթացել է Ման-

չեստրում ու երիտասարդի ուշադրությունը հրավիրել նավթաբիզնեսի վրա: Դրանից հետո, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու և գործն ուսումնասիրելու համար 21-ամյա Գալուստը մեկնել է Կովկաս՝ Բաքու, և մեկ տարի եղել Մանթաշյանցի հովանավորության ներքո: Այդ մեկամյա փորձառությունից հետո Կյուլպենկյանը Բաքվի նավթարդյունաբերության վերաբերյալ գրում է ֆրանսերեն մի գրքույկ և մի շարք հոդվածներ ֆրանսիական թերթերից մեկի համար: Դրանք մասնագիտական այնպիսի խորը վերլուծություններ էին պարունակում, որ օսմանյան Թուրքիայի ընդերքի նախարարն իր երկրի քաղաքացուն առաջարկում է ուսումնասիրել և տեղեկագիր պատրաստել կայսրության ու հատկապես Միջագետքի նավթի պաշարների վերաբերյալ, ինչն էլ Կյուլպենկյանը փայլուն կերպով է կատարում :

Պարոն 5%-ը

Սակայն ինչո՞ւ Մանթաշյանցը որոշեց հենց Կյուլպենկյանին հրավիրել իր մոտ, «տիրություն» անել:

Կեսարիայի Թալաս գյուղաքաղաքի հիմնադիրներից է եղել նաև «Եսայան» նշանավոր վաճառականական գերդաստանը: Եսայաններն ու Կյուլպենկյանները դարեր շարունակ միմյանց հետ եղել են շարունակական խնամիական հարաբերությունների մեջ: Իսկ Ալ. Մանթաշյանցն ամբողջ կյանքում մտերիմ հարաբերություններ էր պահպանում Մանչեստրում ու Լոնդոնում գտնվող Եսայան չորս եղբայրների հետ և հենց նրանց խնդրանքով հովանավորեց Գալուստին:

Իսկ Կյուլպենկյանը հետագայում հիշո՞ւմ էր իր բարերարին, վարձահատույց եղա՞վ: Այո՛, հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ նա անձամբ մասնակցել է Մանթաշյանցի նավթաբիզնեսի բոլոր հարցերին:

***

Ըստ իս, Աստծո կամոք, Գալուստ Կյուլպենկյանին ներգրավելով նավթարդյունաբերության մեջ՝ Ալեքսանդր Մանթաշյանցը նրան հանձնեց մի բան, որն ավելին էր, քան բիզնեսը: Փոխանցեց ազգ պահելու պարտականությունն ու պատիվը:

Մանթաշյանցի հոգու, մտքի, խղճի խորհրդանիշը «Գառն Աստուծոյ» պատկերն էր, որ փողփողում էր նրա նավերի դրոշներին և փակցված էր աշխարհի բազմաթիվ երկրներում գտնվող նրա գրասենյակներին, նավթամբարներին ու պահեստարաններին: Կյուլպենկյանն իր տաղանդի, խելքի ու ձեռներեցության շնորհիվ մի ամբողջ դարաշրջան բացեց միջազգային նավթարդյունաբերությունում և համաշխարհային բիզնեսի պատմության մեջ արժանացավ «Պարոն 5%» տիտղոսի:

Ամենայն Հայոց հայրապետի նստավայրը՝ Վեհարանի շենքը, 250 հազար ռուբլով կառուցել է լուսահոգի Ալեքսանդր Մանթաշյանցը: Ս. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը նորոգել է երջանկահիշատակ Գալուստ Կյուլպենկյանը՝ տրամադրելով 400 հազար դոլար: Անցեք վեհարանից Մայր տաճար, և մշտապես ձեր աչքի առաջ կլինի զանգակատունը: Վեհարանն ու զանգակատունը նայում են միմյանց: Միմյանց են նայում «Գառն Աստուծոյ»-ն ու «Պարոն 5%…»-ը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱՎԱՅԱՆ

«ԷՐԳԻՐ» ՄԻԱՎՈՐՈՒՄ

Սույն թվի մայիսի 14-ին «Մոսկվա» կինոթատրոնի դահլիճում տեղի ունեցավ «էրգիր» հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը: Բացման խոսքում նշվեց. «Արդեն 90 տարի է մենք ապրում ենք մեր հոգու հայրենիքում: Մեր լեռները մեր հոգու մեջ են, մեր տունը՝ մեր հոգու մեջ, Հայաստան աշխարհն անսահման է մեր հոգու մեջ: Անգամ մեր հոգու մեջ պահելու համար հրաշքով փրկված մեր պապերն ու հայրերը պայքարել են, դատապարտվել, աքսորվել, սպանվել... և այդպես շարունակ՝ մինչև Հայաստանի Երրորդ Հանրապետության ստեղծումը: Բայց սա չի մխիթարում մեծ հայրենիքի կորուստը: Եվ ընդհանրապես, հայրենիքը չի կարելի կորցնել, իսկ եթե պարտադրված (ա՛յո պարտադրված, որովհետև ցեղասպանությունը մեր ճակատագիրը չէր) ես կորցրել՝ ամեն ինչ պետք է անես հայրենիքը հետ բերելու համար:

Վերջին 10-15 տարում՝ մեր երկրում, ստեղծվել են մի շարք հայրենակցական միություններ: Լոկալ հայրենասիրությունը թեև շատ կարևոր է, բայց ոչ բավարար, իսկ առանձին դեպքերում էլ չի նպաստում հայության հատվածների միավորմանը:

Այս կազմակերպությունը ոչ թե պետք է բացառի հայրենակցական միությունները, գործի նրանցից մեկուսացած, այլ ընդհակառակը՝ նրանց հետ համերաշխ աշխատի, հարկ եղած դեպքում՝ համագործակցված: Խնդիրը լուծելու համար կպահանջվի, մեծածավալ աշխատանք՝ ոչ թե խոսքով, այլ գործով: Մենք պարտավոր ենք թոթափել գաղթականի հոգեբանությունը, չէ՞ որ էրգրի կանչը մեզ կստիպի տևական ու տոկուն, լարված կազմակերպչական ու քարոզչական աշխատանք ծավալել»:

Կազմակերպության ծրագրային դրույթներից հետևում է՝

-«էրգիր»-ը հանդես է գալիս հայ ժողովրդի տարածքային պահանջատիրությամբ և պայքարում է Արևմտյան Հայաստանի ազատագրման ու Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորման համար:

-«էրգիր»-ը առաջնորդվում է «Մեկ ազգ, մեկ պետություն» նշանաբանով՝ գործունեության հաջողության գրավականն ու զորեղ կռվանը համարելով Հայրենի պետությունը և, ըստ ամենայնի, նպաստելով Հայաստանի Հանրապետության կայունացմանն ու հզորացմանը:

Համագումարի պատվավոր հյուրերի շարքում էր «Ուխտ Արարատի» հասարակական կազմակերպությունը:

ՀԱՂԹԱՆԱԿԱԾ

ԵՐԵՔ

ՄԵՐՈՒՆԴ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈ՛ՒՆ

ԵՍ ՈՒՋՈՒՄ,

ՄԻ՛ՇՏ

ՊԱՏՐԱՍՏ ԵՂԻՐ

ՊԱՏԵՐԱԶՄԻ

ՄԻԱՆՈՒԹՅԱՆ

ՇՈՒՐՋՊԱՐ